

4330

Fragt M. ghost

83

2-27



ՀԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՅՆԵ

HEINRICH HEINE.

83X1  
2627

# ԵՐԳԵՄԻ ԳԻՐՔԸ

Bach der Lieder

(Հեղինակի պատկերով և կենսագրական ակնարկով:)

Ֆ. Ֆեն

Կոմա Պեսոն

Пер. съ нѣм. Я. Г. Іерв-Георгіана.

Գերմաներենից բարգմանեց

Հակոբ Տեր-Պետրոսյան.

ՅԱԿՈՒ, ՏԱՄՈՒՆ „ՏՐՈՒԴԻ“  
1907 թ.  
Եակу, типогր. „ՏՐՈՒԴԻ“.

28 JUN 2005

02 NOV 2009

ՀԱՅՆՐԻԽ ՀԱՅՆԵ

H. HEINE

83  
3-27

us

# ԵՐԳԵՐԻ ԳԻՐՔԸ

## Bach der Lieder

(Հեղինակի պատկերով և կենսագրական ակնաբերով:)

F. Feine

Книга Песенъ

Пер. съ иѣм. Я. І. Іеръ-Георгяна.

**ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ**

обозначенного ~~здесь~~ срока

5045

## ԳԵՐԱՄԱՆԻՐԻ ՀԻՋ ՊՈՐՊՄԱՆԵԳ

## Յակոբ Տեր-Պետրոսիան.



յաւելուածք, որ կառավարութիւնն անմիջապէս արգելում  
է եւ նա սփառուած է լինում վերադառնայ Համբուրգ.  
կազդուրուելու համար երեսն-երեսն գնում է Հելգո-  
րանդ կղզին (Հիւսիսային ծովում) ուր նա գրում է  
»Հիւսիսային ծով«-ի երկրորդ ցիկլը:

9

Փարիզում առաջին ամիսներն անց է կացնում  
շատ ուրախ, անդադար այցելելով բարոններ, հասա-  
ւոս զուական գուարնուրեան տեղեր եւ մանաւանդ զե-  
րակական գուարնուրեան տեղեր եւ մանաւանդ զե-  
րակական գուարնուրեան տեղերին. աշխայժ, ուրախ եւ սրաբաց  
թրանսիացիների մեջ նա իրան շատ լաւ է զգում.  
(„ինչպես ձուկը ջրում“—կամ երեք ծովում ձկան հարց-  
ներին, թէ ինչպես է զգում իրան, կը պատախաններ—  
„ինչպես Հայուն Փարիզում“—կատակում էր Հայուն).  
իսկ շնորհիլ հօրեղբօր յանձնարարականի՝ նրա առաջ  
բացւում են Ռուսչիլդի սալոնների դռներն, որտեղ նա  
ծանօթանում է Ռոսսինիի, Բերլինզի, Շովենի, Ալ. Հում-  
բոլլի, Լիսի, Սկն-Միլնիսների հետ եւ այլն. ման-

բամասն ծանօթանում է բաղաբական կուսակցութիւնների եւ գործիչների նետ եւ ուղարկում մի շարք սամփս եւ հետաքրքր բղբակցութիւններ բարոն Կոստի „Morgenblatt“ թերթին, մինչեւ որ նա առաջարկութիւն է ստանում տարածուած, ազատամիտ „Allgemeine Zeitung“ թերթից բաղաբական բղբակցութիւններ գրելու Փարիզից, առաջարկութիւն՝ որ խիս ոյում է նրա ինքնապուրիւնը, զգալով իրան կոչուած նպասելու երկու երկների եղբայրական միութեան եւ փոխադարձ բնբունան զործին: Կենդանի եւ հրատապ հետաքրքրութիւն էր տարմում այդ բղբակցութիւններն, որոնց միջոցով աննկատելի կերպով պատրաստում էր յեղափոխական ողին Գերմանիայում: Կառավարութիւնը չեր կարող տանել այդ սուր սլաքներն եւ ամեն միջոցի դիմեց ընդհատելու բղբակցութիւնների տպագրութիւնը. Սակայն չը վիճառուեց Հայնեն. բոլոր բղբակցութիւններն—նաեւ կրեատածները—մի կրակոս յառաջարանով լոյս ընծայեց առանձին գրելով „Թրանսիական զործեր“ վերնագրով եւ վերջնականապէս անհնարին դարձրեց իր վերադարձը հայրենիք: Այնուհետև նա սկսեց ծանօթայնել Թրանսիացիներին գերմանական ողու նետ „Բունանիխական էկոլա“, „de l' Allemagne“—որը մի տեսակ պատասխան է Մ-ու de Staël-ի նոյն անուն գրքի, —եւ այլ գրուածներով. գրում էր Թրանսերեն. նախկին գերմաներէն գրածներից տասերն էլ բարգմանում է ինքը Թրանսերեն:

Յուլիսեան յեղափոխութեան ազդեցութեան տակ, իբրև նետեւանք կարոլիքական կոյր դոգմատիզմի նեխող ազդեցութեան եւ խայտառակ, մտի ամեն մի լուսաւոր արտայայտութիւն ննջող բեալկիայի, գերմանիայում ծոգում է եւ արագ անում „Երիտասարդ Գերմանիա“ կոչուած գրականական կուսակցութիւնը, որ կազմել էին զիխաւորապես Դուցկով („Ուրիշ Ակոսա“ դրամայի հեղինակը) Վինքարգ („Էստելիքական Արտ-

ւանիներ“-ի հեղինակը, որից կուսակցութիւնը ստացել է իր անունը). Դ. Շրաբու, Լաուրի եւ այլն եւ որի ամենանաւասան շեֆերն էին Հայենն եւ Յօրնեան: Նրանց խաղաքական խդեալն էր Ֆրանսիական յուլիսան մասնաւիխան: Գրուսական կառավարութիւնն եւ ապա Բունքեսազգ դիմեցին ամենակտրուկ միջոցների այդ շարժումն արմատախիլ անելու համար. արգելեցին նրանց ոչ միայն ներկայ գրուածներն, այլ եւ ապագայ գրելիքները. եւ այդ՝ ընորհի պատմաբան եւ ըսլինիս Վ. Մենցելի՛, Գերմանայի Սուվորովին, իր գծուծ եւ լիտի յարձակումներով եւ ոսիկանական „դանու“ներով նախ նոյն խսկ Գեօրգի եւ ապա՝ „Երիտասարդ Գերմանացիների“ վրայ, մեղադրելով նրանց անբարոյականացնող, հակառակետական ձգումների եւ արեկզմի մեջ: Մինչեւ անգամ Գրուսական կառավարութիւնը սպառնաց „Revue de deux mondes“-ի խմբագրութեան, որ կ'արգելի ամսագրի մուտքը Գերմանիա, երե կը շարունակի ապել Հայենի քանամական յօդուածները: Հայենն բաւում է հասարակական կեանից, մօքի յարաբերութեան մեջ մնալով միայն յայտնի գրողների եւ գիտականների հետ:

Այդ ժամանակ նա ծանօթանում է եւ մտեմանում  
եւ ապա ամռանանում մի հարուս մարդու ապօրինի  
դսեր հետ, որը մինչեւ 15 տարին զիղում մեծացած,  
համարեա անգրագետ, քերեւոլիկ, բայց զեղեցիկ, բա-  
րեսիր եւ ուրախ մի կին եր, յայտնի՝ Մատիլդա անո-  
նով. Հը նայած իրանց մասուր եւ հոգեկան պահանջ-  
ների ահազդին սարբերութեան, նրանց ամռանաւրեան  
սկզբի տարիները կարելի եր համարել խաղաղ եւ ան-  
վրդով, երեւ իրանց անհաճի տևակութեան շնորհի  
առաջ եկած նիւրական նեղ գրութիւնը չը լիներ, որը  
աւելի սասկացաւ, երբ նա կուտեց հօտեղքոր հետ եւ  
զրկուեց նրա տարեկան չորս հազար ֆրանկ օգնութի-  
նից. Բայց վերջը, պոհի ինքնասթրութեան համար զա-

նազան անվայիլ միջոցներով, յաջողեցրեց այդ օգնութիւնը նորից ստանալու հարցը. նոյն ժամանակ ընդունեց նա Ֆրանսիական կառավարութիւնից տարեկան 4.800 ֆր. օճանդակութիւն, որը առիր տուեց իր հակառակորդներին նախատելու նրան կառառուած լինելու եւ մտքի փոփոխականութեան համար. Այդ ժամանակ սաստկացաւ նրա աշխի հիւանդութիւնը եւ երեւացին ողնաշարի սոսկալի հիւանդութեան առաջին նեանները:

Այդ գրգռուած դրութեան մէջ է գրել իր „Աստ Տրոլ“ եւ „Գերմանիա—մի ձմեռալին նելեար“ պոկեներն եւ „Նոր ոտանաւորներ“ ժողովածուն, որոնց մէջ նա դիւական երիջով բափում է իր ամբողջ մաղձն ու դառնացած հոգին իր ժամանակակիցների վրայ: Հրաման է տրում ձերքակալելու նրան, երե փորձէր հայրենիք վերադառնալ, իսկ գրածներն արգելում են աւելի խառնութեամբ: Վրայ է հասնում եւ մի ուրիշ ծանր հարուած. մեռնում հօրեղբայրն եւ հակառակ իր ոսկէ յոյսերի կտակում է պոկենին միայն 8 հազար ֆրանկ. իսկ ժառանգը մերժում է նոյն իսկ սովորական օժանդակութիւնը: Այս բոլոր ընտանեկան, նիւքական վրդով-մունքները մասող ազդեցութիւն են անում նրա ՚ի բնէ ջղային, հիւանդոս եւ բայխայուած օրգանիզմի վրայ. տեսողութիւնը համարեա արդէն հանգչում է. աջ ձեռքն ու ոտքը անզգայ են դառնում. բժշկութիւնը անյաջող: Յաւերը սաստկանում են, բայց նոյն իսկ անտանելի Ֆիզիական ցաւերի մէջ նա իր անսպառ իմորով ափսոսում է որ „այլեւս չի կարող բարձրանալ հրաւալի լեռնային գագարներն եւ այլ եւս չի կարող համբուրել հրաւալի կանացի ըրունները“. 1848 թ. Մայիս ամսին, վերջին անգամ դուրս է զալիս նա զբունելու եւ ըստ սովորութեան այցելում է Լուվրը, ուր նա երկա՛ր զմայլում է Վենետիկի արձանով, որին նա նուիրել էր իր կեաննեն եւ նոզին, զմայլում է եւ վերջը սկսում դառն հեկեկալ. „իսկ

մարմարի դիցուհին նայում էր ինձ հեղեաբար ժըպտով“—ինչպէս որ նկարագրել էր ինքը Հայնեն, իր „Ֆլորենցիայի գիւերներում“: Այնտեղից կիսակենդան բերում են տուն եւ այն օրուանից մինչեւ իր մահը այլ եւս չի վերկենում անկողնից: Նա իր ցաւերը գերազանց է համարում ինկվիզիցիաի տանջանքներից. իրան համարում է „վետի եղծուած պատկեր“. ողնաշարը ծուռում է, ոտերը բուլանում եւ իր ցաւերը մի փոքր մեղմացնելու համար ստիպուած են լինում ամեն օր օպիում տալ նրան. եւ այդ զարհութելի դրութիւնը տեսում է տարիներ... սակայն մտքի բարմութիւնն եւ ուրախ իմօրը երբէք չեն բողնում նրան. որքան որ նրա մարմինն աւելի պինդ էր մեխուս մահնին իր հիւանդութեան շնորհիւ, այնքան աւելի բարձր, աւելի ազատ եւ ըլացնող պոյտներով ինձ նախուս նրա միտքն ու նոզին: Նա գրում է շարունակ. եւ մինչդեռ մի կողմից բայխայում եւ խորտակում էր իր մարմինը, նա գրում էր իր վերջին կախարդիչ, վետով լի երգերը — „Ռումանցերո“, „Լազար“ եւ այլն, երգեր, որ նա անուանում էր „կենդանի բաղուածի հառաջներ, որ հնչում են գերեզմանից“: (Թողել է եւ „Յիւողութիւններ“, որ իր ազգականներն ոչնչացրել են):

Հիւանդութեան ժամանակ նրան այցելում էին իր բարեկամներից շատերը. նաեւ շատ տիկիններ եւ մանաւանդ երկաւ ինձ ծանօթ կանայք, որոնց հետ զրոյց անելով եւ կատակելով նա դեռ հանոյք էր զգում, չը նայած իր մօսալու վախճանին: „Ես մտադիր եմ զանգատուելու անասուններին հովանաւորող ընկերութեան, որ երկինքն այսքան տանջում է ինձ“—մահամերձ կատակում էր նա. եր բիարցնում էին, թէ հաւասուե՞լ է արդէն երկնիքն հետ, պատասխանում էր.— „Ո՛նոզ ելի՞... Dieu me pardonnera, c'est son métier...“ 1856 թ. Փետրուարին դրութիւնը դառնում է յուսահատ. սկսում է աւելի յանախ եւ աւելի երկար ուշարափուել. ցնցում

ներն աւելի սոստկանում են. ամսի 16-ին նահից յետոյ նա իր նուրբ, չորացած շրբունքներով, որոնց վրայ սովորյան դեռ սոլում էին իւմօրի քունաւոր օձերն եւ պատրաստում նոր խայրոցներ հասցնելու իր ոստիներին, նա կանչում է իր վերջին խօսերը—„քո՛ւղը եւ մատի՛ս“—սակայն մատիտն ընկնում է ձեռքից եւ սկրսում է սոսկալի հոգեւարք... 17-ի լուսադիմին սիրոյ եւ վեսի դժբախս երգիչը լուսում է ընդ միւս...

Մինչեւ 1900 թ. երա գերեզմանի վրայ հասարակ տար էր դրած, երբ Աւագրիալի, նոյնպէս դժբախս քազունի, էլիզաբէրը, Հայնի ջերմ պատողը, մի գեղեցիկ արձան կանգնեցրեց երա ժիրմի վրայ. իւր կարգադրութեամբ արձանը միւս զարդարւում է քարմ ծաղիկներով, այն ծաղիկներով, որ այնպէս հրաշալի կերպով երգել է նա: Բացի այդ, Կորֆու կղզու վրայ, էլիզաբէրի հոլակապ „Ամիլեյօն“ պալատի պարտիզում, կանգնած է մի սիրուն մատուռ Հայնի արձանով \*): Իսկ „պատրիոտ“ գերմանացիք, նոյն իսկ այժմ, կարեւոր չեն համարում արձան կանգնեցնելու իրանց հնարական պոեզիաի քազ ու պարձանեն Հայնին \*\*)—ինչպէս անգլիացիք Բայրընին—այն ինչ ամբողջ Գերմանիայում եւ ամբողջ աշխարհում Հայնի երգերը հնչում են—Շումանի, Շուբերտի, Մենդելսոնի դիւրիչ մելոդիաներով...


#### Յ. Տէր-Գևորգեան.



Երևանի Հայոց

\*) Քանի մի օր առաջ գերմանկան թերթերը հաղորդեցին, որ „Արիլեյօն“ պալատը ձեռք է բերել Վիլհելմ II կայսրը, որը առայժմ „ամեն ինչ թողնում է անվտանգություն“:

\*\*) Նոյն թերթերը նորերս հաղորդեցին նաև, որ Դիւստելլորդի քաղաքացին գրադարանում մի սենեակ նուիրուած է Հայնի անուան, որ և դրուած է նրա անդրին—առաջինը գերմանիայում:



## ՀԱՅՆՐԻՒ ՀԱՅՆԵ

(Կենսագրական ակնաբեկ\*)

Ա.

Հայնրիխ Հայնէ, դքքախս եւ յուսահատ սիրոյ այդ անհնան եւ ամենաանկեղծ երգիչը, ծնուել է Գելցեմբերի 13-ին 1797 թ. գերմանական Գիւսելլորթ քաղաքում: Նա պատկանում էր այն հայածուած ցեղին, որն ալճան մեծ եւ հոչակառոր մարդիկ է տուել թէ զիտուրեան եւ թէ գեղարուեսին—նա նրեայ էր, մի աղքատ ընտանիքի զաւակ: Հայրը մանր վաճառական էր. ուրախ, գրուստը եւ կեանք սիրող մի մարդ, որ իր որդու կրութեան վրայ առանձին ուշադրութիւն չէր դարձնում. դրա հակառակ, մայրը մի վերին ասինանի զարգացած կին էր, մեծացած 18-րդ դարի ազատամիտ աւանդութիւններով եւ Ժ. Ժ. Ռուսօփ երկրպագուն, բայց առանց հիմնաւոր սկզբունքների եւ այդ պատճառով նա իւր Հայրի (Հայնէի խևական անունը) կրութիւնը յարմարեցնում էր ժամանակակից ուշադրութիւն գրառող, ձեռնու պահանջներին—մեկ մտադրուելով նրան զինուրական դարձնել, մեկ՝ վաճառական, մեկ՝ փաստաբան, առանց 'ի նկատի ունենալու իւր որդու անհնատական ընդունակութիւններն եւ նրա վաղաժամ ու պայծառ արտայայտուած

\*) Իրբու ազրիւր ծառալել են—Prof. Dr. E. Elster, „H. Heines Leben und Werke“. 2. G. Brandes. „Das junge Deutschland“, П. Вейнбергъ, „Жизнь Генриха Гейне“. և այլն:

սեր դեպի բանասեղծութիւնը, որի զարգացման վրայ ընդհանրապէս ծնողներն ունեցել են բացասական ազդեցութիւն: Դրական մեծ ազդեցութիւն է ունեցել փոքրիկ Հարրի վրայ նրա մօռելբայրը, Սիմոն Գելդերն, որ շարունակ գրոյցներ էր անում վերջինիս հետ զանազան հարցերի մասին եւ որի գրադարանից օգտում էր նա. այդ գրադարանի ընորհի է ծանօթացել Հայնեն Սերվանտսի „Դոն-Ռիչետի“ եւ Սիլիմի „Գուլլիվերի հանապարհորդութեան“ հետ, որոնք անազին ազդեցութիւն են ունեցել մանկան վառ երեւակայութեան վրայ. ազգու է այն համեմատութիւնն, որ նա անում է Գուլլիվերի եւ Նապոլեոնի մէջ. — ինչպէս որ Գուլլիվերի առաջ դողում էին բոլոր լիիխուտները, այնպէս էլ Նապոլեոնի առաջ դողում էր ամբողջ Եւրոպան: Նա վաղ է զարդում նրա սրտում եւ սերը եւ ահա նրա ռոմանիֆական հոգին իւր համար սեռունդ է գտնում նախ՝ ընթեցանութեան եւ ապա՝ նոր, մանկական ծլող սիրոյ մէջ: Սակայն միւս կողմից արդէն նրա սուր եւ նետախուզող միտքը պաշարուում է կասկածով, ներքին երկարակութեամբ, մի խօսքով „սիեզերական վեսի“ այն բոլոր ասրերով, որոնք ակամայ յիշեցնում են արդէն Բայրընին եւ որոնք այնքան բովիչ նրապոյր են տախի նրա երգերին:

Սկզբնական վարժարանից յետոյ, 12 Տ. հասակում նա մտնում է Դիւսէլբորթի լաւան, ուր տեսուչ էր մի կարոլիկ ազատամիտ հոգեւորական, որը աւանդում էր փիլիսոփայութիւն եւ ծանօթացնում էր յունական նոյն խոկ մատերիալիս եւ սկեպտիկ փիլիսոփաների հետ: Այդ դասերի ազդեցութեան տակ զարգանում է Հայնեն հարցասեր, մանրակրկիս եւ կասկածող ողին. աւելորդ է յիշել, որ 18-րդ դարի բացինայիզմի եւ նրա ծնունդ Ֆրանսիական մեծ յեղափոխութեան վեհ զարգարեները սաւառնում էին ամբողջ Եւրոպայում եւ օդի հետ ծծում մարդկանց սրտի եւ ուղեղի մէջ: Փիլիսոփայական սկեպտիզմի զարգանալուն նպաստում էր եւ այն ժամանակ

հրկաների մէջ տիրող կրօնական անտարքերութիւնը:

Հանգամանեներն այնպէս էին բարդում, որ նպաստում էին Հայնեն վաղաժամ զարգացման նաև հաղափական հարցերում: Դեռ մանուկ էր նա, որ գերմանիան ամբողջովին ընկերուած, սիլվուած էր ենթարկուել Նապոլեոնի միանեծեան իշխանութեան: Դիւսէլբորթն էլ մինչեւ 1801 թ. յեղափոխութեան օրեւերի ձեռքին էր: Հայնեն այդ ժամանակ 12—16 տարեկան էր, ամենավառվուն եւ զգայուն հասակում էր այդ շշանեն ամենաբարեւար ազդեցութիւն է բողում նրա կեանեում: Ֆրանսիական դէմոկրատ կառավարութիւնն ամեն մի նուանած երկրի համար ուղղակի երջանկութիւն էր բերում. խօսի ազատութիւն, սրկութեան վերացումն, իրաւունք՝ ամուսնական կազ հաստատելու տարբեր դասակարգերին պատկանող տնձանց մէջ, դասավարութեան վերանորոգումն ըստ Նապոլեոնի հոչակաւոր կողեւին էր վերջապէս հրեաների կատարեալ հաղախացիական հաւասարութիւն—ահա նրա պարզեւած բարիեները, որոնք վաղ հասակից ընտելացրին Հայնենին ազատութեան հետ եւ որի ազգու տառենալլ պէտք է դառնար նա Գերմանիայում: Բայց ընդհանրապէս Երիտասարդ հասակում Հայնենի սացած սպառութիւնները նպաստուր չին նրա բանասեղծական համեմարի զարգացման եւ բարզաւանական տեսակետից: Նրա ինքնուրոյն, եւ անսանձ հեղուղ հոգին չեր հաւատում ո՞չ իրան շշապատողների եւ ո՞չ էլ հանգամանեների հետ, ուստի առանձնանում էր բոլորից, դառնում էր լուսկեաց, իսկական զգացմունեները բաղարկող, բայց միշտ բարեհոգի եւ շափազանց զգանական—բատկութիւններ, որոնք յիշեցնում են „սիեզերական վեսի“ երկու ուրիշ երգիներին, — Բայրընին եւ Լեռնուովին:

Եր հայրենական շենք Հոենուսի նրաշալի ափերին վաղ հասակից ծաղկում է Հայնեն սրտում սեր. Տասնեւինինց տարեկան հասակում նա սիրահարում է

դահնի դուստր Ժողեթակ վրայ եւ այն հանգամանքը, որ նա դահնի դուստր էր, առիր է տալիս նրան գրելու իր մոայլ „Անուշներ“-ը: Բայց այս սերը ոչ այլ ինչ էր, երբ ոչ հեռաւոր փայլակ վրայ հասնող մրցի:

1818 թ. հայրը տանում է Հայնեին Թրանկթուրս, որպես զի վաճառականուրեան նույրի նրան եւ տեղաւորում է մի բանկում. բայց մի բանի շաբարից յետոյ յայտնում են, որ նա վաճառականուրեան ո՛չ մի ժողովի շունի. նա իր ժամանակն անցնում էր այս եւ այն կողմ թափառելով եւ, ՚ի միջի այլոց, մօս ծանօթանում է իր ցեղակիցների դրուքեանը եւ բարեիրն, նրանց վաշխառուրեանը, մանրաժան խարդախուրեանը եւ կրօնական ամենաբերուրեանը, յատկարիմներ, որ նա շարունակ ամենադառն ծաղրի էր ենթակում. միաժամանակ նա տեսնում էր թէ ինչպիս ոտնակոյն էին անուում իր ցեղակիցների մարդկային ամենատարրական իրաւունքներն եւ նրա սիրը լցուում էր անասելի վետով եւ իր յետագայ գրուածքներում նա նկարագրում էր եւ ողբում այդ, մերք ՚ի դեմս խնկական հրեաների եւ մերք ՚ի դեմս խպանական մաւրերի: Մի բանի ժամանակից յետոյ Հայնեն վերադառնում է տուն եւ ծնողների կողմից գտնելով սառն ընդունելուրին, նորից գնուում է դեպի Համբուրգ, իր հարուս հօրեղբայր Սալոմոնի մօս, նրա գրասենեակում պարապելու. այնուղ Հայնեն նոյն իսկ սեփական գործ է սկսում, որ սակայն շուտով էլ վերջացնում է: Ահա այդտեղից է սկսում սիրոյ մրցին եւ Հայնեի տաճանեների աղբիւրը. նա իր երթասարդ հոգու ամբողջ զօրուրեամբ սիրահարուում է իր հօրեղբօր աղջկա՝ սիրուն, բայց անսիրս Ամալիայի վրայ. այդ դրձբախս սերը զարեցնում է բանասեղծի հոգին եւ նա նույրում է իր սիրածին ամենաենոյց եւ ամենամեռուր, նաև ամենահիճնական եւ ամենայուսահաս երգերը: Համոզուելով որ Հարրին ընդունակ չէ վաճառական դառնալու, Սալոմոն Հայնեն եւ մայրը որոշում են

ուղարկել նրան համալսարան, վաստաբանութիւն սովորելու. նա զնում է Բոնեի համալսարանը, որ յայտնի էր իր իրաւագէս պրոֆեսորներով, որոնց վրայ սակայն առանձին ուշադրութիւն չէ դարձնում Հայնեն, իսնի որ Ա. Շլեգել աւանդում էր այնուղ գրականուրեան պատմութիւնը: Նա մտերանում է Ա. Շլեգելի նետ, որին յարգում է եւ սիրում է Հայնեն իրեւ բամանիզմի սիներից մեկի: Շլեգելն է ծանօթացնում նրան Շեխսպիրի և Բայրընի նետ եւ պարզ տեսնելով իր աշակերտի բացւող հանճարը, նա ամեն կերպ աշխատում էր նապատել և ուղիղ հանապարհի հանել նրան. կարդում էին միասին Հայնեի երգերը, նա բնինադառնում էր, թերութիւնները բացարում եւ կոկել տալիս: Սակայն վեցշեր նրանց բացարում եւ կոկել տալիս: Սակայն վեցշեր նրանց յարաքերութիւնները փոխում են եւ Հայնեն յանախ յարձակում էր նրա վրայ: Ոչինչ առընչութիւն չ'ունենալով ուսանողների նետ բացի մի բանիսից—նա ազատ ժամանակ բափառում էր ձեռները գրպանում, սպիտակ բլուզով, կամիր գլակը ծոծրակին դրած եւ թերեւ ու նեզնական մպիսը շարունակ սպիտակ դեմքի բարակ շրպունքներին եւ բափառելիս պաշար էր որոնում իր երգիծաբանական մեջի համար. թեւ երբեմն իր մտերին նետ նա շատ էր սիրում խարիսներին մասնակցել, ուր զիստաւոր դերը խաղում էին կանայք. այդ նրա մեծ եւ կորսաքեր բուլութիւնն էր:

Մի տարի չ'անցած նա փոխում է Գեօստինեկենի համալսարանը, ուր նա իր մտի համար ոչինչ նոր բան չի գտնում, բացի տեղական բնակչներից եւ ազնուատոնին ուսանողներից, որոնց տիմարութիւնն էր դաստակապութիւնն առաջ նիւր է մասակարառում նրա խմօրին: Երկար չէ մնում եւ Գեօստինեկենում. նա սիխուած է լինում մենամարտի հրաւիրել մի ուսանողի, բայց վարչութիւնն այդ իմանալով՝ արգելում է եւ կէս տարով նեռացնում են նրան համալսարանից: Այդ միջոցներին նա լուր է առնում որ իր սիրած Ամալիան ամուս-

նացել է մի հարուս մարդու հետ եւ բոլորավիճ ընկնուած, վետարեկ սրտով բողնում է Գեօսքինգեն և 1821 թ. անցնում է Բերլին, ուր սկսում է մեր բանասեղծի համար մի նոր եւ բեղմանաւոր կեան:

Բ.

Զր նայած ամբողջ Գերմանիայում եւ մասնաւորապես Բերլինում հնուող ասեձարձակ ռեակցիայի, որ կաշկանդել էր ժողովրդի մտաւոր եւ հոգեկան կեանքը դրակնիական օրէնքներով, Բերլինի համալսարանում հնչում էր այնպիսի հոչակաւոր զիտնականների ձայնը, ինչպէս օր. իրաւագէտ Հանս, սանսկրիտով Բոպպ, էստէտիկ Վոլֆ, երիտասարդ Շոպինաուեր, Նլայերմախէր եւ մանաւանդ այն ժամանակուայ փիլիսոփայական մտի միահեծան Տեղէլ: Ահա դրանց էր լուում Հայնեն եւ դրանի էին նրա մտի ուղղութիւն եւ պաշար տալիս, մանաւանդ որ դրանցից մի ժամինի հետ Հայնեն ասեձական մօտիկ յարաքերութեան մէջ էր: Բացի համալսարանից մեծ դեր էին խաղում մտաւոր կեանենում նաև մի ժամի սալոններ, ա և 18-րդ դարի, որոնց ոգեւորողները հարկա կանայք էին: Ամենաաշքի ընկնող սալոնը Տ. Հրաֆէլ Վարենհագէնի սալոնն էր. նա մի կրուած, բարոյական եւ հանճարեղ հրէյունի էր, իսկ ամուսինը գրականացէտ էր եւ աչքի ընկնող բնինադաս: Ահա նորա սալոնում էր, որ Հայնեն ընդունուեց, առանց ո՞չ ո՞ի ուշադրութիւնը գրաւելու սկիզբը. այնուղետ էին կարդացուում նրա անժիպ երգերը, որոնք ոււտով լոյս պէտ է տեսնելի եւ ամենապատուաւոր տեղ յատկացնելին Հայնենի սալոնում: Տ. Հրաֆէլ էր իր ամուսինը խիս բարեար ազդեցութիւն ունեցան Հայնենի մտի զարգացման վրայ եւ նախասեցին նրա կանճաւոր ըմբուճան Գեօրգի երկերի, որի երկրպագուներն էին իրանք: Հրաֆէլին էւ Հայնենի մօտեցնում էր նաև իրանց հրէյուն ծագումը:

Ամուսիններ Վարենհագէն զերմ կերպով խրախուսում էին Հայնենին եւ տարածում նրա երգերի արժանիքը: Եռանդուն մասնակցութիւն ուներ Հայնեն եւ Բերլինի յառաջադիմ „Հրէյական կուլտուրաի եւ զիտուրեան ընկերութեան“ մէջ, որի հիմնադիրն էր փիլիսոփայ Մենդելսոն: Բայց միւս կողմից Հայնեն առիք չէր բաց բողնում մարդաբանի կեանքը վայելելու իր մօտիկ ընկերների շրջանում. այդ խրախուսանները, այդ զգայնական չափազանցութիւններ մասում էին նրա օրգանիզմն եւ նա այժմ աւելի էր հակում դեպի յունեստութիւն եւ աւելի մարդաբան կառնում: (Մի ժամի կենսագիրներ այդ երեւոյը բացարում են սրածին կորցնելու կակծով. թիւն յայնի է, որ նա վերջեր սիրում էր Ամալիաի կրտսեր քոջը, Թերեզային):

Այդ ժամանակ էր, որ առանձին գրեով լոյս տեսան Հայնենի երգերը. (որի համար նա վարձառութիւն սաւցաւ միայն 40 արի օրինակ). ի՞նչ սպաւորութիւն եւ ի՞նչ ազդեցութիւն այն ժամանակուայ „վիաս, թմրած եւ անսարքեր“ մտերի վրայ իր աշխոյժ, կենդանի, բուռն, նոյն իսկ վայրի կրեով: Կրիտիկան միաբերան հոչակեց նոնինակին իրեւ „տիեզերեկան վետի“ նորագոյն եւ նոնինինակին իրեւ ազդու երգիչ. նոր պահանջներից շատերը սկսեցին նմանուել Հայնենին եւ մի ամիս առաջ անյայտ պատահին այժմ յայնի էր ամեն տեղ: Խրախուսուած այդ յաջողութիւնից, նա 1823 թ. լոյս համեց իր երկու ողբերգութիւնները — „Ալմանզոր“ եւ „Ռատկիթ“ եւ այդ երկուսի միները տեղաւորուած երգերի մի ժողովածու, որի համար զիւ կոչում է „Քնարական Ինսկրիմեցօ“: Երկու ողբերգութիւնների մէջ էլ Հայնեն իր անձնական վետին միացնում է այժմ արդեն նաև „հրէյական մեծ վիերը“. սակայն երկու գրուածքն էլ, լի գեղարուեսական հատուածներով եւ բնարական կուրներով — զուրկ են բեմական արժեքից: Դրա փիխարեկ մասուր լիրիզմի եւ չնաշխարհիկ ներդաշնակութեան ինչպիսի պայծառ գոհարներիցն

է կերտուած „Քնարական ինսկրիպցօն“։ ի՞նչ պարզ է ամպանոյն, բայց նաև ի՞նչ ազդու է սրաւարձ կերպով է արտայայտում նա իր սրտի „անհուն վիշտը“։ ակամայ ցանկանում ես այդ ժեսակ վիշտ ունենալ. եւ ի՞նչ անկեղծութեամբ է ողբում նա իր յուսահատ սկրի է դժբախտութիւնը—այդ չեն կարող բիբոնել ներկայ, մտի եւ խօսքի միմոս, շատ պուեներ։

Այդ միջոցներին նա գրում էր նաև արձակ, հասարակական երեսոյների մասին, իրան յատուկ խմօսով, որ պէտք է վերջը արտայայտուիր իր հանճարեղ „Ճանապարհորդական պատկերներ“—(Reisebilder) պրոզաի մէջ։ Բայց շնորհիւ իր անսպառ ծաղրող, մտրակող ողուն, որ ո՛չ ոժին չէր խնայում, ոչ իր ցեղակիցներին, ոչ օսարներին, ոչ հասարակ մանկանացուներին եւ ոչ էլ բազաւորներին, ոչ էլ վերջապէս իր սեփական անձին—նա շատ քննամիներ ձեռք բերեց, որոնք ամեն միջոց գործ էին դնում դառնացնելու Հայնէի կեամբ եւ նիւրական վնաս հասցնելու նրան, դրդելով հօրեղբայր Սալոմոնին, որ նա զրկի տարեկան օժանդակութիւնից. այս բոլորը խիստ նպաստում էին նրա ջղային նիւրանդութեան զարգանալուն եւ նա մտադրում է տեղափոխուել Փարիզ։ Բայց նախ, բժշկուելու համար զնում է Կուսինաւէն ծովափնեայ զիւլը, ուր նա սկսում է գրել իր ծովային նրաւալի երգերից մի քանիք. ապա Լիւնեբուրգով—ուր տեղափոխուել էին իր ծնողները, նա զնում է Համբուրգ հօրեղբօր նետ տեսնուելու եւ Փարիզ գնալու մասին խորհրդակցելու։ Այնուհետեւ նա իմանում է, որ իր երգերը չեն դուր եկել, նայրը չէր էլ կարդացել, իսկ հօրեղբայրը լսել անձամ չէր ուզում։ Նա տեսնում է, որ սփառուած է իրաւագիտական կրտքիւնը վերջացնել էւ այդ պատճառով զնում է զարձեալ Դհօստինգին։ Բայց իր գրգուած ջղերը մի փաք հանգացնելու համար, նա սկսում է հանապարհորդել, մեծ մասամբ ոտքով, Հարց լեռան վրայ եւ Տիւրինգիայում, որին պարտական

ենք „Ճանապարհորդական պատկերների“ ամենազողտրիկ երեսները։ Վերապարձին նա այցելում է Վայմարում մեծ „Ռիխմանկանին“, իր փառքի գենիքին հասած եւ դափնիների վրայ նահագացող Գեօրգին, բայց իմշակս երեւում է ընդունելուրիւնն այնքան էլ սիրալիր չի եղել, նանի որ փառասէր Հայնէն ոչինչ չէ ասում այդ մասին։ 1825 թ. յուլիսի 20-ին վերջապէս ստանում է նա իրաւոգիտութեան դոկտորի աստիճան, իսկ գրանից 22 առաջ կատարում է մի անհականալի եւ անբացատելի բան կանաչաղին կեսմում. նա, Հայնէն, որ անխնայ, բերանացի եւ գրաւոր, մտրակում եր նիւրական բարօնութեան համար հաւատափոխ եղած հրեաներին, առանց մի ներքին, անդիմանդրելի պատճառի եւ ակնյայնի շարժանիքի—ընդունում է երիսոնելուրիւն, (բողոքական դաւանանքը) որ սակայն ցանկացած դիւրուրիւններ չը տուց նրան կեսմում գործնական տեսակետից եւ այդ աւելի դառնացրեց նրա կեամբը. նա մեաց օսար քե նրեաների եւ քե երիսոնեաների համար։

Դոկտորութեան աստիճան ստանալուց յետոյ, նա զնում է բժշկուելու Նորդենէյ, ուր ծովի տեսաներ նորից ներենչում է նրան ոգեւորութեան վսեմ բոխեներ. Բայց շուտով վերադառնում է Համբուրգ, իր մասնագիրաց ոչ քաղաքուելու, այլ տանջուելու։ Զը նայած ներող հանգամանեներին նա 1826 թ. սպազրում է իր „Ճանապարհորդական պատկերների“ առաջին հատոր եւ մի շարք ուսանուուներ—„Վերապարձ“ վերնագրով եւ „Հիւսիսային ծով“-ի առաջին ցիկլը։ Վերապարձը՝ Քնարական ինսկրիպցօնի հարազա նոյն է, նոյնպէս խորը, նոյնպէս անկեղծ եւ սրաւարձ. Երկուսն էլ նոյն վիրաւոր սրտի արեան երկու նման կարիքներն են, որ ծխում են իրեւու անմեղ զնուեր եւ այրում են մեր սիրտն ու մեր հոգին։ Հիւսիսային ծով“-ի մէջ Հայնէն իր պարզ բայց վսեմ արտայայտութեամ եւ պատկերների հոյակապ, ազդու պահուամայով ուղղակի ցնցող սպաւորուրիւն է զոր-

ծում: Այլ բան է սակայն „Ճանապարհորդական պատկերները“ (որի երկրորդ հատորը լոյս տեսաւ 1834 թ.) հասարակութեան բոլոր խաւերի մեջ աներեւակայելի աղմուկ եւ իրարացում զցեց, բանի որ բոլորն ել իրանց քերութիւններով նկարուած էին այնտեղ. ինչպէս մի անվեներ մարտիկ, անխնայ հարուածել կղերականներին, նեխուած ազնուականներին, մերկացնել իր դարի կեղծին եւ սուրբիւնը, ազատութեան մօսալուս պատկերի ուրուազիծ բաժեղով եւ այդ բոլորը համեմած խալրով, քարմ իւմօրով, անյագ սատիրայով, քրոռով, երերային պրոզաի մեջ—չեր կարող անհետեւանի մնալ. եւ Հայեն ճանաշուեց իրեւ վասնաւոր մարդ. գրուածքն արգելուց եւ հալածաներ սասկացաւ: Անձնական ապահովութեան համար նա մի առժամանակ զնում է Լոնդոն, ուր նա ուսումնասիրում է երկրի բաղաբական եւ հասարակական կրտպիր:

Լոնդոնից վերադառնալուց յետոյ, նա առանձին գրով հրատարակում է իր երգերի ժողովածուն—„Երգերի գիրք“ վերնագրով, որի հրատարակութեան իրաւունքն միւս ծախում է չնշին զումարով: Հենց այդ ժամանակ նա առաջարկութիւն է ստանում Բարն Կոստից գնալ Միլենին իրեւ խմբագիր նրա „Politische Annalen“ թերթի. նա յանձն է առնում, սակայն ինքը շատ իշխան է գրում լրագրում. եւ հակառակ իր, ազատութիւն սիրող ոգուն եւ անկախ մժին, նա շարունակ աշխատում է պետական ուեւ է պահօն ստանալ Պրուսիայում կամ Բաւարիայում (թեւ ինքը պետում էր, որ այդ պահօնը պրոփեասորական ամբիոնն է) եւ երբ իր ջանիքն ի դերեւ են անցնում, նա իրազրծում է իր վաղեմի ցանկութիւնն եւ զնում է ճանապարհորդելու իտալիայում: Կես ճանապարհին նա լուր է առնում, որ մայրը վախճանուել է եւ վերադառնում է Համբուրգ. այնտեղից դարձեալ զնում է Բերլին, ուր նա լոյս է ընծայում „Ճանապ. պատկերների“ երրորդ հատորն եւ

## ԵՐԳԵՐԻ

## ԳԻՐԳԸԼ

„ԵՐԳԵՐԻ ԳԻՐՔԸ”

ՆԱԽԵՐԳԱՆՔ.



Յին, կախարդական անտառումն եմ ես!  
Մաղկած թմբիներն հրաշալի բռւռում,  
Լուսնեակի չքնաղ ըողբը զուարքերես  
Դիւրում է հոգիս, հետանքով լցնում:

Մինչ դեռ անտառով գնում էի առաջ,  
Յանկարձ վերեւից հնչեց ներդաշնակ—  
Տերեւների մէջ երգում էր սոխակ,  
Երգում էր նա սեր եւ սիրոյ հառաջ:

Երգում էր սեր եւ սիրոյ տառապանք,  
Թառն արցութեներ, ժպիս, հառաջանք.  
Ողբում էր, յուզում զուարք եւ սիրազին—  
Հին երազներս զարքեցին կրկին:

Ես առաջ եմ գնում դանդաղ ժայլերով,  
Տեսնում եմ դիմաց մի լայն տափառակ.  
Եւ նորա վերայ բարձր տաճիքով  
Կանգնած մի շենդ, նոյակապ դղեակ:

Պատուհաններն ամեն կողմ փակած,  
Տիրում է սուզ եւ լոռուրին խորին.  
Կարծես թէ մահն է թեւերը բացած  
Պատել այն տիուր, սգւոր պատերին:

Սհարկու մի սֆինքս\*) պառկած էր շեմքին—  
Եւ զմայելի՛ էր եւ զարհուրելի՛—  
Սոխւծի մարմնով եւ նիրաններով,  
Խսկ զլուխն ու կուրծքը՝ կատարեալ մի կին:

Հրաւալի՛ մի կին. աչեւրը սպիտակ  
Ցոլացնում էին ցանկուրին վայրագ.  
Համբ ուրունեներն, աղեղի պէս կոր,  
Ժայռում վավառու եւ խորհրդաւոր:

Սոխակն երգում էր այնպէս հետալուր,  
Որ սրփի գրգիռն առաջ մղեց ինձ,—  
Հրաւալի դեմքին տոկ ջերմ համբոյր,  
Բայց կաշկանդուեցի խսկոյն հմայքից:

Մարմարէ արձանն կեանք առաւ յանկարձ,  
Սկսեց հառաջել բարն արքնացած.  
Լափող ծարաւով պարպեց նա խպառ.  
Կրակոս համբոյրիս բոցերը հրավառ:

Ծծե՛ց, դուրս բաւե՛ց իմ տունչս վերջին,  
Մինչեւ տնչասպառ դարձաւ հետանեից,  
Ապա գրկեց ինձ, սեղմեց իմ մարմինն  
Եւ սուր նանկերով պատառոնեց ինձ:

Հետալի՛ տանջանք, ցաւ երանակա՞ն,  
Թախիծ եւ զգուանք անմո՛ւն, անսահմա՞ն.  
Մինչ դեռ բերանն ինձ համբոյր էր տալիս—  
Վերք էին հասցնում նիրաններն սրփի:

Սոխակն երգում էր.—Օ՛ սֆինքս, օ՛ սկր,  
Սաս ինձ ինչո՞ւ, ինչո՞ւ ես խառնում  
Երջանկուրեան հետ մահացու վերքեր,  
Ինչո՞ւ ես սերն ու ցաւը միացնում:

Օ՛ գեղեցիկ սֆինքս, բացատրի՛ր դու ինձ  
Սյդ առեղծուածը ժանի եւ դժնդակ,  
Որ տանջում է ինձ եւ որի մասին  
Զո՞ւր մտածում եմ դարեր շարունակ:




\*) Աստղանիշը բոլոր խօսքերի բացատրութիւնը տես  
վերջը: Յ. Տ.-Գ.

ՊԱՏՄՆԵԿԱԿԱՆ  
ՏԱՐԱԾԱՆՔՆԵՐ

(Gange Heiden)

1817—1821.





## 1.

Ա մի անգամ երազեցի սկը եւ կիրք,  
Վառ ծաղիկներ եւ հրաւալի խոպոպիք,  
Դառն խօսներ եւ անուշիկ համբոյրներ,  
Մոայլ երգեր եւ սրտամաւ մեղեդիի:

Անուրջներս վաղուց է որ էլ չըկան,  
Թռաւ նաեւ իմ տեսիլս սիրական.  
Միայն երգս է ինձ մնացել անցեալից,  
Նա վայրի է, նա բուռն է եւ վետալից:

Խե՞ն իմ որք երգ. դո՛ւ, դո՛ւ միայն ինձ մնացիր,  
Դե՛, զնա՛, փնտի՛ր իմ երազ ցանուցիր.  
Եւ երք գտնես—այն օդային ստուերին  
Տո՛ւր բարեւս եւ հառաչս օդային:



## 2.

Հայ մի երազ խիս չարագուշակ,  
Նա հիացրե՞ց ինձ, նա սարսեցրե՞ց ինձ.  
Դեռ մինչեւ այժմ սիրս շարունակ  
Ալեկոծւում է ժանտ պատկերներից:

Ես տեսնում եի մի դիւրիչ պարտեզ  
Եւ զբոնում այնուն զուարը եւ ուրախ.  
Ես հրնւում եի տեսնելով ինչպէս  
Դիտում իին ինձ ծաղիկներ չենադ:

Սիրուն բռչնակներ, որ ծառերի մէջ  
Սէր են գեղգեղում հազար մի երգով.  
Եւ ոսկէ արեւ, որ լոյսով տնեկջ  
Ներկում ծաղիկներն հազար մի ներկով:

Կանաչ խոտերը բուրում են անոյշ,  
Միջօրեայ օդը շնչում է հետանի.  
Ամեն ինչ խնդում, մպտում է ֆեռոյշ,  
Ինձ ներշնչում է ե՛ւ սկը, ե՛ւ զգուանի:

Ծաղիկների մէջ, խոտերով պատած,  
Մարմարինի աղբիւր էր ցայտում.  
Մի սիրուն աղջիկ ափի մօս նսած  
Ճերմակ սաւան էր խնամեով լուանում:

Քաղցր այսերով, աչերը զբոս,  
Գանգուրներ խարեւած—մի սուրբի երես—  
Նա բուռն էր ինձ որպէս ինձ ծանօթ,  
Բայց նոյն ժամանակ օսար էր կարծես:

Սիրուն աղջիկը շապով լուանում  
Եւ սարօրինակ մի երգ էր երգում.  
„Հոսի՛ր, հոսի՛ր, իմ աղբիւրակ,  
Կսաւս լուացիր յսակ“:

Մօսեցայ նորան գրաւուած զարմանից  
Եւ շնչալով հարցրի.—, Ասա ինձ,  
Ո՞վ անոյշ աղջիկ, ո՞վ չենադ եակ,  
Ո՞ւմ համար է այդ զգեստը.—Նա արագ

Պատասխան տուեց.—„Դէ՛, ուուս, պատրաս կաց,  
Ես լուսնում եմ պատանեղ մահուան“:  
Եւ այս խօսիերը դեռ չը վերջացրած  
Ամեն ինչ հալուեց փրփուրի նման:

Եւ յանկարծ հրաւեռվ, մի ակնքարբում  
Տեսայ ինձ կանգնած մուր անտառի մեջ,  
Երկնին էին ծառերը հասնում,  
Ես խորհում էի զարմանեռվ անվերջ:

Բայց, յո՛ւս, լսում է մի խուլ արձագանգ,  
Հեռու, կացինն է տեղում հարուածներ.  
Թփեր, մացաններ անցնում եմ արագ  
Դէպի մի բաց տեղ, դէպի տափարակ:

Կանաչ գորգի վրայ վիրխարի կաղնին  
Կանգնած էր հպարտ եւ, տե՛ս, նրա տակ  
Նոյն իմ աղջիկը, կացինը ձեռքին  
Դարաւոր կաղնուն զարկում էր արագ:

Շարժում էր կացինն, հարուածում, զարկում  
Եւ տարօրինակ մի երգ էր երգում:  
„Փայլուն պողպատ, կացին պայծառ,  
Տախտակ կտրիր ուուս ինձ համար“:

Մօտեցայ նորան ապշած յուզմունից  
Եւ շենջալով հարցրի.—„Ասա՛ ինձ,  
Ո՞վ սիրուն աղջիկ, ո՞վ չինաղ էսկ,  
Ինչո՞ւ ես կտրում կաղնին“:—Նա արագ

Պատասխան տուեց.—„Փամ է, պատրաս կաց,  
Տախտակ եմ շինում դագաղիդ համար“.  
Եւ այս խօսիերը դեռ չը վերջացրած  
Ամեն ինչ հանգաւ ինչպես փրփառաւ:

Շուրջու եմ նայում եւ տեսնում ահով  
Ամայի մի դաշ, մի մերկ առապար.  
Զեի հանկանում թէ ինչ նոր նրաօքով  
Կանգնած էի ես այնտեղ դողահար:

Սկսեցի շրջել եւ աննպատակ  
Թափառել. յանկարծ մի սպիտակ էսկ  
Փայլեց իմ առաջ.—Ես նետեցի—  
Միրուն աղջիանն եմ տեսնում շարունակ:

Կանգնած հեռաւոր ամայի դաշում  
Աղջիկը բահով զետինն էր փորում—  
Այնպէս գեղեցիկ էր սոսկալի էր,  
Որ նորան նայել չէի յանդգնում:

Միրուն աղջիկը շապում էր, փորում,  
Եւ տարօրինակ մի երգ էր երգում:  
„Փորի՛ր, իմ բրի՛չ, փորիր նոր,  
Փորի՛ր մի նոր մեծ եւ խոր“:

Մօտեցայ նորան ապշած յուզմունից  
Եւ շեջալով հարցրի.—„Ասա՛ ինձ,  
Ո՞վ սիրուն աղջիկ, ո՞վ չինաղ էսկ,  
Ո՞ւմ համար է այդ հորը“.—Նա արագ

Պատասխան տուեց.—„Դէ՛, այժմ հանգիս կաց,  
Քեզ համար փորում եմ սառ զերեզման“.—  
Եւ այս խօսիերը դեռ չը վերջացրած  
Իմ առաջ բացուեց վիճը սպառնական:

Հայեաց զցեցի զերեզմանիս մեջ,  
Ինձ պատեց սարսուռ, ես սարսափեցի,  
Սչերս մընեց, ընկայ փոսի մեջ  
Եւ այդտեղ արդեն ամից զարբեցի:



## 3.

 Երազիս մէջ անցած զիւեր տեսայ ինձ  
Շիեղ Թրակով, բանկոնակս մետախսից,  
Թեւնցներով, ինչպէս պարս է հանդիսին—  
Յանկարծ տեսայ իմ անձկալի սիրածին:

Ողջոյն տարով հարցրի.— „Դո՞ւք իք հարսնացուն,  
Ընդունեցիք ուրեմն յարգանքս անկեղծ“:  
Բայց ես կանգնած անշարժ, աշերս լեցուն—  
Խեղդում էի այդ հնչիւնից սառն եւ կեղծ:

Եւ սիրածիս աշխիներից հոսեցին  
Դառն արցունեներ, երա հեղեղների տակ  
Սիրուն դեմքի նոյլները մքնեցին:

Օ՛ բաղց աչեր, սիրոյ ատոյեր սրբազն,  
Արքուն քէ բնած խաբել իք ինձ տարունակ,  
Բայց ես դարձեալ հաւատում եմ անսահման:



## 4.

 Ա յես էի դառնում սիրունուս տնից,  
Եւ ցնորամիս ցրում լուռ կէս զիւերին:  
Գերեզմանատան մօտով անցնելիս  
Գերեզմաններն ինձ լուրջ բարեւեցին:

Երածի դամբանախարը տարտամ  
Ինձ բարեւեց, — լուսնի ըողբն էր թրուում,  
Եւ տենջաց— „Սպասի՛ր եղբայր, ես էլ զամ“—  
Եւ մքապա դժգոյն մի սոււր է ելնում:

Երածի էր դուրս գալիս իւր շիրմից.  
Նա նսեց իւր զերեզմանի բարի վրայ,  
Եւ կիրառ հնչեցնելով վետալից—  
Շիրիմական եւ խուլ ձայնով երգեց նա:

„Դէ՞ն, մուայլ լարեր, դառնաւունչ լարե,  
Հին, ծանօթ երզը յիշո՞ւմ իք դուք դեռ.  
Ե՞րզը, որ երբեմն սրտեր էր այրում...  
Հրեսակն—երկնային վայելք է կոչում,  
Դեւը—դժոխի տանջանք. իսկ մարդիկ  
Սկը են անուանում այն երզը բաղցրիկ“:

Վերջին հնչիւնն հազիւ մարեց դողալով,  
Շիրիմները չորս կողմ յանկարծ բացուեցին,  
Եւ օդեղին սոււերներ դուրս խուժելով  
Երածի ըուրջը խմբով հնչեցին:

„Ա՛խ, սէ՛ր, սէ՛ր, ո՞ և նորիիւ  
Պառկած ենք մենք այսեղ,  
Ինչո՞ւ ես կանչում մեզ,  
Հալածում ամեն տեղ“:

Այսպէս գոռում, լալիս էին, հառաչում,  
Սուլում, ոռնում, տամները կրնում.  
Երածի ըուրջը շաչում խելազար—  
Երածի նորից զարկեց իւր կիրառ:

„Կեցցէ՛՛, կեցցէ՛՛ խենք ոգիներ,  
Բարով եկամ,  
Լաւ հասկացաք  
Կախարդական իմ խօսեր:  
Բա՛ւ է, որքան մկների պէս  
Հողում պառկած ենք եղել,

Եկեք բոյլ տանի ալս զիշեր մեզ  
Զուարհանալ եւ ժեֆ անել:  
Յիմար եւ խենք անց կացրինք  
Կեանքր, պիրուն զոհ գնացինք—  
Եկե՛ք, պատմեցէք այժմ ինձ,  
Թէ սիրոյ սուր հանկերից  
Ով, ինչպէս է մահ տեսել.  
Պատեհ ժամ է այս զիշեր“:

Նիմար մի սոսւեր բամու նման դուրս սահեց,  
Կանգնեց մէջ տեղ եւ սզզալով ըսկսեց.—

„Առկերս էի դերձակի մօս,  
Զենքիս ասեղ ու մկրաս.  
Աշխոյծ էի, ժիր ու կրակոս,  
Զեռքիս ասեղ ու մկրաս:

„Եկաւ աղջիկը վարպետիս,  
Զեռքին ասեղ ու մկրաս.  
Մօտեցաւ եւ ուղիղ սրտիս  
Խրեց ասեղ ու մկրաս“:

Քրչացին ոգիներն ուրախ, զուարք,  
Պննուած, ներկուած մի երկրորդը սկսեց արդ:

„Բեմի բագաւորն էի ես, աւա՛ղ,  
Միրահարների դեր եմ խաղացել.  
— „Ո՞վ աստուածներ“— զոռացել եմ յանախ,  
Նոյնպէս եւ բնենյոյ շատ եմ „ա՛խ“ բաւել:

„Մորտիմեր“ \*) էի— ես անզուգական,  
Մարիան Սիւարտն այնպէ՛ս դիւքական,  
Սակայն չը նայած բոլոր ձեւերին՝  
Անտեղեակ մնաց նա իմ զգացմունիիս:

„Մի անգամ, վերջը, երբ ես յուսահատ  
— „Մարիան, ո՞վ սուրբդ“ բացականչեցի,  
Կատաղած առաջ դաշոյնս արագ  
Եւ սիրս... մի փոքր խորը խրեցի:

Քրչացին ոգիներն ուրախ, զուարք,  
Այզը պարան գցած մէկը սկսեց արդ:

„Գոլում էր կոմսն եւ պարձենում ժեֆի ժամանակ  
Իւր բանկազին բարերով եւ դասրիկով միակ:  
— „Կո՞մս, բանկազին մարգարիտներն ինձ չեն հրա-  
պուրում,  
Քո դասրիկն է միայն իմ ուժն ու միժս գրաւում“:

„Ամուր պահուած են միասին բարերն ու դասրիկ,  
Խիստ հսկում են սպասաւորներ, նիզեր եւ փականն,  
Բայց ինձ ի՞նչ հոգ կամ ծառաներ, կամ փականն,  
կամ նիզ,—  
Ելայ շարժուն աստիճանով վերեւ համարձակ:

„Իմ սիրածիս պատուհանին հասայ վերջապէս,  
Ցանկարծ լսում եմ ներթեւից անեծք եւ ցասում.  
— „Է՛յ, բարեկամ, սպասիր մի ժիշ, ես էլ կ'օգնեմ ժեզ,  
Ազնիւ բարեր, ադամանդներ ես էլ եմ սիրում“:

„Կոմսն այսպէս ծաղրում էր ինձ. ձերբակալեցին.  
Ծառաներն ինձ աղմկայոյզ շշապատեցին:  
— „Գրողը տանի ձեզ, ես գող չեմ, եւ ո՛չ էլ սրիկայ,  
Միայն սիրուհուս եմ փախցնում, երկինքն է վկայ:

„Ոչինչ չ'օգնեց, ո՛չ խօսի, ո՛չ փաստ, խկոյն ինձ տարան,  
Անմիջապէս փարաբեցին վզիս մի պարան.  
Եւ երբ ծագեց առաւօտեան պայծառ արեգակ—  
Զարմացաւ, որ նօնում էի կախաղանի տակ“:

Քրքացին ոգիներն ուրախ, զուարք,  
Դլուխը ձեռքին բոնած մէկը սկսեց արդ:

„Հրացանն ուսխս, սրտում սիրոյ ցաւ,  
Գնում էի որսի, շրջում ամեն վայր.  
Յանկարծ իր զումկան ձայնով մի ազռաւ  
Ծառից կոկուաց—, Դլուխդ վայր“:

„Թէր մի աղաւնի, որսից մի նշան  
Տանեի հնես սիրուհուս համար:  
Սկանչ էի դնում եւ մտայ դարան,  
Փնտեցի չորս կողմ եւ բուփ, եւ մացառ:

„Բայց, յոււց, թիֆի տակ համբոյրներ, զգուանն  
Անոււս սիրահար տատրակներ են երան.  
Շտապում եմ այն կողմ հրացանս պատրաս,  
Բայց այս, սիրուհուս տեսայ թիֆի տակ:

„Սիրուհուս տեսայ, տեսայ տատրակիս,  
Անձանօր մի մարդ գրկել էր նորան.  
Դէ՛, փորձուած որսորդ, զարկդ չը վրիպես—  
Դլորուեց արինոս մարդը դաւանան:

„Այդ չարաքասիկ օրից տաս չ'անցաւ,  
Ինձ տանում էին զլխատմանս վայր  
Այդ նոյն անտառով. դարձեալ մի ազռաւ  
Ծառից կոկուաց—, Դլուխդ վայր!“

Քրքացին ոգիներն ուրախ զուարք,  
Եւ վերջապէս երաժիշտը սկսեց արդ:

„Ես երգել եմ սիրում մի երգ—  
Բայց նա վազուց է հանգել.  
Երբ որ սիրը խորտակում է—  
Խորտակում են եւ երգեր“:

Քրքից, ծիծաղ, անսանձ ոյժով վերսկսուեց,  
Ոգիները պար բոնեցին մոլեզին.  
Զանգակատնից գիշերուայ մէկը խփեց—  
Եւ ոռնալով զերեզմաններ նետուեցին:



## 5.

**Ա**նչո՞ւ է յուզում երակներիս մէջ,  
Փրփրում, եռում, յորձանեններ տախս  
Սրինա, ինչո՞ւ կրակ եւ բոց անչէջ  
Լափում են կուրծս եւ սպառնում սրփս:

Տեսայ մի երազ, երազ դժնդակ—  
Նա իմ արինս խառնեց, բորբոքեց.  
Դիշերուայ երազն էր չարազուակ,  
Որ եկաւ եւ ինձ ընչափառ բոցեց:

Թոցրեց եւ տարաւ զեղեցիկ մէկ տուն,  
Ուր հնչում էին ջուրակ եւ բնար,  
Պապղուն ջահեր, կերոններ փայլուն,  
Խոկ դանիինի մէջ հիւրեր անհամար:

Ներս մտայ, տեսայ ուրախ նարսանիք,  
Հիւրերը բազմած վայելում ընրիփ.  
Եւ երբ վերջապէս նայեցի նարսին—  
Աւա՛ղ, ես տեսայ... իմ սիրած կոյսին:

Նա ինձն էր, պննուած տեղ եւ թերեւ,  
Խոկ դեսան էր անձանօր մէկ մարդ.  
Հարսի պատուաւոր արռոփ յետեւ  
Կանգնեցի ես լուռ, անձայն եւ անքար:



Հնչում են փողեր, զուարճանում մարդիկ,  
Բայց ուրախ աղմուկն նոզիս էր ննում.

Հարսը ժպտում էր անչափ երջանիկ,  
Խսկ փեսան նորա ձեռքն էր սեղմում:

Լցնում է փեսան բաժակը գինին,  
Խմում եւ սիրով տախս է հարսին.  
Հարսը ժնորհակալ հայեացեով ժպտում—  
Ա՞յս, նա իմ կարմիր արիւնս է խմում:

Հարսը ձեռքն առաւ մի կարմիր խնձոր  
Եւ իւր ամուսնուն տուեց սիրատոշոր.  
Նա իւր դանակով խնձորը կտրեց—  
Աւա՛ղ, նա դանակն իմ սիրս խրեց:

Տարփանեով նայում է մեկը միւսին,  
Փեսան համարձակ գրկում է հարսին,  
Կարմիր այտերին համբոյր է դրումում—  
Ա՞յս, մահուան հրեւսակն է ինձ համբուրում...



## 6.

**Ե**րազների Սասուածն ինձ տարաւ հսկայ մի դղեակ,  
Կերոններով լուսաւորուած, օդը խեղդիչ, դժնդակ,  
Եւ խմբերով բազմատեսակ, ինչպէս սահող մի ալիք,  
Սենեակների լաբիրինթում բափառում էին մարդիկ:  
Աղմկայո՛յգ, սարսափահա՛ր եւ զղային շարժումով  
Եմի դուռն ինձ որոնում շառաչելով ինչպէս զես.  
Կային այնտեղ եւ տիկիններ եւ ասպետներ գրահներով,  
Եւ ինքս էլ սիփառուած եղայ առաջ գնալ նրանց հետ:

Չ'անցաւ երկար եւ ես յանկարծ տեսայ կանգնած եմ  
Մէնակ.

Զարմանում էի թէ ինչպէս ալճիան մարդիկ չբացան.  
Տարօրինակ դասաւորուած սրահներով միայնակ  
Առաջ եմ զնում շտապ բայլերով եւ բափառում եմ  
անձան:

Ոտերս ծանր ինչպէս կապար, երկիւղ եւ ցաւ իմ սրտում,  
Էլ յոյս չունիմ թէ այնտեղից կայ դուրս գալու մի հնար.  
Եւ վերջապէս հասնում եմ ես վերջին դռան եւ փորձում  
Դուռը բանալ... օ՛ Ասոււած իմ, ո՞ւմն եմ տեսնում  
Վէտահար:

Իմ սիրելի՛ն, տեմին կանգնած, հոզսի նետեր նա-  
կատին,  
Վիշտ եւ անձուկ եւ տիրուրիւն նորա սիրուն բերանին.  
Նա ինձ ձեռքով նեան արեց որ ես դարձեալ յետ դառնամ,  
Բայց չը գիտեմ յանդիմանանք էր այդ, թէ ազդ այս  
անզամ.  
Սակայն նորա աշերի մեջ վառուեց յանկարծ անոյց  
կրակ,  
Նա այրե՛ց իմ սիրս, այրե՛ց իմ ուղեղս անխնայ.  
Եւ մինչ դեռ նա բնեոյց եւ խիս հայեաց զցեց ինձ  
վերայ,  
Հայեա՛ց, որ լի էր զերմ սիրով—ես յուզմունիից արք-  
նացայ:



## 7.

**Ե**շերիս վրայ զիշեր փոռուած,  
Լեզուս ինչպէս մի կապար,  
Գերեզմանում ես նուաղած  
Պառկած էի անբառքառ:

Անկարող եմ մտաբերել  
Սրդեօֆ ո՞րքան ժամանակ—  
Բայց զարթեցի եւ լսում եմ,  
Որ զարկում են շարունակ:

„Հայնրի՛ս, վեր կա՛ց, իմ աննման,  
Վերջին օրն է լուսանում.  
Մեռեալներն արդեն յարեան,  
Յաւերծ վայելք է սկսում“:

„Ա՛խ, անկարող եմ, սիրելիս,  
Իմ աշխեր փակ են միւս.  
Զե՞ որ անվերջ արցունքներից  
Ես կուրացել եմ ընդ միւս“:

„Հայնրի՛ս, ես կը համբուրեմ մեզ  
Որ խաւարդ փարատեմ.  
Հրեսակներով պէս է զմայլուես,  
Դիւս երկինք ժպտադիմ“:

„Ա՛խ, անկարող եմ, սիրելի՛ս,  
Մրժից արիւն է հոսում.  
Բացուած քո մեկ կծու խօսից  
Վերք ցարդ չէ լաւանում“:

„Հայնրիխ, ձեռս սրտիդ վերայ  
Կը դնեմ հանդարտ որ կապի.  
Քո ցաւերդ կ'ամոքի նա,  
Մրիւնն այլ եւս չի բափի“:

„Ա՛խ, անկարող եմ, սիրելի՛ս,  
Գլուխս էլ է վիրաւոր.  
Զե՞ որ երբ մեզ խլեցին ինձնից,  
Ես վերք սասցայ ահաւոր“:

„Հայնրի՛ս, ես իմ խոպոպներով  
Գլխիդ վերքը կը գոցեմ,  
Արեան հեղեղը յետ տալով  
Ես այդ վերքն էլ կը բուժեմ“:

Էլ ոյժ չը կար դիմադրելու  
Թուլիչ եւ բաղցը այդ կոչին.  
Ես փորձ արի վեր կենալու  
Որ գրկեմ իմ սիրածին:

Յանկարծ վերքերս բացուեցին—  
Մրժից, կրծից զէտի պէս  
Արիւն սկսեց հոսել կրկին—  
Եւ զարթեցի իսկոյն ես:



ճած էի ես եւ բնած անոյշ  
Յաւս, վիշտ մոռացած.  
Անուրջիս մեջ եկաւ նա զգոյշ,  
Մի կոյս, չնադ արարած:

Գունաս էր նա ինչպէս մարմար,  
Հրապուրիչ եւ դիւրական.  
Աշերի մեջ ադամանդ բար,  
Գանգուրները կուսական:

Մեղմ եւ հանդարտ եկաւ ահա  
Կոյսը գունաս եւ մարմար.  
Եւ խոնարհուեց կրծիս վերայ  
Կոյսը գունաս եւ մարմար:

Սիրս տռփում է հանոյից,  
Զարկում ցաւից եւ սիրուց.  
Իսկ կոյսն անզգայ, զրկում է ինձ,  
Յուր է ինչպէս մի սառուց:

„Սիրս անզգայ եւ սառնարին  
Եւ ցուր ինչպէս մի սառուց,  
Բայց սիրոյ դրախտն եւ զօրուքին  
Ճանաչում եմ ես վաղուց“:

„Այսերիս վրայ չը կայ կարմիր,  
Մրժցա արիւն չէ կարում,  
Մի վախենար, մի սարսափիր,  
Ես մեզ սիրում եմ, պաշտում“:

Եւ աւելի մոլեզնաբար  
Գրկեց նա ինձ ցաւահար.  
Կանչեց աբլարն—եւ լուռ քռաւ  
Կոյսը գունաս եւ մարմար:



## II

## Ե Ր Գ Ե Ր

(„Lieder“).

1.



Ո՛ւ, որ այդպէս հրաշալի ես,  
Այդպէս մաքուր, գեղեցիկ,  
Կ'ուզենայի կեսնես միայն մեզ  
Նուեր բերել, ո՞վ աղջիկ:

Աչկեներդ բաղց եւ անոյε,  
Փալլիլում են լուսնի պէս.  
Ծաղիկներ են, վարդեր մնոյե  
Կարմիր այսերդ ու երես:

Մարգարիտներ կան շարեար  
Քո սիրունիկ բերանում,  
Բայց ամենից բանկագին բար  
Կուրծիդ է պարունակում:

Մինչ դեռ նայում էի ես մեզ,  
Օ՛ հրաշալի դո՛ւ աղջիկ,  
Մի անոյե սեր էի զգում ես  
Որ սիրում եր ինձ մեղմիկ:

2.

Արք տեսնում եմ սիրածիւ—  
Մոռանում եմ ինքս ինձ.  
Եւ ինձ այնպէս է քում՝  
Աշխարհն ինձ է պատկանում:

Բայց բաւ և որ հեռանամ  
Նորա կարապի կրծքից—  
Չխնում է ամեն բան,  
Եւ աղբատ եմ ամենից:

## 3.

Ուաւուսեան հարցնում եմ միշտ—  
Կը գա՞յ այսօր սիրելիս.  
Երեկոյեան ողբում եմ միշտ—  
Չ'եկաւ այսօր սիրելիս:

Գիշերները ես քուն չունեմ,  
Տոշուրւում եմ կիսարքուն.  
Խսկ ցերեկով քափառում եմ  
Եւ երազում կիսաբուն:

## 4.

Ուրկոս եւ անհամբեր անցուլարձ եմ անում—  
Դարձեալ բանի մի ժամ եւ կը տեսնեմ նորան,  
Իմ զեղեցկունուս, իմ սիրոյս աննման.—  
Ա՛յս, սիրս իմ, ինչո՞ւ ես այդպէս ուժգին զարկում:

Ծոյլ արարածներ են ժամերը սակայն,  
Առանց տապելու, կրիաների նուան  
Դանդաղ, յօրանջելով առաջ են սողում—  
Դէ՛, տուս, ծոյլ եակներ, ինչո՞ւ ե՛ ուշանում:

Ինձ այրում է, լափում մի փուրկութիւն,  
Բայց ի՞նչ փոյր, Յուրեն<sup>\*)</sup> երբէ չեն սիրել.  
Եւ այժմ նենգամիս մի դաւ են լարում  
Եւ տապող պատանուն չարախինդ ծալրում:

## 5.

Ռջում եի ծառերի տակ  
Թախծալից եւ միայնակ.—  
Հին երազս եկաւ կրկին  
Եւ գալարուեց իմ սրտին:

Ո՞վ սովորեց ձեզ, բռչիկներ,  
Սյով երգը բաղցր եւ սիրուն—  
Ա՛յս, լուցե՛ք, երգերը ձեր  
Սրտին ցաւ են պատճառում:

— „Եկաւ այսեղ մի սիրուն կոյս,  
Նա եր երգում անդադար,  
Նու սովորեց բռչիկներուն  
Սիրուն երգը ոսկեար“:

Այլ եւս չ'երգե՛ք այդ ինձ համար,  
Ա՛յս բռչուններ նենգամիս.  
Ուզում եք վի՞շտ գողանալ—  
Զո՞ւր, — չը կարծէ ինձ անմիս:

## 6.

Պլորիկս, դի՛ր ուս ձեռքդ սրտիս վրայ,  
Ա՛յս, ականջ դի՛ր, տե՛ս, ինչպէս է զարկում նա  
Այնտեղ մեկ չար, մեկ անգութ նիւսն է ապրում,—  
Նա ինձ համար սեւ դագաղ է պատրաստում:

Նա զարկում է մուշնը զիւեր եւ ցերեկ,—  
Նա չե բողնում որ զէր աչենք փակեմ.  
Ա՛յս, նիւսն վարպետ, բաւական է, վերջ դրէ՛ք,  
Այլեւս չեմ կարող համբերել, բոյլ տուր բնեմ:

7.



Այս, երանի իմ երգեր  
Լինելիք դուք ծաղիկներ—  
Կ'ուղարկեի խսկոյն ձեզ,  
Ու սիրած հոտ խաչեր:

Այս, երանի, իմ երգե՛ր,  
Լինելիք դուք համբոյրներ—  
Կ'ուղարկեի ձեզ խսկոյն  
Իմ սիրածիս այտերուն:

Այս, երանի իմ երգե՛ր,  
Լինելիք դուք սիսեւներ—  
Ես կ'եփեի մի ապուր,  
Հրաշահամ եւ հրաշաբոյր:

8.



ի համես ծաղիկ մեր տան պարտիզում  
Կանգնած է վաղուց տիսուր եւ գունաս. }  
Անցնում է ձմեռ, ծնում է զարուն,  
Սակայն ծաղիկը նայում է գունաս:  
Նա նայում է այնպէս—  
Հիւանդ հարս լինի կարծես:

Գունաս ծաղիկը շենջաց համես.  
„Քաղիր ինձ, խնդրե՛մ, եղբայր իմ բաղրիկ“:  
Ծաղիկն ասացի—„ո՛չ, չեմ բաղի մեզ,  
Երբեք չեմ բաղի մեզ, գունաս ծաղիկ.  
Դու գունաս ես եւ դժգոյն,  
Իմ ծաղիկս է վարդագոյն“:

Ծաղիկն ասաց ինձ.— „որոնի՛ր, փնտրիր,  
Մինչեւ քո մահի, մինչեւ զերեզման,  
Երբեք չես գտնի, իզուր մի տանջուիր,  
Երբեք չես գտնի ծաղիկը կարմիր:  
Քաղիր ինձ, խնդրում եմ մեզ,  
Ես ել հիւանդ եմ մեզ պես“:

Խնդրում եր, հայցում ծաղիկն անընդհա—  
Մեկնեցի ձեռս, բաղեցի վիաս—  
Եւ սրիս վերիւր յանկարծ կապուեցին,  
Հոգւոյս աշենիք մուքը փարատուեց,  
Եւ իմ վիրաւոր սրին  
Տիրեց հանգիս երկնային:

9.



անջանեներիս սիրուն օրուն,  
Սիրուն շիրիմ հանգստիս,  
Հասել է ժամն անջատման—  
Ա՛ն մնաս բարեւը սրիս:

Մնաս բարեւ, օ՛ սուրբ երկիր,  
Ուր սիրած եր ման գալիս.  
Դուք էլ մնաս բարեւ, սուրբ վայրեր,  
Ուր նախտեսայ սիրածիս:

Այս, երանի չը տեսնեի  
Սրիս սիրուն բազուհուն—  
Ես ել երբեք չեի տանջուի,  
Ինչպէս այժմս եմ տանջում:

Չեի ուզում սերս յայտնել,  
Ոչ հայցել սեր կամ տարփան.՝  
Այլ այնտեղ, ուր նա է տնչել—  
Այնտեղ վարել խաղաղ կեան:

Սակայն իւր դառն, ցուրտ խօսերով  
Նա հալածեց ինձ մոլոր.

Միշխ խաւար, տարաւած ցնորդով,  
Միշխ հիւանդ, վիրաւոր:

Յոզնած, դէպի օտար աշխարհ  
Կը դիմեմ քափառական,  
Միջնէ կառնի ինձ ուժասպան  
Հեռո՛ւ, մի ցուրտ գերեզման:

## 10.

**Ա**սրեր, ամրոցներ նայում են ներքեւ  
Եւ արտացոլում պայծառ Հռենոսում.  
Փոքրիկ նաւակս սահում է քերեւ  
Եւ պսպղում է արեւի ըողում:

Ոսկէ ալիբներ խաղաղ եւ զուարք  
Խայտում են, ծփում, ժպտում են աչխի.  
Մրժի խորքերից զարրում են հանդարտ  
Յիշատակներն իմ հին ցնորդներիս:

Հոյակապ գետը, ալիի եւ կոհակ  
Հրապուրում են ինձ, գրաւում քնչաքար.  
Բայց զիտեմ, դիւրիչ արտախինի տակ  
Նա պահած ունի եւ մա՞ն եւ խաւա՛ր:

Երեսին—հանգիս, դաւեր—յատակում,  
Օ՛ գետ, դու նման ես իմ սիրածին.  
Նա ել է նեզ պէս սիրալիր կանչում,  
Եւ ժպտում նեզ պէս խանդաղատագին:

## 11.

**Ա**կիզբը համարեա յուսահատուեցի,  
Կարծում իի թէ չեմ դիմանալ ես.—  
Բայց դարձեալ տարայ, դարձեալ յաղթեցի,  
Սակայն, մի՛ հարցնեմ, մի՛ հարցնեմ—ի՞նչպէս:

## 12.



Ա ցանկանայի այս իմ գրեոյկս ինչպէս մի դամ-  
բան վեցիւով եւ նոնիներով քնիոյ զարդարել,  
Եւ ոսկեզօծել շենդ եւ սիրուն—ապա յաւիտեան  
Երգերս նորա թերթիկների մեջ դագաղին յանձնել:


Այս, երանի թէ այս երգերիս նետ սկրս էլ քաղեմ.  
Միրոյ շիրմի վրայ համես բանում է հանգստեան ծաղիկ,  
Բնոնում է համես, ծաղկում եւ խսկոյն բաղում են  
մարդիկ,  
Նա ինձ համար էլ կը ծաղկի, զիտեմ—բայց, երբ որ  
մեռնեմ:

Իսկ այսեղ միայն երգերս են հանգչում, երգեր որ  
առաջ  
Հոգւոյս խորքերից կատաղի ոյժով ժայրիում եւ շառաչ,  
Եւ ոփինդ տարածում, նրաբուղիսի նման բռնկում արագ,  
Եր սիրում իին ուուրջը լուսավառ կայծերի կուտակ:

Իսկ ա՛յմ, նորանի պառկած են այսեղ ինչպէս  
դիակներ,  
Սառած, փետացած, մեզի պէս զունաս, լուռ եւ ան-  
տարբեր,  
Սակայն իին խանդը բոցավառուում է նրանց մեջ կրկին  
Երբ սաւառնում է երգերիս վերայ սիրահար հոգին:

Եւ զգում եմ, մի օր, երբ այս գրեոյկը դու ձեռքի  
առնես—

Երգերս կ'ազատուեն իրանց հմայից եւ զունաս տառերն  
Աղերսի տենչով, օ՛ սիրելիդ իմ, նայելու են նեզ,  
Եւ շենջալու սիրոյ եւ բախծի անուշիկ խօսեր:



## 13.



Երք փերւում են երկու սրտեր—  
Ապա կապոյն երկնիում  
Ծիծաղում են սիրուն աստղեր,  
Ծիծաղում են եւ ասում:

„Թշուառ մարդիկ, դուք սիրում եք  
Հոգու բոլոր ոյժերով,  
Սակայն խաբւում եւ սանջուում եք  
Մահաբեր սանջաներով:

Սիրոյ բոյնը կորսարար  
Չենք նաւակել մենք երբեք—  
Եւ հինգ այդ է միակ պատճառն  
Որ անմահ ենք մուռմ մենք:

## 14.



զեցած տարբեր կերպարանք,  
Անբաժան եմ ես քեզնից.  
Բայց տանջուում եմ շարունակ,  
Դու միւս չարչարում ես ինձ:

Երք բաղում ես դու ծաղիկ,  
Դաշտերում քափառելիս,  
Եւ նմում ես բիբեռնիկ—  
Չե՞ս լում ինձ ողբալիս:

Երք բաղում ես մի վարդիկ,  
Ինչպէս մանուկ նրնուելիս,  
Ճմլում կոկոն եւ բերբիկ—  
Չե՞ս լում ինձ ողբալիս:

Իսկ երք անխիղն, անտարբեր,  
Սիրուն վարդը տրուելիս,  
Ծակում են քեզ չար փեր—  
Չե՞ս լում ինձ ողբալիս:

Չե՞ս լում ինձ ողբալիս  
Նոյն իսկ երք ձայնի է հնչում—  
Գիշերն հոգոյդ խորբերից  
Ես ողբում եմ, հառաջում:

## 15.

Իմ սիրելի ծաղիկներ,  
Եկե՛ք, դարձեալ հաւատուենք,  
Դարձեալ իմնդանք, զուարեանանք,  
Եւ ժպտանք եւ երգենք:

Դո՛ւ, մայիսեան սպիտակ զանգ,  
Եւ դո՛ւ, կարմրայ վարդիկ,  
Դո՛ւ ել, մեկոն երփներանգ,  
Դո՛ւ, կապոյն յուշածաղիկ:

Ա՛խ, իմ սիրած ծաղիկներ,  
Բարի եկաք, դէ՛, եկե՛ք.  
Միայն քեզ հետ չա՛ր յափո՛ւկ,  
Չեմ հաւսուի ես երբեք:

## 16.



Ա ցանկանում եմ ապրել կանաչ անտառում,  
Ուր ծաղիկներ են ծաղկում, երգում թռչուններ,  
Որովհետեւ երք պառկեմ ցուրտ զերեզմանում  
Հողն է ամուր ծածկելու իմ ականջն ու աչեր,  
Եւ այլ եւս չե՛մ տեսնի ծաղկող ծաղիկներ,  
Այլ եւս չե՛մ լսի թռչունի երգեր:

## ԱՐՁԱԳԱՆԳ



Որ ձորի մեջ դանդաղ, վհաս  
Մի հեծոր է անցնում հանդար,  
— „Ախ, արդեօք ի՞նչ եմ տեսնելու,  
Սիրելուս քեցութեզման“:  
Արձագանգը կրկնեց հեռու—  
„Յուր գերեզման“:

Զորի միջով գնում է առաջ,  
Եւ արձակում կրծից հառաջ.  
— „Ախ, մեռնելու եմ վաղաժամ,  
Հոգ չե, հողը հանգիս կը տայ“:  
Արձագանգը կրկնեց այնժամ—  
„Հանգի՞ս կը տայ“:


Արցունե է հոսում աշերից,  
Սիրը պատում խորին բախիծ.  
— „Երէ մահ է ինձ վիճակուած“  
Հանգիս կ'առնեմ միայն հողի տակ“:  
Արձագանգը հեռուից ասաց—  
„Միայն հողի տակ“:



## ԵՐԿՈՒ ԵՂԲԱՑՐ



այսի զիսին մի հին ամրոց  
Մուր զիւերով փարարուած,  
Խոկ նրա տակ սրի շաշոց,  
Սուլում, ցայտում հուր եւ կայձ:



III

## ԹԱՄԱՆՄՆԵՐ

(Romanzen).

1.

## ՏԵՇԻՔ ՊԱՏԱՆԻ



ունաս, դալուկ մի պատանի,  
Դեմքին վիշտ եւ ցաւ դրումած,  
Յաւակցուրիւն անասելի  
Պատճառում է նա մարդկանց:

Զովացնում են կարեկցաբար  
Հովերն այրւող պատանուն.  
Գոռող կոյսն էլ կը ցանկանար  
Հոյլ տարածել նրա սրտում:

Քաղաքներից հեռո՛ւ, յանախ  
Նա փախչաւմ էր դէ՛պ անտառ,  
Ուր ծառերն են խըսում ուրախ,  
Թռչունն երգում սիրահար:

Բայց բոչունները լոեցին,  
Սոսափիւնը դալկացաւ—  
Երբ տիրամած, լուր պատանին  
Դանդաղ, վհաս մօսեցաւ:



Երկու եղբայր ամրոցի տակ  
Մարտնչում են կատաղած.  
Ինչու արդեօֆ շարագուշակ  
Նրանք կոռուի են բռնուած:

Կոմսի դասեր աշխերն է վառ  
Նրանց կոփուր բորբոքում,  
Երկու եղբայրն էլ սիրավառ  
Չենաղ կոյսին են պաշտում:

Բայց նա որի՞ն սիրը կը տայ,  
Դեպի ո՞րն է տրամադիր—  
Ոչ ո՛չ չի զգայ, ոչ կ'իմանայ,—  
՚՚ զեն, օ՛ սուր, դու վճռիր:

Կուռում, տեղում են դժնդակ  
Հարուած, հարուածի վերայ...  
Զարագո՞յծ է, մի՛ հաւատաք,  
Խաւարը կես զիւերուայ:

Վայ՝ ձեզ, վայ՝ ձեզ, արիւնշաղախ  
Եղբայրներ, հովիս, վայ՝ ձեզ...  
Ահա նրանք ընկան—աւա՛դ...  
Եղբայրն եղբօր մահացրեց:

Դարեւ անցնում այն օրուանից,  
Սերունդներ են չբանում.  
Դատարկ ամրոցն է այն ժայռից  
Միայն տիսւր վայր նայում:

Սակայն հովտում կես զիւերին,  
Ասում է աւանդութիւն,  
Եղբայրներն են կուռում կրկին,  
Եւ լսում է սրի շաշիւն:



## 4.

ԲԱՆՏԱՐԿԵԱԼԻ ԵՐԳԸ

 Երգի իմ տատիկս կախարդեց կոյսին—  
Ուզեցին նորան կենդանի այրել.  
Ճատ ջանք գործ դրին, շատ աւխատեցին,  
Բայց նա չեր ուզում մեղքը յանձն առնել:

Գցեցին նորան մի կարսայի մեջ.  
Սկսեց անիծել, հառաչել սկսեց,  
Եւ հենց կարսայից սեւ ծուխ վեր ելաւ—  
Նա բռաւ յանկարծ ինչպէս մի ազռաւ:

Ո՛վ իմ սեւամազ, վետրաւոր տատիկ,  
Եկ, այցելիր ինձ, մի բողնիր որբիկ.  
Թոփ'ր տուս, անցի՛ր պատճես եւ վանդակ,  
Բեր հետդ պանիր, բեր եւ կարկանդակ:

Սեւամազ տատիկ, տատիկ վետրաւոր,  
Վաղ առաւօտեան, խմբում եմ, հոգ տա՛ր,  
Որ մօրաբոյդ կոխաւալանի վրայ  
Գոնէ աշերս չ'ափ կտցահար:



## 5.

ԵՐԿՈՒ ԳՐԵՆԱԴԵՐ \*

 Յում էին ֆրանսիա երկու գրենադեր,  
Որ զերի էին վաղուց նուսիայում.  
Եւ երբ որ տեսան գերման գաւառներ—  
Նրանք զիսները կախեցին տրում:

Այնտեղ լսեցին տխուր լուր նրանք,  
Որ ամօրի էր ֆրանսիան մատնուած,  
Յաղբուած էր, զարդուած Մեծ Զօրաբանակ—  
Եւ Կայսրը, Կայսրը գերի էր ընկած:

Որտաւում էին նրանք դառնապէս,  
Երբ այս ողբալի լուրը լսեցին:  
Մէկն ասաց.— „Սիրս այրում է կարծես,  
Իմ հին վերեւու նորից բացուեցին“:

Միւսն ասաց.— „Այո՛, վերջացաւ արդէն,  
Կը ցանկանայի ես եւս մեռնել,  
Բայց տան ունիմ կին եւ զաւակներ,  
Նրանք առանց ինձ ժաղցից կը մեռնեն“:

„Ի՞նչ նոզա է կին կամ զաւակներ—բոլ զնան  
Երէ ժաղցած են, փողոցում մուրան.  
Այլ նոզսերով է միտք պաշարուած—  
Իմ Կայսր, Կայսր գերի է ընկած:

„Վերջին աղերսս կատարիր, եղբա՛յր,  
Երէ ես մեռնեմ այս օսար երկրում—  
Խնդրում եմ, դիակս ֆրանսիա տար,  
Եւ բաղիր այնտեղ հայրենի հողում:

„Իմ պատուի խաչը կ'ամրացնես կրծքիս,  
Կարմիր ժապաւենն էլ կպցրու նորան.  
Հրացանս կը դնես կարկամած ձեռքիս,  
Կը կապէս զօսկից սուրս անբաժան:

„Դագաղում այդպէս պառկած կը սպասեմ,  
Ինչպէս մի պահակ, մինչեւ որ լսեմ  
Թնդանօքների հումկու դդրդիւն,  
Եւ խրխնջացող ձիերի տրոփիւն:

„Ռազմի բոցերում, նճոյզը հեծած,  
Կայսրս կը տփուի ցուրտ գերեզմանիս,  
Եւ ես դագաղից դուրս կը գամ զինուած  
Եւ կը պաշտպանեմ Կայսրի՛ս, իմ Կայսրի՛ս“:



## 6.

## Լ Ո Ւ Ր

Եր կաց մանկաւիկ, տապ եւ անապար,  
Թթամբիր նժոյզդ եւ հեծիր արագ,  
Թռի՛ր, սլացի՛ր թէ դաւս, թէ անտառ,  
Դեպի բագաւոր Դունկանի դղեակ:

Միւր ախոռը գաղտնի ամենից,  
Եւ երբ որ տեսնես ախոռապէտին,  
Հարց ու փորձ արա.— „Իր աղջիկներից  
Դունկանը որի՞ն է մարդու տալիս“:

Եւ երէ ասի— „Սեւաներ աղջկան“—  
Ասա յետ բոլիր եւ իսկոյն լուր բեր.  
Իսկ երէ ասի.— „Շիկաներ աղջկան“—  
Ասա կարող ես տա էլ չը տապել:

Կը զնաս այնտեղից իսկոյն ինձ համար  
Կ'առնես վարպետից մի ամուր պարան,  
Եւ դանդաղ ժալով, անխօս եւ անբառ,  
Կը բերես ինձ այն իբրեւ պատախան:



## Խ Բ Ա Տ



այրն ասաց թիրեռին,  
„Լապտերից զգուշացի՛ր“.  
Բայց նա մօր խօսերին  
Զե նայում ուշադիր:

Լոյսի մօս բռչկոտում,  
Թրքում է մեղմիկ.  
Մայրն ասում էւ նշում—  
„Թիրեռնի՛կ, թիրեռնի՛կ“:

Խենք փոքրիկ, զիծ փոքրիկ,  
Կրակն է մեզ հրապուրում.  
„Վա՞յ մեզ, խեղն թիրեռնի՛կ,  
Այրուեցիր բոցերում“:

Մահ ստացաւ նա բոցից,  
Բոցն այրում շարունակ.  
— „Զգուշացի՛ր աղջկանից,  
Ա՛յս որդեակ իմ, սրդեակ“:



## Ա Ն Զ Ա Տ ՈՒՄ



Երեած էի կալմի վրայ,  
Հաւուում ամեն մի ալիք.  
Նաւս շարժւում է ահա—  
Դէ՛, մնա՛ս բարեւ, հայրենիք:

Ես տեսնում եմ մի տնակ,  
Սիրածն է այնտեղ ապրում.  
Ես դիտում եմ շարունակ—  
Բայց սիրածիս չեմ տեսնում:

Ա՛յս, հոսեցէք արցունիներ,  
Տարեկ խաւարն իմ աչֆից.  
Հիւանդ սիրս իմ, մի՛ պայրից  
Հսկայական այս վետից:

## Յ Ի Ր Ա Ւ Ւ



Եր զալիս է գարուն եւ արեւը փայլում—  
Ծաղիկներ եւ ծառեր բացւում են, բուրում.  
Երբ լուսինը սահում եւ ծափում երկնիցից—  
Ասղերն էլ ծագում եւ լողում են յետեւից.  
Երբ երգիչը տեսնում զոյզ բաղցրիկ աշխիներ—  
Եր նողու խորենից հնչում են սեր երգեր:  
Բայց երգեր եւ ասղեր եւ ծառեր ու ծաղիկ,  
Լուսինի ըող, արեգակ եւ աշեր անուշիկ,  
Որքան էլ մեզ դիւրեն, որքան էլ հիացնեն,  
Բայց դարձեալ աշխարհին միայն դրան չե՛ն ներիք:




ՓԵՍՔԱԿԱՆ  
ԻՆՏԵՐՄԵՅՈ

*Lyrisches Intermezzo*

1822 - 1823.





„հմ տանջանքներ, իմ վշտեր  
ես այս գրքումն եմ դրել.  
Երբ որ սա բանաս—  
Սիրոս կը բանաս“:

### ՆԱԽԵՐԳԱՆՔ

պրում եր մեկ տապես, համբ եւ տիուր,  
Այսերը զունաս, այսերը նիհար.  
Նա իր սեւ մժերին եղած անձնատուր,  
Դողդոց խայերով ուղում եր բափառ.  
Եւ երբ տեսնում էին ման զալիս նրան  
Այնպէս երերուն եւ այնպէս ձախիկ՝  
Բրէջում էին կոյսեր ու ծաղիկ:

Քաւում եր շատ անգամ տիուր եւ տրում,  
Մարդկանցից հեռո՛ւ, մի խաւար անկիւն.  
Չեռերը բախծալի մեկնում եր օղում,  
Սակայն նսած եր անձայն, անհնչիւն:  
Նա այդպէս սպասում եր ուժ կէս զիւերին—  
Երբ դուռը զարկում եւ լսում տարբեր  
Երածութեան եւ երգի ձայներ:

Ահա ներս է զալիս նրա սիրելին,  
Փրփուրի նման շրջող հագուստով,  
Ինչպէս գարնան մի վարդ, որ արշալոյսին  
Փուռում է, ծաղկում դիւրիչ զոյներով:  
Ուսկեփայլ խոպոպներ ուսերին բափուած,  
Գրաւիչ աշքերը բարեւում նրալառ—  
Եւ սիրատրիկ գրկում են իրար:

Ասպետը գրկում է կոյսին սիրալառ,  
Մաւուած կմախէր կեանի առնում նորից,  
Այսերը կարմրում, առոյգ եւ կայտառ,  
Ասպետը սրափուում է իւր մժերից:  
Սակայն նա խորամանկ խաղում, կատակում,  
Եւ զգոյշ, եւ հանդարտ պայծառ շղարշով  
Ասպետի զլուխն եր զգուում եւ ծածկում:

Եւ ասպետը յանկարծ, կարծես մի նրաբով  
Տեսնում է իրան ալիքների տակ,  
Բիւրեղի պալատում. շողով եւ ցոլեով  
Փալլում, ըլացնում աչքը շարունակ:  
Զրի դուստը նրան գրկած խանդալառ,  
Ասպետը փեսայ, խսկ ինքն իբրեւ հարս—  
Եւ իւր կոյսերը նուազում կիրառ:

Նուազում են, երգում եւ ծփում նորից,  
Երգում եւ պարում այնպէս մեղմագին—  
Ասպետը նուաղած սիրոյ բերկրանքից,  
Ամուր գրկում է իւր սիրունիկին.  
Բայց յանկարծ լոյսերը հանգչում են ջրում—  
Եւ պոես-ասպետը նսած է կրկին  
Մէնակ, իր մոա՛յը, խաւա՛ր անկիւնում:





1.

Եղածիծաղ Մայիս ամսին,  
Երբ նորաբաց կոկոններ  
Ծլում-ծաղկում են վերսին—  
Մրժիս մեջ էլ զարթեց սէր:

Գեղածիծաղ Մայիս ամսին,  
Երբ երգում են բռչուններ,  
Ես յայտնեցի իմ սիրածին  
Տենչաններս եւ յոյսեր:

2.

Արցունիներիս կարիներից  
Փռւում են վառ ծաղիկներ.  
Մրժիս դառն հառացներից—  
Սոխակների սէր երգեր:

Դէ՛, սիրի՛ր ինձ, իմ սիրունիկ,  
Ծաղիկներս նուեր ֆեզ.  
Պատուհանիդ տակ անուշիկ  
Սոխակս էլ կ'երգի նոյնպէս:

3.

Շուշան եւ վարդ, արեւ, տատրակ—  
Չեզ եմ սիրել մի ժամանակ:  
Բայց այժմ միայն ֆեզ եմ սիրում—  
Փոքրիկ, սիրուն, մաքուր, միակ,  
Միրոյ աղբիւր, անվերջ, անհուն—  
Իմ վա՛րդ, շուշա՞ն, արե՞ւ, տատրա՞կ:

4.

Երբ աչերիդ մեջ նայում եմ ես ինձ—  
Այլ եւս չեմ զգում ո՛չ ցաւ, ո՛չ կսկիծ.  
Իսկ երբ բերանիդ դրումում եմ համբոյր—  
Ապա զգում եմ ինձ առողջ եւ կազդուր:

Վասմ հանոյքով լիանում եմ ես,  
Երբ դնում եմ զյուխս կրծքիդ սիրավառ.  
Բայց երբ ասում ես—„ես սիրում եմ ֆեզ“—  
Լալիս եմ դառն եւ անմիտար:

5.

Երազիս մեջ ես նոր տեսայ  
Դևեմբեր սիրուն եւ նորաս.  
Հրեւակի պէս համես էր նա,  
Բայց վետահար եւ գունաս:

Շրբունն էր լոկ կարմիր—այն էլ  
Զո՞հ է մահուան համբոյրի.  
Եւ կը հանգչի ամբիծ լոյսն էլ  
Մաքուր, անմեղ աչերի:

6.

Ցենիր այժիս վրայ այտղ, սիրունի՛ս,  
Թող մեր արցունիներն հոսեն միատեղ.  
Ե՞կ, սեղմիր ամուր սիրտդ իմ սրժի—  
Իրանց բոցերով թող ձուլուեն այնտեղ:

Եւ երբ կը հոսի այդ մեծ բոցի մեջ  
Մեր արցունիների հեղեղը վարար,  
Եւ երբ գրկեմ ֆեզ, գրկեմ սիրատենչ—  
Ապա կարող եմ մեռնել վետահար:



7.

Ցանկանում եմ հոգիս հանգչի  
Շուշան ծաղիք բաժակում,  
Շուշանը երգ կը հառաջի  
Իմ սիրածիս վառ սիրուն:

Կը դողդողայ, կը սարսուայ  
Երզը, ինչպէս մի համբոյր,  
Որ մի անգամ տուեց ինձ նա  
Այն լուռ ժամին հրաւաբոյր:

8.

Երկնեում անշարժ  
Ասդեր անխանակ,  
Նայում սիրամաս  
Դարեր շարունակ:

Ճոխ լեզով սիրուն  
Խօսում իրար հետ,  
Բայց չի հասկանում  
Ո՛չ մի լեզուազէս:

Միայն ես հասկացայ  
Ասդերի լեզուն—  
Սիրածիս դեմքն եր  
Քերականութիւն:

9.

Երգիս թեւերով, օ՛ իմ սիրասուն,  
Թռչենք միասին հեռու մի աշխարհ,  
Դեպի Գանգեսի ափերը սիրուն—  
Կայ այնտեղ, գիտեմ, հրաւալի մի վայր:

Կայ տեղ այգի, կարսիր ծաղիկներ,  
Որ լուսնի լոյսով բուրում են նորան.  
Ուսեղ լոտոսն է սպասում անհամբեր  
Սիրած եղրիկի անոյց տեսուրեան:

Մանուշակները նայում ասդերին,  
Զրոյցներ են անում, համես քրջում.  
Վարդերը գաղտնի, իրար ականջին  
Հոտաւես տնչով նեմեար են պատմում:

Ցատկում են վիրեն երկոն եւ ուշիմ,  
Զգաս խուսափելով ամեն մի հնչիւն.  
Լաւում է հեռուից կեսպիտերալին  
Մրբան գետի ջրերի տաշիւն:

Մենք այնտեղ կ'իջնենք արմաւերի տակ,  
Ուր կը վայելենք խաղաղ՝ եւ անխռով,  
Աշխարհից նեռու, կ'ապրենք միայնակ  
Լի՛ չնաշխարհիկ մտումուններով:

10.

Լոտոսն\*) արեւի տողերով  
Պապակւում է զիսիկոր,  
Եւ սպասում է անուշներով  
Հով գիւերին մենաւոր:

Լուսինն է նորա սիրելին,  
Նորա լոյսիցն է զարում,  
Եւ իւր փուռած, տարփանեով լի  
Դեմքն է լուսնին հրապուրում:

Բացւում, ծաղկում է սիրավառ  
Եւ լուռ նայում է վերեւ.  
Դողում, լալիս է ցաւահար  
Սիրոյ տենչից յարաւեւ:

11.

Հոենոսի վիհա ջրերում,  
իւր վիրխարի տաճարով,  
Փայլում է եւ արտացոլում  
Կեօնի տաճարն իւր տեսով:

Այս տաճարում կայ մի պատկեր,  
Կառուի վերայ ոսկեայա—  
Կեանքիս մէջ ինձ տաս է լոյս տուել,  
Ոգեւորել է նա տաս:

Տիրամալրն է—ըուրջը ծածան  
Հրեսակներ եւ ծաղիկներ.  
Նորա այսեր, աչ ու բերան  
Իմ սիրածիս են նման:

12.

Դու չե՞ս սիրում, չե՞ս սիրում ինձ,  
Հոգ չէ, այդ չէ հարկաւոր.  
Բաւական է որ քեզ տեսնեմ—  
Ես զգում եմ ինձ բագաւոր:

Ատո՞ւմ եմ քեզ, ատո՞ւմ եմ քեզ—  
Վարդ բերանդ ըսնջաց.  
Քե՞ր, համբուրեմ վարդ բերանդ,  
Եւ ես կը զգամ ինձ սփոփուած:

13.

Գրկի՞ր ինձ սիրով,  
Սիրած, սիրուն կին.  
Հոգով եւ մարմնով  
Գրկիր ինձ ուժգին:

Գալարուեց, սեղմեց  
Օձը կանչողին.  
Վերթերով պատեց  
Լաօկօօնին\*)

14.

Օ՛, մի՛ երդուիր, համբուրիւր լոկ,  
Ես չեմ հաւատում կանանց երդումին.  
Քաղցր է խօսքդ. բայց ո՛չ մի խօսք  
Զի հաւասարուի ոո մի համբոյրին.  
Նա ի՞մս է, հաստա's, եւ ոչ ապարդին,  
Իսկ ի՞նչ է խօսքը—լո՞կ դատարկ հնչին:

Երդուի՛ր, երդուի՛ր, օ՛ սիրունի՞կ—  
Ես հաւատում եմ նաև լոկ խօսքիդ.  
Եւ հանոյժով փարւում կրծիդ,  
Եւ ինձ անսահման զգում եմ երշանիկ.  
Ես հաւատում եմ, օ՛ իմ սիրելի,  
Որ ի՞մս ես լնդ միւս—եւ դեռ աւելի:

15.

Մրժիս սիրածի աշխիների վրայ  
Գրում եմ ամենից սիրուն կանցններ.  
Մրժիս սիրածի բերանիկի վրայ—  
Ամենից բնեոյց եւ նուրբ սերցիններ:

Մրժիս սիրածի այսիկների վրայ  
Ես յօրինում եմ սասնաւ սիրաւէս.  
Իսկ քէ սիրած մրժիկ ունենար—  
Կը գրէի այնտեղ մի գողտրիկ սոնէս:



16.

Աչխարհն ապուց, աչխարհը կոյր  
Եւ օրեցօր անհրապոյր,  
Նա ասում է, որ սիրելիս  
Չար է, անզգայ է վետիս:

Աչխարհն ապուց, աչխարհը կոյր,  
Քեզ հասկանալ չի կարող.  
Նա չը զիտ քէ ո՞ն համբոյրն  
Ինչպէս քաղցր է եւ այրող:

17.

Սիրունիկս, պատմիր այսօր,  
Չե՞ս դու արդեօֆ մի ոգի.  
Ամառնային սօրում ծնուած  
Բանասեղձի վառ մտի:

Թայց ո՞չ, այդպէս սիրուն քերան,  
Այդպէս աչեր դիւրական,  
Այդպէս անյօշ, քաղցր եակ—  
Պուտին չեն պարտական:

Բազիլիկներ\*) եւ վամպիրներ,  
Վիշապներ եւ այլանդակ  
Կախարդական կենդանիներ—  
Պուտն այդ է ընդունակ:

Թայց դո՞ւ, ո՞ն նենգ չարութիւնով,  
Եւ ո՞ն դեմքդ ժնորհալի,  
Կեղծ, հրապուրիչ հայեացներով,  
Պուտին չես մատչելի:



18.

Փրփուրից ծնուած եակի նման  
Փայլում է սեր սեղ եւ զուարք.  
Ա՛յս, այսօր պէս է նրանք ամուսնանան՝  
Նա՛, իմ սիրած եւ օսար մի մարդ:

Ա՛յս սի՛րս իմ, սիրս իմ, այդ էլ համբերիր,  
Հանդուրժիր եւ այդ դաւաճանուրեան.  
Ներիր այդ սիրուն խենքին, ո՞հ ների՛ր,  
Ինչ էլ որ անի—ների՛ր դու նորան:

19.

Ես ոխ չունեմ երե սիրս էլ փերես,  
Ոխ չունեմ, ո՞վ անդարձ կորած սերդ իմ.  
Ադամանդներ են եեզ տողք եւ լոյս տալիս,  
Բայց ո՞չ մի տող չէ մօտենում ո՞ն սրտին:

Վաղուց տեսայ եեզ երազում մենաւոր,  
Վաղուց տեսայ սիրտդ խաւար պատելիս.  
Խոկ սրտիդ մեջ վետում օձեր բունաւոր—  
Ո՞հ ի՞նչ դժբախս, ի՞նչ բռուառ ես սիրելիս:

20.

Դու դժբախս ես, զիտե՞մ, բայց չեմ զայրանում.  
Մեզ վիճակուած է տանջուել, օ՛ սիրելիս,—  
Մինչեւ մահը կը խորտակի մեր սրտեր,  
Մեզ վիճակուած է տանջուել, օ՛ սիրելիս:

Քերանիդ վրայ տեսայ ծաղրի բրբոց,  
Խոկ աշերդ փայլատակում ցասման մեջ.  
Կուրծդդ գոռոզ բարձրանում էր ալեկոծ—  
Սակայն ինձ պէս դո՞ւ էլ դժբախս ես անվեց:

Նրունեներդ ցնցում է մի լուռ կսկիծ,  
Գաղտնի վերք է սնում կուրծեղ յուզուելիս.  
Աչքիդ ցոլը մքնում գաղտուկ արցունից—  
Մեզ վիճակուած է միւս տանջուել, սիրելի՞ս:

21.

Նուազում են սրինգ եւ ջութակ,  
Հնչում փողեր շարեար:  
Իմ սիրած է պարում անյագ  
Հարանեկան աշխոյժ պար:

Մրինգ եւ բմբուկ եւ ջութակներ  
Սուլում, շաշում, նունչում.  
Մակայն դրանց մեջ հեթևակներ  
Հեծկլտում են, հառացում:

22.

Այդպէս ուրեմն, դու ինձ ընդ միւս մոռացար,  
Ինձ՝ որին դու այնպէս զերմ եւ երկար  
Սիրել ես քա փոքրիկ, քաղցր, կեղծ սրտով—  
Որի պէս կեղծ, որի պէս բաղցր բան չը կար:

Այդպէս ուրեմն, մոռացար եւ սեր, եւ վիւս,  
Որոնի սիրս ննուում եւ տանջում էին.  
Սերն եր մեծ քէ ցաւս—այդ դեռ նարց է միւս,  
Միայն զիտէմ որ երկուսն ել մեծ էին:

23.

Թէ ծաղիկներն իմանային  
Մրէիս վերերն ի՞նչ խոր են—  
Նրանի ինձ հետ կ'արտասուին  
Որ իմ վիւսս ամոնին:

Թէ սոխակներն իմանային  
Ի՞նչ հիւանդ եմ եւ տիուր—  
Նրանի ինձ կը յուսադրէին  
Իրանց երգով սիրալուր:

Ոսկէ աստղերն իմանային  
Իմ բախիծս անսահման—  
Նրանի երկներից կ'իջնեին,  
Որ ինձ սփոփէն եւ սիրս տան:

Ո՛չ ո՛, ո՛չ ո՛չ չի իմանայ  
Իմ ցաւերս—միայն նա՛,  
Նա զիտէ այդ, ով որ փօրեց,  
Փօրեց սիրսս անխնայ:

24.

Ինչո՞ւ են վարդերն այնպէս դալկահար,  
Օ՛, ասա՛ ինձ, սիրելիի՞ս.  
Ինչո՞ւ խուերում այնպէս վետահար  
Մանուշակներն են լալիս:

Ինչո՞ւ է արտոյսն այնպէս ողբազին  
Երգում կապոյս երերից.  
Եւ ինչո՞ւ արդեօֆ զերեզմանային  
Հոն է փշում յասմիկից:

Ինչո՞ւ է արեւն այնպէս բախծալի  
Շողեր սփոռում արտերին.  
Ինչո՞ւ է երկիրն այնպէս ամայի,  
Այնպէս նման ցուրտ ժիրմին:

Ինչո՞ւ եմ ինձս հիւանդ եւ տրտում,  
Օ՛, ասա՛ ինձ, սիրելիս,  
Ասա՛ ինչո՞ւ ես, ինչո՞ւ ինձ քողնում,  
Ասա՛, սիրած՝ դ իմ սրիս:

## 25.

Շատ են պատմել քեզ իմ մասին,  
Շատ են նրանք գրպարտել.  
Բայց ի՞նչ էր իմ տանջում հոգին—  
Նրանք այդ քեզ չեն յայտնել:

Հարցին տուին լուրջ կերպարան,  
Գլխաները ծանր շարժեցին.  
Ինձ շարասիրս կոչեցին նրանք,  
Եւ դո՛ւ ել հաւատացիր:

Բայց ամենից անարգ բանին  
Նրանք մնացին անտեղեակ.  
Ամենից վաս եւ խենք բանին  
Ես տեղ եմ տուել կրծքիս տակ:

## 26.

Մենք երկուսս իրար շա's, շատ ենք սիրել,  
Առանց վեճի, միտե համերախս եւ խաղաղ.  
Նաեւ յանախս ենք „Մարդ եւ կին“ խաղացել,  
Առանց կոռուի, զուարհացել ենք մենք յանախս:

Ապա կատակ, անոյշ խաղեր եւ զգուանք,  
Եւ սիրալիր համբոյրների անվերջ շար.  
Վերջն ել, իբրեւ լոկ մանկական մի բերկրանք՝  
Թաւ անտում „աշխակապուկ“ արինք պար—  
Եւ այնպէս պինդ, այնպէս խնամեռվ քազնուեցանք  
Որ այլեւս երբէ՛ չը զտանք իրար:

## 27.

Ես չեմ հաւատում այն երկնին,  
Որի մասին քուրմն է քարոզում.  
Ես հաւատում եմ միայն fn աշխերին,  
Որից երկնային լոյսն է ցոլում

Ես չեմ հաւատում այն Աստուծուն,  
Որի մասին քուրմն է քարոզում.  
Ես հաւատում եմ միայն fn սրտին,  
Ուրիշ Աստուծուն ես չեմ հանաչում:

Ես չեմ հաւատում նաեւ դեւերին,  
Ոչ ել դժոխին իր տանջաներով.  
Ես հաւատում եմ միայն fn աշխերին,  
Եւ fn դեւ սրտին, իր խայրոցներով:

## 28.

Դո՛ւ եիր միայն ամենից երկար  
Ինձ հաւատարիմ եւ ինձ հոգատար.  
Դո՛ւ եիր ինձ իմ խաւար օրերում  
Միփրառութիւն եւ սփոփանք բերում:

Դո՛ւ եիր, որ ինձ խմելիք, ուտելիք,  
Եւ երբեմն ել տալիս եիր դրամ.  
Եւ ներմակեղին հոգացիր նոյն խսկ,  
Նաեւ անցագիր—որպէս զի երամ:

Այս իմ սիրելիս, Աստուած քեզ պահի  
Շատ երկար օրեր տամից եւ ցրտից.  
Թո՞ղ նա քեզ երբէ՛ չը փոխարինի  
Այն բարիները, որ դու արիր ինձա:

## 29.

Երկիրն այնպէ՛ս մերկ էր, գծուծ եւ ժլաս,  
Բայց վերջապէս Մայիսն եկաւ ձեռնառաւ.  
Եւ ամեն ինչ բացուեց, ժպտաց սիրալիր—  
Միմիայն ես խնդալու չեմ տրամադիր:

Ծաղկած դաշտում արածում են ոչխարներ,  
Թռչունները ծլւլում են դիւրական.

Բայց դրանցից դուր չէ զալիս ինձ ոչինչ—  
Այդ բոլորը թուում է ինձ ծաղրական:

Ես զգւում եմ, ձանձրացել եմ մարդկանցից,  
Քարեկամիս անզամ տեսնել չեմ ուզում—  
Որովհետեւ քե'զ, սիրունի՛ս, բաղցրիկի՛ս,  
Մարդիկ արդէն „յարգոյ տիկին“ են կոչում:

## 30.

Եւ մինչդեռ այնտեղ, օտարութեան մէջ,  
Երազում էի, մտորում անվերջ—  
Այլ ես ոյժ չ'ուներ որ սպասէր երկար  
Իմ սիրունիկս. Եւ նա իր համար  
Հարսանիի զգես կարեց բանկազին,  
Եւ գրկեց, փարուեց ամենախենքին:  
Օ՛, այնպէս նուրբ է, այնպէս գեղեցիկ  
Իմ սիրունիկս, այնպէս շնորհալի.  
Աչեր—մանուշակ եւ այսեր—վարդիկ  
Ծաղկում են, այրում են տարեցտարի,  
Նա աչիս առաջ է մի՛շ եւ անդադա՛ր.  
Ինչպէ՞ս բողի նրան—ա՛խ յիմար, յիմար...

## 31.

Մանուշակ աչեր,  
Այտիկներ ներմակ,  
Շուշան բարիկներ  
Բացուած եւ ծաղկած—  
Միայն սրիկն է ընդմիւտ բառամած:

## 32.

Աւխարհը դիւրիչ, երկինքը վերեւ  
Կապոյս, խսկ օդը անոյտ եւ քերեւ,

Վաղորդեան ցողով պէճածին տալիս,  
Ծաղիկն է կանչում կանաչ մարգերից.  
Եւ շուշան մարդիկ անհոգ զուարենանում—  
Բայց ես կ'ուզէի գրկել սիրածիս,  
Պառկել նորա հետ ցուրտ գերեզմանում:

## 33.

Սնուշիկս, երբ որ խաւար  
Գագաղիդ մէջ կը նիրհես—  
Ես ել կ'իջնեմ ներքեւ յօժար,  
Եւ կը գրկեմ այնտեղ քեզ:

Կը համբուրեմ, սեղմեմ ամուր  
Քեզ, անըո՛նչդ, գունա՛ս, լո՛տ.  
Եւ լա՛ց, եւ դո՛ղ, եւ աղաղակ—  
Միջնեւ դառնամ մի դիակ:

Մեռածները կէս գիշերին  
Վեր են կենում, պար կապում.  
Միայն երկուսս միասին  
Գրկած կը մնանք վիրապում:

Մեռածներն ահեղ դատին  
Վեր կը կենան սարսափով.  
Միայն երկուսս միասին  
Պառկած կը մնանք անվրդով:

## 34.

Հիւսիսում, մերկ բլրի վերայ  
Մի եղեւին կանգնած մէնակ  
Նեցում է եւ ծածկուած է նա  
Զիւն ու սառցով ինչպէս վերմակ:

Եւ երազում տեսնում է նա,  
Որ հեռաւոր արեւելքում,  
Արեւակեզ ծայռի վերայ  
Մի արմաւ է լուռ տառապում:

35.

Ոսկէ աստղեր, վառ, ժայտերես,  
Բարեւ տարեկ սիրածիս.  
Ասացէք, որ տաճշում եմ ես,  
Բայց հաստատ եմ երդումիս:

36.

(Գլուխն ասաց.)

Ա՛խ, կ'ուզէի արռու լինել,  
Եւ սիրելիս ինձ վերայ  
Հանգստանար եւ կոխվրտէր—  
Բայց ես չեի տրնջայ:

(Սիրտն ասաց.)

Ա՛խ, կ'ուզէի լինել բարձիկ՝  
Ասեղներով ինձ ծակէր.  
Այդ կը լինէր ինձ անուշիկ  
Որքան էլ խոր ծակձկէր:

(Երգն ասաց.)

Ա՛խ, լինէի բղբի կտոր  
Եւր զանգրաներ հիւսերին.  
Եմ մեջ դրած տունչ, կեանի, բոլո՞ր,  
Կ'ընջայի ականջին:



37.

Ա՛խ, սիրածս հեռացաւ—  
Ես մոռացայ ծիծաղել.  
Սիրսս պատեց հոգս ու ցաւ—  
Ել չեմ կարող ծիծաղել:

Ա՛խ, ես կորցրի սիրածիս—  
Ես մոռացայ արտասուել.  
Սիրսս հախում է վետից—  
Բայց չեմ կարող արտասուել:

38.

Իմ անսահման տաճանեներից  
Փոքրիկ երգեր եմ հիւսում.  
Նրանք հնչուն թեւիկներով  
Դեպի սիրածս են բռչում:

Նրանք գտան իմ սիրածին,  
Բայց վերսին յետ դարձան,  
Եւ ողբում են. բայց չ'ասացին—  
Նորա սրտում ինչ տեսան:

39.

Ո՛չ, ես դեռ չեմ մոռանում,  
Օ՛, իմ սիրած, անոյշ կին,  
Որ ինձ էին պատկանում  
Քո մարմինն, եւ հոգին:

Դեռ կ'ուզէի ես օգտուել  
Փափուկ, ջամկէլ բո մարմնից.  
Հոգիդ կարող ես բաղել—  
Բաւ է նաև իմ հոգին:

Յերեկով անվերջ բափառում էի  
Գառն մժերիս մէշ խորառողուած,  
Եւ այնպէս տիուր, այնպէս համը էի,  
Որ դիտում էին մարդիկ զարմացած:

Դիւերն աւելի լաւ էր ինձ համար—  
Լուռ, դատարկ էին բոլոր փողոցներ.  
Միմիայն սոուերս էր ես վեսահար  
Պտտում էինք համը եւ անտարբեր:

Աղմկող բայլով կամուրջն էլ անցնում,  
Եւ շարունակում մենաւոր ուղին.  
Ամպերի տակից լուսինը նայում  
Եւ բարեւում էր լուրջ եւ տիազին:

Կանգ էի առնում ոռ տանդ դիմաց,  
Աչքերս անբարք դեպի վեր յառում,  
Եւ դիտում էի սիրս խոցսուած  
Քո պատուհանի եւ անվերջ դիտում:

Դիտե՛մ, շատ անգամ ոռ պատուհանից  
Նայել ես ներքեւ եւ տեսել ես ինձ  
Կանգնած, լուսնեակի մեղմ ըողերի տակ  
Ինչպէս մի կորող—անշարժ եւ մենակ:

Երիտասարդը սիրում է կոյսին,  
Բայց կոյսն իւր համար ընտել է միւսին.  
Միւսն էլ սիրում է մի ուրիշ աղջկան,  
Եւ կին է առնում նա այդ ուրիշին:

Կոյսը վետացած մարդու է գնում  
Նոյն խոկ առաջին նենց պատահածին.  
Խոկ երիտասարդն այդ բանից տիրում,  
Եւ ափսոսում է անցած, զնացածին:

Ես ուզում եմ բաժին տալ,  
Ներշնչել ենք իմ հոգին,  
Եւ ենք զրկել եւ դառնալ  
Մի հոգի եւ մի մարմին:

Մարդիկ զարդարուած, անհոգ եւ խաղաղ,  
Դաշտում, անտառում զբունում են ուրախ.  
Խնդում, ցատկում ուլերի նման,  
Եւ բարեւ տախս սիրուն բնութեան:

Ելացած աչքով դիտում են նրանք,  
Թէ ինչպէս շուրջը ամեն ինչ փրրում,  
Եւ ննջուկների բայցը զեղգեղանիք  
Ուշադիր մտքով եւ ազան լսում:

Մակայն սենեակիս դուռ եւ պատուհանն  
Ամուր ծածկում եմ մուք վարագոյրով.  
Իմ գիւերային ծանօթ ուրուականն  
Ինձ այցելում է նաև ցերեկով:

Իմ հին սէ՞րս է—որ յայտնում է,  
Եւ մեռեալների աշխարհից իջնում.  
Նսում է ինձ մօս եւ արտառում է  
Եւ դառն ցաւով սիրս է նմում:

Հին, հին պատկերներ անցած օրերի  
Ելնում են իրանց լուռ ժիրիմներից,  
Եւ ցոյց են տախս թէ ինչպէս էի  
Սպրում ես առաջ, ոչ հեռու ենցից:

Տեսայ երազում արքայադսեր,  
Այսերը զումատ, այսերը նիհար,  
Թմբիների տակ տարփանին նուեր  
Նստած էինք մենք եւ գրկած իրար:

”Ես չեմ ցանկանում ո՞չ զահը քո հօր,  
Չեմ ուզում ո՞չ ել իւր ոսկէ գայսոնն,  
Եւ ո՞չ ակնազարդ բազը փառաւոր—  
Ես բե՛զ եմ ուզում, օ՛ իմ սիրատուն“:

”Անկարելի՛ է, ասաց նա վետս,—  
Զե՞ որ դազաղումն եմ արդեն ապրում,  
Եւ միմիայն զիշերն եմ զալիս բեզ մօս,  
Որովհետեւ բեզ շա՛ս, շա՛ս եմ սիրում:“

Նստած թերեւ նաւակում  
Ես եւ իմ սիրելին—  
Խաղաղ զիշեր. մենք սահում  
Հեռաւոր ջրուղին:

Ոզիների պերճ կղզեակ  
Նկարում լուսնի տակ,  
Հնչում ձայներ հրաւաբար,  
Խոկ ամպեր կապում պար:

Հետզինետ հաղցրաձայն  
Թէ՛ հնչում, թէ՛ ծփում—  
Անմիտքար մենք միայն  
Միշտ առաջ ենք սահում:

Հին պատմութիւն է եւ յայտնի է նա,  
Սակայն շարունակ է մի՛ւս նոր է մնում.  
Եւ խորտակում է սիրտն անխնայ,  
Երկ որ մեկին պատահի կեանեում:

Բարեկամութիւն, սեր եւ գիտութիւն—  
Այս երեք բանն է մարդկանցից յարգուած.  
Ես ել եմ պատում, ամեն տեղ վմտում—  
Բայց, ա՛խ, ո՞չ մի տեղ չեմ գտնում նրանց:

Երբ հնչում է մի երգիկ,  
Որ լսել եմ սիրածից—  
Սիրս նմլում է սաստիկ  
Անասելի մի կսկիծ:

Եւ մի անյաղը ցանկութիւն  
Ինձ ժարշում է դեպ անտառ—  
Այնտեղ արցունիք է դառնում  
Վիշտ անհո՛ւն եւ անծա՛յր:

Նազերի դիրքով բոլոր ծաղիկներ  
Նայում են դեպի պայծառ արեգակ.  
Եւ դեպի ծովն են շատում անհամբեր  
Կարկաչող աղբիւր եւ խայտող վտակ:

Երգերս բոլոր տիսո՛ւր, վետքե՛կ,  
Թռչում են դեպի իմ պայծառ սերս.  
Ա՛խ, տարե՛ք ձեզ հետ, երգեր սրաբեկ,  
Իմ արցունեներս, իմ հառաչներս:

48.

Հին օրերի հեմեաբներից  
Մի սպիտակ ձեռք կանչում է ինձ.  
Եւ լուս եմ անոյշ երգեր  
Կախարդական մի աշխարհից:

Ուր ընկնեռում են մեծ ծաղիկներն  
Երեկոյեան ոսկե տողում,  
Եւ իրեւ նուրբ սիրահարներ  
Իրար դեմքն են բների նայում:

Ուր ծառերը սօսափիւնով  
Հնչեցնում են խմբով մի երգ.  
Եւ վտակներ կարկաշիւնով  
Սահում, ցայտում ինչպէս պարերգ:

Ա՛յս, ո՞ւր, և թէ կարողանամ  
Թոշել այնտեղ, ապրել բաղրիկ,  
Բոլոր վետրս մոռանամ,  
Ապրեմ ազա՞ս եւ երջանիկ:

Ա՛յս, այդ աշխարհն այնպէս չնաղ,  
Որ երազում եմ ես յանախ—  
Արշալոյսին հանդարտ եւ լուռ  
Չքանում է ինչպէս փրփուր:

49.

Սիրում էի մեզ եւ սիրում եմ դեռ,  
Եւ երեւ նոյն խալ աշխարհը բանդուեր—  
Եւր փլատակների միջից տակաւին  
Սիրոյս բոցերը դուրս կը ժայթիին:



50.

Ամառուայ մի պարզ, փայլուն առաւօս,  
Պարտիզում մենակ զրօնում եմ ես լուռ.  
Ծաղիկներն այնտեղ տենջում կրոն—  
Սակայն ես անխօս շրջում եմ տիտուր:

Ծաղիկներն այնտեղ խօսում, տենջում,  
Եւ բարեւում են ինձ կարեկցաբար.—  
”Օ՛, մի բարկանար ծաղիկներիս վրայ,  
Տիտուր եւ դժգոյն պոես-սիրահար“:


51.

Ահա փայլում է իմ սեր դարձեալ  
Իւր նախկին, ազդու գեղեցկութիւնով,  
Ինչպէս մի հեմեար, տիտուր եւ մռայլ,  
Պատմած ամառուայ խաղաղ գիւերով:

—”Դիւրական այգում լոիկ եւ մնջիկ  
Երկու սիրահար զրօնում են մենակ.  
Լուսինը դողդոց տողողում մեղմիկ,  
Եւ թիւրի մեջ երգում է սոխակ:

”Կոյսր լուռ կանգնեց ինչպէս մի արձան,  
Ասպետը չոգեց սիրով տոգորուած.  
Բայց հասաւ արդեն կատաղի հսկան,  
Եւ երկչոս կոյսր փախաւ սարսափած:

”Ասպետը փոռուեց արխինաւաղախ,  
Հսկան անվլրդով այրը յետ դարձաւ.  
Եւ երբ ինքս էլ կը մնեմ դագաղ—  
Գիտցիր, հեմեարն էլ արդեն վերջացաւ“:



52.

Անգրստէն տանջեցին,  
Չարչարեցին ինձ նրանք—  
Ումանք կամ իրանց սիրով,  
Կամ ատելութեամբ ումանք:

Հացս բունաւորեցին,  
Թոյն ածեցին ջրիս մէջ—  
Ումանք կամ իրանց սիրով,  
Կամ ատելութեամբ անժեզ:

Բայց նա՛, նա որ ամենից  
Անխիղն տանջել է, խաբել,  
Նա երբէք չէ՝ սիրել ինձ,  
Եւ երբէք էլ չէ՝ ատել:

53.

Կիզիչ ամառ է բացուել  
Սյաներիդ վրայ գեղեցիկ,  
Խոկ դառնաւունչ, ցուրտ ձմեռ  
Փարաբել է քո սրտիկ:

Բայց կը զայ մի ժամանակ,  
Եւ կը տեսնես, օ՛ հրետակ,  
Զմեռը կ'անցնի այսերիդ,  
Խոկ ամառը սրտիկիդ:

54.

Երբ որ երկու սիրահար  
Բաժանեւում են իրարից—  
Չեռք են տալիս նրանք իրար,  
Հառաջում են եւ լալիս:

Բայց մենք արցունք չենք քափել,  
Չենք հառաչել ինչպէս նրանք.  
Մեզ յետոյ են այցելել  
Արցունքներ եւ հառաչանք:

55.

Թոյն է կարում իմ երգերից—  
Այլ կերպ չեր կարող լիներ.  
Ծաղիկ կեանքս, օ՛ սիրելիս,  
Դո՛ւ ես բոյնով կործանել:

Թոյն է կարում իմ երգերից—  
Այլ կերպ չեր կարող լիներ.  
Իմ սրտիս մէջ, օ՛ սիրելիս,  
Դո՛ւ ես նասած եւ օձեր:

56.

Իմ հին երազս ես նորից տեսայ.—  
Մի չնաշխարհիկ մայիսեան զիւեր  
Մենք նասած էինք թմբիների տակ,  
Եւ երդւում իրար անվախան մի սեր:

Անվերջ երդումներ, զրոյց, քրիզ խոհեմ,  
Եւ համբոյների անբնիաս մի շար.  
Եւ որպէս զի երդումս յիւեմ,  
Չեռսս կծեցիր դու մոլեգնաբար:

Կապոյս աչերով օ՛ իմ սիրական,  
Սուր ատամներով, սպիտակ, գեղեցիկ—  
Երդումն արդէն շատ էր բաւական,  
Սակայն կծելու բնաւ չը կար կարիք:



Կանգնած եմ լեռան գտգարին  
Եւ դարձել եմ զգայուն.  
Եւ հառաջում եմ սիրազին—  
„Ա՞յս, լինեի մի բռչուն“:

Ա՞յս, լինեի մի ծիծեռնակ,  
Կը բռչէի ես քեզ մօս.  
Կը հիւսէի փոքրիկ բնակ  
Պատուհանիդ տակ կարօս:

Ա՞յս, լինեի մի դեղանիկ,  
Զրոյց կ'անեի սրտիդ հես.  
Գիտեմ, որ դու, իմ սիրունիկ,  
Սիրում ես զրոյցն անհերեք:

Ա՞յս, լինեի գոնէ սոխակ,  
Կը բռչէի ես քեզ մօս,  
Եւ կ'երգէի ծառերի տակ  
Երգս մինչեւ առաւօս:

Իմ կառքս դանդաղ զլորում է գարնան  
Անտառի խայտող, բարմ կանաչներով,  
Եւ ծաղկած հովտով, որ կախարդական  
Գոյներ է սփոռում արեւի շողֆով:

Նստած եմ մենակ, խորհում, մտածում  
Եւ մտաբերում եմ իմ սիրածիս.  
Եւ երեք սուներ դիմացս ելում,  
Եւ ինձ կառքի մեջ բարեւ են տախս:

Նրանք բռչիուում, դեմքը ծռմուում,  
Ցատկում մերք երկչոս եւ մերք հեղմորեն,  
Եւ ինչպիս մօռւ օղակներ կազմում,  
Եւ երջալով անյայտանում են:

Երազիս մեջ լաց եղայ ես—  
Տեսայ քեզ գերեզմանում.  
Զարթեցի եւ աղբիւրի պէս  
Արցունեներ էի բախում:

Երազիս մեջ լաց եղայ ես—  
Տեսայ, բռլել էիր ինձ.  
Ես զարթեցի եւ գառնապէս  
Լալիս էի կսկիծից:

Երազիս մեջ լաց եղայ ես—  
Տեսայ, սիրում ես ինձ դեռ.  
Զարթեցի, բայց առաջուայ պէս  
Հոսում էին արցունեներ:

Զի անցնում զիւեր, որ քեզ չ'երազեն  
Ինձ բարեւ տախս սիրով, ժայտադէմ.  
Մինչ ես շարունակ դառն հեծկլտում,  
Եւ համբուրում եմ ոտիկդ սիրուն:

Դու նայում ես ինձ տխուր եւ վիաս,  
Եւ փոքրիկ զլուխոդ շարժում ես երեր.  
Աչիկներիցդ զլորում են հանդարս  
Արտասուննեների բայց մարզարիտներ:

Ա՞հ, ինչպէս տաք է, ինչպէս դուրեկան  
Նորա սենեակում, կոկ եւ լուսավառ.  
Սյանեղ սպասում է ինձ իմ սիրականն—  
Ես նորա զիրկն եմ ընկնում սիրավառ:

Տերեւների մեջ բամին սոսափում,  
Եւ ըսնջում է կաղնին զարաւոր.—  
”Ի՞նչ ես կորցրել, ի՞նչ ես վիճուում  
Քո խենք ցնորդով, խե՞նք հեծուոր“:

## 63.

Պայծառ երկնելից  
Մի ասդ վայր ընկաւ.—  
Միրոյ ասդն եր այն,  
Որ սահեց, բռաւ:

Խնձորի ծառից  
Տերեւ ու ծաղիկ  
Ընկան եւ հողմին  
Դարձան խաղալիք:

Լճում լող տալով  
Կարապն է երգում,  
Եւ սուզում երգով  
Հեղուկ ժիրիմում:

Լուռ է եւ խաւար,  
Զը կան ծաղիկներ,  
Մարեց ասդը վառ,  
Կարապն է լոել:



## 70

Եւ գաղտնի մի խօսք ըսնջում ես ինձ,  
Տալիս ես մի փունջ սպիտակ վարդերից.  
Զարքում եմ—բայց, ա՛խ, ոչ խօսքն եմ յիշում,  
Եւ ոչ ել փունջն եմ տեսնում իմ ձեռքիս:

## 61.

Հողմ եւ անձրեւ աշնան մրին  
Շառաշում են կատաղած.  
Արդեօֆ ո՞ւր է իմ սիրելին—  
Խղճուկ, երկչո՞ս արարած:

Պատուհանին կրթնած, անզարդ  
Եւ մենաւոր սենեակում,  
Արցունենալ լի՛ աշերն անբարք  
Նա յառել է խաւարում:

## 62.

Աշնան բամին է սահում ծառերով,  
Գիշերուայ օդը ցուրտ է եւ խոնաւ.  
Ամուր փարարուած զորց վերարկուով,  
Անցնում եմ ձիով անտառն ուշագրաւ:

Հեծնում եմ, բայց իմ մտերիս երամն  
Թռչում են ինձնից աւելի արագ.  
Նրանք ինձ օդով, փետուրի նման,  
Թռցնում են դեպի սիրելուս տնակ:

Շները հաչում, տապով ծառաներ  
Դիմաւորում են վառ կերպներով.  
Շխչխացնելով իմ խրաններն,  
Ես բարձրանում եմ ասինաններով:

Շատ բան ունեմ մեջը դնելի,  
Բայց դեռ զաղսնի է ձեզնից.  
Դագաղը պէս է մեծ լինի  
Հայդելբերգի տակառից:

Դագաղը պէս է հաս լինի,  
Պատերն ամուր տախտակից.  
Պէս է աւել երկար լինի  
Մայնց բաղաքի կամրջից:

Թող գան տաներկու հսկաներ,  
Աւելի մեծ եւ ուժեղ,  
Քան թէ Կեօնի սուրբ տաճարի  
Կողումբի արձանն ահեղ:

Դագաղը նրանք պէս է տանեն,  
Եւ ընկդմն ծովը խոր.  
Զէ՞ որ այնպէս մեծ դագաղին  
Մեծ շիրմ է հարկաւոր:

Դագաղն այնպէս ծանր է եւ մեծ  
Գիտէ՞ս արդեօֆ թէ ինչու.  
Որովհետեւ ես նրա մեջ  
Սկ' ոս վիշտս եմ դնելու:



## 64.

Կես զիւերը ցուրտ էր եւ լուռ,  
Ես որզում էի անտառում տիտուր.  
Զարբեցրի ծառերն—եւ կարեկցաբար  
Շարժեցին նրանք զիսները դալար:

## 65.

Քառուղիի վրայ իրարից մօտիկ  
Անձնասպաններն են բաղուած միմիան.  
Բնում է այնտեղ մի կապոյշ ծաղիկ—  
Անձնասպանների ծաղիկն է այն:

Քառուղիի վրայ կանգնած եմ տիտուր,  
Եւ հառաչում եմ. ցուրտ է զիւերուան.  
Խոկ լուսնի լոյսով օրօրւում է լուռ  
Անձնասպանների ծաղիկը միայն:

## 66.

Ուր էլ որ լինեմ այսօրուանից  
Շուրջ տիրում է բանձր, անյոյս խաւար,  
Քանի որ այլեւս չէ պսպղում ինձ  
Սկ' ոս, աշենիդ լոյսը խանդավառ:

Մարել է արդեն ինձ համար անդարձ  
Սիրոյ բաղցը աստղի շողքը դիւրական.  
Արդեն ոսքիս տակ անդունդ է բացուած—  
Ալանի՛ր ինձ, զիւե՞ր յաւիտենական:

## 67.


Հի՞ն, չար երգեր, կծու երգեր,  
Եւ երազներ չարախաղ,  
Ժամանակ է, պէս է բաղել,  
Շո՞ւս, բերկ մի մեծ դագաղ:

**Q B F U P U F 2**

**Die Heimkehr**

1823—1824.





## 1.

ուր եւ խաւար իմ կեանքում  
Միւածիս դէմբն եր ցոլում.  
Բայց նա արդէն չխացաւ,  
Շուշզ գիւեր է տիրում:

Երբ խաւարի մէջ մանկան  
Ա՞ն է պատում սարապի—  
Նա երգում է բարձրածայն,  
Որ անձուկը փարատի:

Ինչպէս անմիտ մի փոքրիկ  
Երգում եմ ես խաւարում,  
Երգս չէ՝ հնչում բաղրիկ,  
Բայց նա բախիծ է վանում:

## 2.

Ա. ին, ինչո՞ւ եմ այսպէս տիուր,  
Այս ի՞նչ է, չեմ հասկանում.  
Մի հին հեթեար այս ամբողջ օր  
Մտիցս չէ հեռանում:

Օդը բարմ է, օրը մքնում,  
Հոենոսն հոսում անվրդով.  
Սարի զազարն է պապում  
Վերջալոյսի տողերով:

Քարածայոի վրայ նսած է  
Մի հրաւալի, սիրուն կոյս.  
Ոսկով փայլում եւ սանդրում է  
Կոր հիւսերը ոսկելոյս:

Սանդրում է նա ոսկե սանդրով,  
Եւ երգում է մեղմագին.  
Եւ ազդու է, եւ հրապուրով  
Նորա երգի մեղեդին:

Եւ լուղորդին իր նաւակում  
Պատեց մի վիշ սրտահեւ.  
Ծովածայուեր նա չէ տեսնում,  
Անքարը նայում է վերեւ:

Զգո՞ւմ եմ, վերջը նրանց կը կլանի  
Սահող գետը խոր եւ լայն,  
Նրանց կորսի կը մատնի  
Դիւրիչ երգով Լորելայն\*):

## 3.

Միրս տիուր, սիրս վիաս—  
Մայիսն է ժայռում զուարք.  
Մարտկոցի վրայ բմբիի տակ  
Կանգնած եմ ես միայնակ:

Ներքեւ ծիում է եւ հոսում  
Կապոյս, սիրուն մի գետակ,  
Նաւից մանուկն է ձուկ որսում  
Եւ սուլում է սուլերի տակ:

Գետի միւս կողմ խառնում իրաւ  
Գոյնգոյն փոքրիկ պատկերներ—  
Վիլաներ են, պարտեզ, անտառ,  
Մարդիկ, կովեր եւ նօսեր:

Աղջիկները լուաց անում,  
Թռչկոտում են խոտի մէջ.  
Ալմասներ և շուրջը ցանում  
Հրաղացն եւ նոռում անվերջ:

Ահա եւ մէկ հին առարակ,  
Ուր կայ մի խուց գունաւոր,  
Այնտեղ նեմում է շարունակ  
Կարմիր զգեստով մի զինուոր:

Նա խաղում է իր հրացանով,  
Սուխնն արելից պէծ տախ,  
Ուսն է առնում, նեան դնում—  
Զինուո՞ր, նեան դի՞ր սրտի:

## 4.

Թափառում եմ ես անտառում,  
Եւ արտասում յուսահաս.  
Տորդիկն է ցատկում ծառերում,  
Հարցնում—„ինչո՞ւ ես վիատ“:

Քո բոյերդ, սիրուն տորդիկ,  
Ծիծեռնակներն են տեղեակ.  
Նրանք եին հիւսել բնիկ  
Սիրոյս պատուհանի տակ:

## 5.

Սիրուն աղջիկ, ձկնորս աղջիկ,  
Մօս բեր նաւակդ եզերին.  
Տուր ձեռքդ ինձ եւ անուշիկ  
Զրուցենք ափին միասին:

Գլուխդ սրտի դիր համարձակ,  
Վասահացիր իմ սրտին.  
Զի՞ որ յանձնում ես շարունակ  
Կեանեդ կատաղի ծովին:

Սիրս ծովին շատ է նման,  
Նա էլ է փորորկալի.  
Նրա խորեում նոյնպէս շատ կան  
Մարգարիտներ հրաւալի:

## 6.

Ահա ծագեց արդին լուսինն,  
Եւ փաղաքեց ալիբներ.  
Ես գրկել եմ իմ սիրածին  
Եւ զարկում են մեր սրտեր:

Սիրունիկիս գրկումն եմ ես,  
Ծովի ափին անվրդով.  
„Ի՞նչ ես լսում բամուն այդպէս  
Սպիտակ ձեռքդ ցնցելով“:

„Ո՛չ, այդ բամին չէ մռնչում—  
Այլ դժբախս ջրահարսեր,  
Դժբախս բոյերս են հառաջում,  
Որոնց ծովն է կլանել:

## 7.

Լուսինն ամպի վերայ բազմած,  
Ինչպէս նարինջ հսկայական,  
Գործ ծովի վրայ լայն շերտ զցած  
Իր տողերով կախարդական:

Թափառում եմ ափին մէնակ,  
Որտեղ փըրւում են ալիքներ,  
Զրից լսում եմ շարունակ  
Անյօշ ձայներ եւ հնչիւններ:

Գիշերն անվերջ, գիշերն երկար,  
Սիրս էլ չէ կարող սպասել.  
Ելք' ջրից, բռնեցէ՛ պար,  
Դիւթեցէ՛ ինձ, ջրահարսեր:


Առեւ մարմինս եւ հողիս,  
Փաղաքեցէկ, գրկեցէկ ինձ,  
Համբոյրներով, երգով կեանիս  
Եկէ՛, ծծեցէ՛ իմ կրծքից:

## 8.

Փշեց, սուլեց հողմը սաստիկ,  
Հազար ջրի սպիտակ վարժիք,  
Մտակում է ալիք յորձանիք—  
Մոնչում են, դողում նրանի:

Շուրջը պատել մռայլ, խաւար,  
Տարափ տեղում կատաղաբար,  
Կարծես ծովն եւ մուր գիշերը  
Յանկանում են կլանել իրար:

Սեղ կուշ եկած կայմի վերայ,  
Որորն է զիլ ծուռմ, նշում,  
Եւ ասրափած ճախրելով նա  
Դժբախտութիւն է մեզ գուժում:



## 9.

Ծովը մըուշ պատեց խոժոն,  
Երեկոն իջաւ դանդաղ,  
Ալիքները խորհրդաւոր  
Ծփում են մեղմ եւ խաղաղ:

Զրից ելաւ, նսեց ինձ մօս,  
Մի ծովահարս փրփռս,  
Ցայտում են ջրի ըղարեի տակ  
Նորա ստիճնները սպիտակ:

Գրկեց նա ինձ, սեղմեց ամուր,  
Փարուեց անդիմադրելի.  
—Բա՛ւ է, ցաւում է, հանդիս տուր,  
Օ՛ ծովահարս նրաւալի:

—Ես գրկում եմ մեզ, իմ բաղցրիկ,  
Եւ փարւում եմ անդադար—  
Այս երեկոյ ցուրս է սաստիկ,  
Ես ուզում եմ տախանալ:

—Լուսնեակն է նայում ամպապաս,  
Մռայլ երկնելից գունաս,  
Մրազնում է աչք բացում  
Օ՛ ծովահարս նրաւազարդ:

—Ա՛խ, ո՛չ, այդպէս է մեզ բւռմ,  
Նա միշտ մռայլ է եւ քաց.  
Դա մեկ կարիլ է իմ աչքում  
Հարազա ջրից մնացած:

—Որորն է նշում ողբազին,  
Ծովն է գոռում խոռվայոյզ,  
Քո սիրտն էլ է զարկում ուժզին  
Օ՛ ծովահակ սիրուն կոյ:

—Սիրս ուժգին, բաղխում, զարկում,  
Ալեկոծում դժնդակ,  
Որովհետեւ մե՛զ եմ սիրում,  
Քե՛զ, օ՛ սիրուն մարդ—եակ:

## 10.

Ամեն օր, երբ անցնում եմ ես  
Քո տան առաջ Տյառամած,  
Ուրախ եմ, որ տեսնում եմ մեզ  
Պատուհանիդ մօս կանգնած:

Նայում ես ինձ, դիտում, զննում  
Թուխ աչքերով անքարը,  
—Ո՞վ ես դու եւ ի՞նչդ է ցաւում,  
Օտարական, հիւանդ մարդ:

Պոես եմ ես գերմանական,  
Յայտնի, իմ հայրենիքում,  
Ուսեղ իմ անունս էլ կը տան  
Լաւ անունների շարժում:

Ճշմարիս է, հիւանդ եմ ես,  
Այնտեղ շատերն են ինձ պիս.  
Ամենածան յիշիր ցաւեր—  
Եւ ցաւերս կը յիշես:

## 11.

Երեկոյեան վերջալոյսին  
Ծովը փայլում էր հեռւում.  
Մենք նասած եինք միասին  
Զկնորսի լուռ տնակում:

Մեզը իջաւ, ջուրը խառնուեց,  
Որորն է նախում օդում,  
Եւ սիրով լի ո՞ւ աչքերից  
Արցունեներ են զլորւում:

Նրանք ընկան ձեռքիդ վերայ,  
Եւ ծնկաչով դողալով,  
Ես ձեռքիդ վրայ արցունեները  
Ցամաքեցրի բերանով:

Այն օրից իմ սիրտն ու հոգին  
Հալ ու մաս են անդադար.  
Արցունեղ ինձ, օ՛ դժբախս կին  
Թունաւորեց չարաչար:

## 12.

Առուակի վրայ երազելով  
Կանգնած ես դու, սիրոյս ուռւա՛ն,  
Եւ տառապում օրօրուելով  
Իբրեւ անհուն բախծի նշան:

„Թո՛ղ ինձ, ե՛լ չեմ ուզում լսել,  
Փաղաբանեղ չէ հարկաւոր.  
Գիտե՛մ, այժմ վարդն է գրաւել  
Սիրտդ խարդախ եւ կեղծաւոր“:

## 13.

Մառախապատ պատկերի պիս  
Հեռու հորիզոնի տակ,  
Երիկնադեմ տեսնում եմ ես  
Հին եւ ծանօթ մի բաղագ:

Մի՞րէ հին երզը չես լիւում,  
Որ մի մեռած պատաճի  
Կես զիւերին իր սիրելուն  
Ռւզում էր շիրիմ տանի:

Հաւատա ինձ, սիրուն մանուկ,  
Որ ես կենդանի եմ դեռ,  
Եւ աւելի գօրեղ եմ ես  
Քան քէ բոլոր մեռածներ:

17.

Քնած էր կոյսը իւր սենեակում,  
Դողդոջ նայում էր լուսնեակ.  
Եւ նա լսում է երազում  
Վալսի մի քաղցր եղանակ:

„Նայեմ, տեսնեմ, անժամանակ  
Ո՞վ է քունս խանգարում“.—  
Կմախին էր նա, ձեսքին ջուրակ,  
Նուազում էր եւ երզում.

„Դու խոսացար ինձ հետ պարել,  
Բայց խօսքդ մնաց անկատար.  
Ե՞կ, այսօր գերեզմանատան  
Հանդէս կայ, ե՞կ, կապենք պար“:

Եւ զերբնական մի զօրուրիւն  
Յափէտակում է կոյսին.  
Կմախին երզում է, նուազում,  
Առաջնորդում է կոյսին:

Պարի, երզի, նուազի տակ  
Ռսկորները նարնատում,  
Գանզը շարժում... շարազուշակ  
Բարձրից լուսին է նայում:

Խոնաւ քամին ինչպէս գանգուր  
Շարժեց կապոյս ջրուդին.  
Թիալարս տաղտուկ, տիուր  
Զարկում է ալիքներին:

Փայլեց արեւ վերջին անգամ,  
Եւ ցոյց տուեց իմ աշխին  
Այն վայրերը, ուր յաւիտեան  
Կորցրի սրտիս սիրածին:

14.

Երջում եմ դարձեալ հին փողոցներով,  
Եւ բափառում եմ աննպատակ.  
Տեսայ վերջապէս սիրածիս տունը—  
Նա ամայի է եւ անմարդաբնակ:

Փողոցներն ինձ այմի թռում են խիս նեղ,  
Սալայատակն էլ աւերակ դարձած,  
Տները զիխիս են բափւում այնտեղ,  
Եւ ես փախչում եմ յուսահատուած:

15.

Ես այց տուի դարձեալ այն դահլիճներին,  
Ուր նա ինձ երդուեց յարատեւ մի սեր.  
Այնտեղ ուր երբեմն արտասուել էր նա,  
Այժմ վեռում էին իմեր եւ օձեր:

16.

Գիտես որ ես կենդանի եմ,  
Եւ դեռ նիրհում ես հանգիս—  
Հին զայրոյրս կը բորբոքուի  
Եւ կ'ազատի ինձ լծից:

## 18.

Ժանտ մտերում խորասուզուած  
Նորա պատկերն էի դիտում.  
Եւ սիրածիս դիմքն—ինձ բուաց,  
Կարծես դարձեալ կեանի էր առնում:

Երութեներին բորսում էր  
Զնաւչարհիկ մի ծիծաղ.  
Եւ բախծալի արտասունի էր  
Յոլում զոյգ աշխից խաղաղ:

Եւ զունարափ իմ այսերիս  
Արցունիներ եմ բափում ես.  
Ա՛խ, դեռ հաւասս չէ զալիս,  
Որ կորցրել եմ արդեն ժեզ:

## 19.

Ա՛խ, դժբախս Ատլասս<sup>ա</sup>)—պես է կրեմ  
Տառապանիների մի ամբողջ աշխարհ.  
Սիրսս կը պայրի երե համբերեմ,  
Անտանելի է այդ բեռն ինձ համար:

Օ՛սիրս իմ զոռո՞գ, ինքդ ցանկացար  
Անվերջ, անսահման երջանիկ լինել,  
Եւ կամ քե լինել անսահման բռուառ—  
Դէ՛, բռուառ ես ալժմ,— ինչո՞ւ ես սիրել:

## 20.

Ես երազ տեսայ. ասդեր եւ լուսնեակ  
Երկնից տիուր փայլփլում էին.  
Ես բռչում էի նեռու մի բաղաֆ,  
Ուր ապրում էր իմ կարօս սիրելին:

Սլացայ դեպի նորա բնակարանն,  
Եւ համբոյր տուի աստիճաններին.  
Զէ՛ որ օփուել են նրանի տաս անզամ  
Նորա զգեսներին եւ ոտիճներին:

Գիշերը ցուրտ էր, զիշերը երկար,  
Նոյնպէս եւ ցուրտ էր փշում ժարերից.  
Լուսնեակի լրյուղ զունաս եւ անքառ  
Միրելիս նայում էր պատուհանից:

## 21.

Ա՛խ, ի՞նչ է ուզում մենաւոր արցունին—  
Զուր հայեացս է պղտորում.  
Հին, հին օրերից մնացած միայնակ  
Ծփում է իմ աշխերում:

Նա ուներ երբեմն փայլուն տաս նոյրեր,  
Նորանի արդեն հոսեցին,  
Եւ իմ հանոյիս, տանջանիներիս հետ  
Կլանեց զիշերն եւ ժամին:

Արդեն չխցան ինչպէս մառախուղ  
Կապոյց աստղերն անչեղ,  
Որոնի երբեմն տանջանի եւ հանոյ  
Ներշնչեցին հոգուս մէշ:

Աւա՛ղ, սէրս էլ ինչպէս լոկ հնչիւն  
Հոսեց, չխցաւ անհետ,  
Դէին, ի՞նչ ես սպասում, մենաւոր արցունին—  
Դո՛ւ էլ հոսիր նորա հետ:



22.

Մարդիկ կարծում են որ ես  
Սիրոց եմ տառապում.  
Եւ ես ինք էլ վերջապէս  
Նոյնն էի կասկածում:

Մեծ աչքերով դու մասկիկ,  
Ասում եմ շարունակ—  
Սիրում եմ քեզ երջանիկ,  
Այրում է սիրս կրակ:


Բայց այդ ասել եմ ես քեզ  
Սենեակումս, միայնակ.  
Աւա՞ղ, երբ ներկայ էիր  
Համր էի շարունակ:

Չար հրետակներն անպատճառ  
Բերնիս դնում են փական,  
Չար հրետակներն են պատճառ,  
Որ տանջում եմ այստան:

23.

Շուշանաբոյր մատիկներիդ  
Դարձեալ մեկ-մեկ համբոյր տախ  
Կ'ուզենայի սեղմել կրծիս,  
Եւ նուաղել, եւ ողբալ:

Դիւեր ցերեկ այրում են ինձ  
Քո աչքերդ մանուշակ.  
Ասա, ի՞նչ է նշանակում  
Սուելծուածդ կապուտակ:



24.

”Մի՞քէ երբէք դու չես փորձել  
Սերդ յայտնելու նորան.  
Իւր աչքերում չե՞ս կարդացել  
Երբէք սիրոյդ պատասխան:

Կամ մի՞քէ նորա աչքերում  
Հոգու խորքը չես զննել.  
Նղբայր, չե՞ս որ այդ բաներում  
Դու աւանակ չես եղել“:

25.

Նրանք սիրում էին իրար—  
Բայց երկուսն էլ լուռ կենում,  
Եւ նայելով թշնամաբար՝  
Սիրատոյր նուաղում:

Նրանք վաղուց անջատուեցին,  
Միայն երազումն են տեսնում—  
Նրանք վաղուց վախճանուեցին,  
Սակայն իրանք չին զգում:

26.

Երբ ես ձեզ մօս ողբում էի իմ վետեր,  
Դուք ձանձրոյրով, յօրանջելով լսեցիք.  
Բայց վետերիցս երբ հիւսեցի կոկ երգեր—  
Ոզեւորուած դուք ինձ փառաբանեցիք:



27.

Մարդ, մի ծաղրիր սատանային,  
Կեանքը շատ է կարնատեւ.  
Սնոտի խօսք չէ ամենեւին  
Դժոխի կրակն յարատեւ:

Մարդ, վճարիր քո պարտերդ,  
Մեր կեանքը չէ՝ կարնատեւ,  
Որ ինչպէս միւս, կարողանաս  
Պարտ առնել այսուհետեւ:

28.

Արեւելից երեք սուրբ մոզ  
Հարցնում են ամենքին.  
— «Զե՞՞ կարող մեզ ցոյց տալ արդեօֆ  
Բերդեհեմի ուղին:

Ո՞չ փոքր, ո՞չ մեծ չը զիտէին.  
Մոգերն առաջ են զնում,  
Լուսանանանչ ոսկե աստղին  
Սնասարք հետեւում:

Յովսէփի տան զլխին կանգնեց  
Աստղը. մոգերն ներս մտան.  
Հորբը մայում, Մանուկը նշում,  
Մոգերն երգում մեղմաձայն:

29.

Սիրս ննօւում է շարունակ  
Երբ անցեալն եմ մտաբերում.  
Կեանքը բաղցը եր այն ժամանակ,  
Մարդիկ հանգիս, խաղաղ ապրում:

Այժմ ամեն ինչ իրար խառնուած,  
Աղես, տագնապ, ցաւ անվախնան,  
Կարծես վերեւ չը կայ Աստուած,  
Ներքեւ մեռած է սատանան:

Եւ ամեն ինչ ժամս եւ մռայլ,  
Ցուրտ եւ տիան, դաւերով լի,  
Երկ չը մնար սիրոյ նոյլ—  
Կեանքը կ'լիներ անտանելի:

30.

Երազում տեսայ սիրածիս՝  
Հոգսից ընկնուած պառաւ կին.  
Թուշնած, հիւանդ եւ դողածիս՝  
Փարքամ մարմինը նախկին:

Գրկում պահած մի երեխայ,  
Միւսին էլ ձեռքից բռնած,  
Դեմի, բայի, հազուսի վրայ  
Աղբատութիւն եր դրումած:

Գողդոց շրջում եր տուկայում,  
Այնտեղ պատահեց նա ինձ.  
Նա նայեց ինձ. տիուր, տրում  
Ասացի ես բախծալից:

„Գնանք ինձ մօս. դու հիւանդ ես,  
Գունատ ես եւ ուժասպառ.  
Ես կ'աշխատեմ, կը խնամեմ քեզ,  
Սնունդ կը նարեմ քեզ համար:

Նաեւ փոքրիկ եակներիդ  
Կարիքները կը նոզամ.  
Սակայն նախ են՝ զ, դժբա՛խս եակ,  
Քեզ կը սփոփեմ բարեխնամ:

Ես երբեք չեմ յիշեցնի մեզ,  
Որ սիրել եմ մի անգամ.  
Կը զայ մի օր—երբ դու մեռնես—  
Գերեզմանիդ վրայ կը լամ:

## 31.

Ա. Իս, սիրելի բարեկամ,  
Ի՞նչ ես միշտ նոյն երգն երգում.  
Հին սիրոյդ ձուերի վրան  
Ի՞նչ ես այդքան բուխս նսում:

Ա. Իս, հին պատմութիւն է այդ—  
Վառիկները կեղեւից  
Դուրս են բռչում, կչկում,  
Խոկ դու՝ զբումն ես փակում։

## 32.

Ա. Իս, մի լինեք անհամբեր,  
Եք իմ նոր երգերում  
Միայն սիրոյ հին ողբեր,  
Եւ տանջանեներ են հնչում։

Ա. Իս, սպասեցէ՛ք, կը մարի  
Այդ արձագանքն հին վեսիս,  
Եւ զուարք երգեր կը ծլեն  
Ապահնուած իմ սրտից։

## 33.

Սի՞րս իմ, սի՞րս իմ, մի վետանար,  
Հանդուրժիր ո՞ն նակատագրին։  
Ինչ որ ձմեռը խլեց, տարաւ—  
Դարունը յետ կը տայ կրկին։

Դեռ շատ բան կայ, նայիր եւ տես,  
Ուժաւրին այնպէս հրաւալի,  
Այնպէս չինադ—ինչ որ ուզես  
Սիրս իմ, սիրիր, վայելիր։

## 34.

Դու նման ես սիրուն ծաղկին,  
Նոյնպէս մաքուր, շնորհալի.  
Նայում եմ մեզ եւ իմ սրտին  
Թախիծ է սիրում գաղտնի։

Ցանկանում եմ այդ ռոպէին  
Չեռներս դնել ո՞ն զլիսին,  
Հայցել Տերից, որ մեզ պահի  
Մաքուր, սիրուն, շնորհալի։

## 35.

Այդ կը լիներ մանդ, օ՛ կոյս,  
Եւ ինքս եի աշխատում,  
Որ չը ծաղկիր ո՛չ սեր, ո՛չ յոյս  
Երբեք դեպ՝ ինձ ո՞ն սրտում։

Այդ ինձ շատ հետ եր յաջողլում,  
Թէեւ ինձ ցաւ պատճառէր.  
Բայց այժմ յանախ մտածում եմ—  
Ա. Իս, երանի քէ սիրէր։

## 36.

Երբ ես անկողնում պառկած  
Դեմքա բարձի մեջ բաղում,  
Խաւարի մեջ իմ սիրած  
Համես պատկերդ է փայլում։

Հազիւ աշխերս փակած  
Նիրհում եմ ես կիսարքուն—  
Անուրջիս մէջ իմ սիրած  
Համես պատկերդ ե սահում:

Բայց նա արշալոյսի հետ  
Չէ անյայտանում երբէք—  
Ես իմ սրտիս մէջ եմ կրում,  
Եւ գգւում ամբողջ ցերեկ:

37.

Ծիրան բերանով աղջիկ, *V*  
Աչիկներդ անուշիկ,  
Քո մասին եմ միշտ մտածում  
Իմ սիրուն, փոքրիկ աղջիկ:

Չմեռուայ զիւերն ե երկար,  
Ես կուզէի հեզ մօս մնալ.  
Քո փոքրիկ եւ կոկ սենեակում  
Նսել, զրուցել եւ խնդալ:

Սեղմել շրբունիս արագ  
Չեռքդ փոքրիկ եւ սպիտակ.  
Եւ լուանալ արցուներով  
Չեռքդ փոքրիկ եւ սպիտակ:

38.

Թող ձիւն թափուի բուլայ-բուլայ,  
Կարկուտ, հողմ եւ փորորիկ.  
Պատուհանս զարկի սաստիկ,  
Այլ եւս երբէք չեմ ողբայ—  
Չի ծաղկում է իմ կրծքում  
Ծիրածիս դեմքն ու գարուն:



39.

Դուք Տիրամօնն եք աղօքում,  
Նրանք Պողոս—Պետրոսին.  
Խսկ ես միայն հեզ եմ աղօքում  
Քե՛զ, իմ փայլուն արեւին:

Տուր ինձ համբոյր, երանուքիւն,  
Խնայիր, զրա եղկելոյս,  
Կոյսերի մէջ—անզո՞յգ արեւ,  
Արեւի տակ—անզո՞յգ կոյս:

40.

Միքէ գունաս դեմքիս վրայ  
Ծիրոյս ցաւը չես կարդում,  
Այլ ցանկանում ես որ նա  
Արտայայի շրբունիվ:

Օ՛, շրբունիս խիս հպարտ  
Գիտէ միայն համբուրել.  
Եւ մինչ մեռնում եմ վասից՝  
Նա պատրաս է կատակել:

41.

Ուզում էի մնալ հեզ մօս,  
Հանգիս առնել հեշտարար,  
Սակայն դու ըտապ եւ փուքկոս  
Թողեցիր ինձ եւ անցար:

Ասում էի որ հոգիս  
Միայն հեզնով է կենդան,  
Կոտրատուելով իմ վասիս  
Ծիծաղով տուիր պատասխան:

Բայց, խնդրում եմ, չը կարծես  
Թէ կը սպանեմ ինձ, կը գնամ.  
Այդ բոլորը վաղուց ես  
Արդեն կրել եմ մի անգամ:

42.

Զոյգ աչքերդ շափիւղայ,  
Կախարդիչ եւ դիւրական.  
Երիցս երջանիկ է նա,  
Ում որ նայեն եւ ժպտան:

Սիրտդ անզին ադամանդ,  
Շողշողում է լուսավառ.  
Երիցս երջանիկ է նա,  
Որ զարկում է ում համար:

Իսկ շրունքներդ—սուսակ,  
Նման չունեն լուսնի տակ.  
Երիցս երջանիկ է նա,  
Ում որ սեր յայտնեն նրանի:

Այս թէ տեսնեմ անտառում  
Այդ երջանիկ եակին,  
Ես իսկոյն վերջ կը դնեի  
Իր երջանիկ վիճակին:

43.

Սիրային նենգ խօսերով  
Սիրտդ գրաւել ցանկացայ,  
Բայց բնոււեցի իմ ցանցով,  
Եւ կատակս լուրջ դարձաւ:

Երէ դու այժմ իրաւամբ  
Թողնես եւ գնաս հեղնաբար—  
Դժոխիք ձեռքն ընկնելով՝  
Ինձ կը սպանեմ անպատճառ:

44.

Կեանի եւ աշխարհ շատ են մասուած եւ հիւծուած,  
Գերմանացի պրոֆեսորին գնամ, դիմեմ,  
Միայն նա է կարող նար անել սրանց.  
Կը հնարի թէ անուններ, թէ սիսեմ,  
Եւ գլխին ֆես, հազին՝ խալար, անդադրում,  
Տիեզերքի ծակ տեղերն է կարկատում:

45.

Գիշեր ցերեկ զլուխս կոտրում  
Հազար ու մեկ հարցի վրայ.  
Գրաւիչ աչքերդ վերջապէս  
Պատասխան տուին ինձ ահա:

Խելօֆ աչքերդ ինձ հասկացրին  
Եւ պարզեցին շատ հարցեր.  
Սակայն մի հարց մուլք մնաց կրկին— ✓  
Այդ՝ իմ երկրորդ սերն էր:

46.

Զեզ մօս հիւրեր կան այսօր,  
Ամբողջ տունը լուսաւոր,  
Վերեւ, պատուհանի մօս,  
Սահում է մի սուեր աղօս:

Ինձ չես տեսնում խաւարում,  
Ներքեւ կանգնած եմ մենակ.  
Ամենեւին չես տեսնում  
Մրժի վերքերն անյատակ:

Սիրս խաւար, վիրաւոր,  
Սիրում է տեղ եւ փշրում,  
Թորոսում է արթւնոս,  
Բայց դու այդ չես նկատում:

## 47.

Կը ցանկանայի վետես  
Արտայայտել մեկ բառով.  
Կը յանձնեի զուարք բամուն  
Ու բոցներ իր բեւերով:

Թոցներ, բերեր, սիրելի՞դ իմ,  
Քեզ իմ խօսք վետահար,  
Ու ամեն տեղ եւ ամեն ժամ  
Քեզ, սիրելի՞ս, լսել տար:

Երեկոյեան երբ քուն մտնես  
Վետահար խօսք անվերջ  
Թող հետեւի, հալածի տեղ  
Նոյն իսկ երազներիդ մեջ:

## 48.

Ունես բարեր, մարզարիսներ,  
Ինչ որ մարդիկն են ցանկանում.  
Եւ բացի այդ՝ անզոյդ աչեր—  
Սիրելի՞ս, ել ի՞նչ ես ուզում:

Գեղածիծաղ աչերիդ վրայ  
Ես երգում եմ եւ նուիրում  
Հազարաւոր անմահ երգեր—  
Սիրելի՞ս, ել ի՞նչ ես ուզում:

Այդ հրաւալի բո աչերով  
Ինձ չաշշարում ես, ինձ տանջում,  
Մահուան դուռն ես հասցրել արդեն—  
Սիրելի՞ս, ել ի՞նչ ես ուզում:

## 49.

Ով որ սիրում է առաջին անգամ,  
Թիեւ յուսահատ, բայց Աստուած է նա.  
Բայց ով որ սիրում է երկրորդ անգամ,  
Այն ել յուսահատ, խելագար է նա:

Ես խելագար եմ, սիրում եմ կրկին,  
Եւ սիրում անյօյս. առեւն ու լուսին  
Ծիծաղում են վրաս. ես ել միասին  
Ծիծաղում եմ եւ... մեռնում:

## 50.

Բաժանուեցինք յուլիսի տապ օրերին  
Սիկ ել նորից տեսանել միայն յունուարին.  
Այն օրերում ձեզ այրում եր տափ խորշակ,  
Այժմ սառն եք, անսարբեր եք եւ անկրակ:

Մենք կ'անջատուենք դարձեալ. եւ երբ յես դառնամ  
Դուք այլ եւս ո՛չ ցուրտ կ'լինեմ եւ ոչ տափ.  
Ես վետահար կ'այցելեմ ձեր գերեզմանն,  
Ինքս արդեն ձեր եւ սիրս անփափազ:



51.

Ստիպուած էի այրող գրկիցդ հեռանալ,  
Եւ բաժանուել ըրբունքներիցդ աննման.  
Կ'ուզենայի զոնի դարձեալ մի՛ օր մնալ,  
Սակայն արդէն եկաւ կառքն ու կառապանն:

Ահա կեա՞նքը: Ո.նվերջ քախիծ եւ տանջանք,  
Եւ անջատում եւ անվերջ մնաս բարեւներ.  
Մի՞րէ սիրտդ չեր կարող ինձ տալ կապանք,  
Աշերդ ինձ չէի՞ն կարող կաշկանդել:

52.

Ամբողջ զիւեր միայնակ  
Գնում էինք մուր կառխով.  
Քրիզ եւ զրոյց եւ կատակ,  
Իրար բնեոյց սեղմուելով:

Երբ լուսացաւ առաւօս,  
Մենք մնացինք զարմացած,  
Իբրեւ ձրի մի ճամբորդ  
Մեզ հետ Ամուրն էր բազմած:

53.

Աստուած զիտէ ուր է կորել  
Սխոր իմ խենք սիրուիիս.  
Անձրեւի տակ քափառում եմ  
Անձք, փրփուր բերանիս:

Էլ տեղ չը մնաց, պանդոկ չը մնաց,  
Ուր չը հարցնէի նորան.  
Սակայն ոչ մի բիրտ սպասաւոր  
Ինձ չը տուեց պատասխան:

Յանկաւրծ տեսայ նորան վերեւ,  
Պատուհանից բրձում.  
—Կարո՞ղ էի արդեօֆ կարծել  
Որ պալատումն ես ապրում:

54.

Տներն երկար շարւոտած,  
Ինչպէս մուալլ տեսիլներ,  
Վերարկուով վարարուած  
Լուռ փոխում եմ իմ բայեր:

Կէս զիւեր է դողանջում  
Զանգակատան վերեւից.  
Համբոյրներով, զզուանենով  
Սպասում է ինձ սիրելիս:

Լուսինն է ինձ ուղեկցում,  
Եւ խաղցրութեամբ լոյս տալիս.  
Ես հրեւում եմ եւ դողում  
Երբ տեսնում եմ սիրածիս:

„Շնորհակալ եմ, բարեկամ,  
Որ լոյս տուիր իմ ուղին.  
Այժմ մեզ հրաժես կը տամ,  
Գնա՛, լոյս տուր ուրիշին:

„Երբ տեսնես մի սիրահար,  
Որ տանջում է միայնակ,  
Եղիր նրան միսիրար,  
Ինչպէս ինձ հին ժամանակ“:



58.

Այս, տեսնում եմ ես նոյն աչքերն,  
Որ ժպտում էին ինձ բնեոյց.  
Տեսնում եմ եւ նոյն շրութեներն,  
Որոնք դարձրին կեանես անոյց:

Նոյն դուրեկան ձայնը, որ ես  
Երբեմն լսել եմ հիացած.  
Միայն ես չեմ առաջուան պէս,  
Ես վերադառնել եմ փոխուած:

Միրուն, սպիտակ բազուկներն ինձ  
Փարուում են եւ գրկում կրօն—  
Իսկ ես վիատ եւ բախճալից  
Կանգնած եմ լուռ նրա սրտի մօս:

59.

Դուք սակաւ եք ինձ հասկացել,  
Ես ձեզ միշտ եմ հասկացել—  
Բայց երբ իրաւ ցեխում տեսան,  
Իրաւ իսկոյն հասկացան:

60.

Հազիւ էինք տեսել իրաւ եւ ո՞ւ ձայնից, աչքերից  
Իսկոյն տեսայ, որ ո՞ւ սիրտգ տրամադիր է դեպի ինձ.  
Եւ երե հենց այդ բնակին չար մայրիկդ չը լիներ,  
Ես կարծում եմ, որ մենք իրաւ կը տայինք զերմ համ-  
բոյրներ:

55.

Երբ որ դու իմ կինս դառնաս,  
Կը նախանձեն բոլորն էլ մեզ.  
Զուարենանեով լի կեանք կ'ունենաս,  
Սնվերջ հանոյք կը վայելես:

Համբերութեամբ կը տանեմ ես  
Հայոյանեներդ զանազան,  
Բայց երգերս թէ չը գովես,  
Խսկոյն կը տամ ապահարզան:

56.

Չիւնի նման ներմակ ուսիդ  
Ես յենուեցի մի վայրկեան,  
Գաղտուկ ականջ դրի սրտիդ,  
Որ իւր իդան իմանամ:

—Ուրեմն վաղը ինձ կը բողնես՝  
Սակայն դեռ իմն ես այսօր.  
Թո՛ղ վայելեմ գրկիդ մէջ ես  
Երանութիւնս բոլոր:

57.

Մի՛րէ իրաւ բժնամաբար  
Փոխուել ես դու ամբողջովին,  
Որ տանջում ես ինձ չարաչար.  
Կը զանգատուեմ ողջ աշխարհին:

Օ՛ շրութեներ, ապերախտներ,  
Ինչպէս եք դուք ինձ բամբասել,  
Ինձ, որ երբեմն այնպէս սիրով  
Համբուրել եմ ձեզ եւ զգուել:

Իսկ վաղեն արդէն առաւօսեան կը հեռանամ քաղաքից,  
Ես սիպուած եմ նանապարհս շարունակել անդադար.  
Խարտեաւ կոյս քնքոյց դեմքով ինձ կը ճայի վերեւից,  
Վերջին անգամ կը տամ նորան իմ ողջոյնս սիրավառ:

61.

Արեւն արդէն դուրս է եկել սարի զագարին,  
Հեռու հնչում են ոչխարեներ զանգակիկներով.  
Ա՛խ, ինչպէս կը ցանկանայի տեսնել ես կրկին  
Իմ սիրունին, իմ գառնուկին, իմ արեգակին:

Ես անհամբեր նայում եմ վեր, նայում եմ տխուր,  
Մնա՞ս բարեաւ, աղւորիկս, քեզ քողնում եմ, զնում.  
Սակայն, իզո՞ւր, չէ բարձրանում ոչ մի վարագոյր,  
Նա դեռ քնած է—ա՛խ, արդեօֆ ի՞նձ է երազում:

62.

Ամառնային երեկոն մարեց,  
Սուեր է պատում մարգ եւ անտառ.  
Օդը բուրում, լուսինն երկնիցից  
Փայլում խայտում է ոսկելառ:

Ծղրիսն երգեց առուակի ափին,  
Զրից լուեց հանդարտ ծփանք.  
Լոռութեան մէջ հասաւ նամբորդին  
Շնչառութեան թերեւ հոսանք:

Առուակի մէջ այնտեղ միայնակ  
Էլֆն է լողում խորասուզուած.  
Կոկ բազուկներն, անոյց եւ սպիտակ,  
Լուսին շողով լուսաւորուած:



Անձանօք ուղիս գիշեր է պատել,  
Հիւանդ է սիրս, յոզնած իմ մարմինն.  
Ա՛խ, գեր փաղաքող լոյսդ տարածուեր,  
Ինչպէս լուռ օրինանք, օ՛ բաղցրիկ լուսին:

Ճառագայթներիդ հոսանքն ինչպէս գետ  
Վանում է ցնորժներ, վանում է խաւար.  
Տանջանեներս էլ հալում են նրանց հետ,  
Աշխ ոռոգում արցուններ պայծառ:

64.


Ի՞նչ է մահը—ցուրտ գիշեր,  
Ի՞նչ է կեանիը—հրատապ օր.  
Մընեց, ուզում եմ նիրհել.  
Ի՞նչպէս յոզնած եմ այսօր:

Մահնիս վրայ ծաղկում է ծառ,  
Մի սոխակ է վրան երգում.  
Սեր է երգում սիրահար,  
Ես լում եմ երազում:


65.

Ասա, որտեղ է սիրելիդ,  
Որ երգել ես մի անգամ  
Այնպէս դիւրի՛չ, երբ որ սրտի  
Բոց էր տիրում մոգական:

Ա՛խ, այն բոցերն արդէն հանգան,  
Սիրս սառն է եւ խաւար.  
Այս գրեոյկս սափոր է միայն  
Սիրոյս անփւնի համար:



ՈՒԽՏՍԻՈՐՈՒԹԻՒՆ ԴԵՊԻ ԿԵԽԱԾՈՐ \*).



## 1.

ատուհանում մայրը կանգնած,  
Հիւանդ որդին անկողնում,  
— „Վիլինելմ, սիրելիի՛ս, վեր կաց,  
Թափօր տեսնել չե՞ս ուզում“:

— „Մայրիկ, այնպէ՛ս հիւանդ եմ ես,  
Ո՛չ տեսնում եմ, ո՛չ լսում.  
Ես յիշում եմ մեռած սիրոյս,  
Եւ այդ միտքն է ինձ մատում“:

— „Վեր կաց եւ երթանք Կելաար,  
Վարդարանն եւ զիրքդ ա՛ռ.  
Կը բժշկի քեզ Տիրամայրն  
Եւ ո՞ն սիրտդ վիրահար“:

Մածանւում են խաչվառները,  
Եւ հնջում է շարական.  
Թափօրն անցնում է այժմ Կեօլնը  
Եւ գնում դեպի Կե՛լաար:

Եւ բափօրին հետեւում են  
Մայրն եւ որդին վետահար,  
Եւ միւսների հետ երգում են  
„Փառք քեզ, ո՞վ սուրբ Տիրամայր“:



## 2.



Կելաարի սուրբ Տիրամայրն  
Այսօր տիեզ է հազնուած.  
Դաս հիւանդներ այսօր նորան  
Դուրսը սպասում են շարուած:

Հիւանդները ջերմ հաւատով  
Բերում են շատ նուերներ,  
Մոմից ժինած եւ ձեռք, եւ ոսք,  
Նաեւ մարմնի այլ մասեր:

Ով որ մոմի ձեռք է բերում—  
Ձեռքն է բուժում վերերից.  
Ով որ մոմի ոսք է բերում—  
Ոսքն է բուժում ցաւերից:

Կաղեր զնացին շատ Կելաար—  
Այժմ լարի վրայ պարում.  
Շատի մատները չորացած—  
Չուրակ են այժմ նուազում:

Մայրը վերցրեց մոմի կտոր  
Եւ սիրտ ձուլեց նրանից.  
— „Ա՛ռ եւ նուեր բեր Տիրամօր,  
Որ բժշկի ո՞ն ցաւից“:

Հառաչելով առաւ որդին  
Մոմի սիրտը մօր ձեռքից.  
Հառաչելով, արցունին աչքին,  
Նա դիմեց սուրբ պատկերին:

Մայրը տեսնում է ամեն բան,  
Նա տեսնում է երազում,  
Եւ զարքում է ահաբեկուած—  
Բակում ժներն են նաչում

Որդին փռուած էր անկողնում  
—Մեռած էր արդէն նա...  
Կարմիր արշալոյն էր խաղում  
Դժգոյն այտերի վերայ:

Մայրը կրծին խաչեց ձեռքերն  
Ակամայ եւ վեսահար,  
Եւ բարեպատ սկսեց երգել—  
„Փա՛ռք մեզ, ո՛վ սուրբ Տիրամայր“:



ԱՍՏՈՒՄԾՆԵՐԻ ՎԵՐՋԱԼՈՅԱԾՈՒՅՑ\*).



այսն եկաւ իր ոսկեփայլ շողերով,  
Եւ մետաքս անոյաբոյր հովերով.  
Եւ իր սպիտակ ծաղիկներով մեզ գրաւում,  
Բարեւ տալիս իր մանուշակ աշերով:  
Եւ փռուելով է ինչպես կանաչ, ծաղկած գորգ,  
Որ հիւսուած է արեգակի շողերից,  
Եւ վաղորդեան մարզաւափայլ ցողերից,  
Հրապոյեներով մարդկանց դուրս է հրաւիրում:  
Անմիտ մարդիկ հնազանդում են այդ կոչին,  
Հազնում իրանց կիրակնօրեայ հագուստներ,

„Փառաւորեալ, անարատ կոյս,  
Ո՛վ բագուհիդ երկնային,  
Ո՛վ Տիրամայր, սփոփանի եւ յոյս,  
Քեզ եմ դիմում ողբագին:

„Ես եւ մայրս մինչեւ այսօր  
Ապրում էինք անտարեր  
Կեօլնում—ուր կան հարիւրաւոր  
Տաճարներ եւ մատուռներ:

„Մարզարիտն էլ մեզ մօս ապրում,  
Բայց նա մեռաւ վաղաժամ.  
Ա՛ռ մոմի սիրտն եւ բժշկիր  
Սիրս, ո՛վ սուրբ Մարիամ:

„Բուժի՛ր իմ սիրս վեսահար,  
Եւ ես միշտ եւ անդադար  
Զերմ կ'աղօթեմ եւ կը երգեմ  
„Փա՛ռք մեզ, ո՛վ սուրբ Տիրամայր“:



### 3.



այրն եւ իւր հիւանդ որդին  
Անոյշ քնած են սենեակում.  
Եւ ահա սուրբ Աստուածածինն  
Հանդարտ սենեակն է մտնում:

Խոնարհուելով հիւանդի վրայ,  
Զեռքը քերեւ դրեց սրտին,  
Եւ մի անոյշ մայիս դեմքին,  
Աներեւոյք եղաւ նա:

Կանայք իբրեւ անմեղութեան պարզ նշան  
Սպիտակագոյն հանդերձներով զարդարուած.  
Պոետները զինուած բուղը եւ մատիտով,  
Ամբոխն այդպէս առաջ է գնում զմալլուած,  
Եւ կանգ առնում դալար մարգերի վերայ.  
Ծառի ծաղկելն պատճառում է նրանց հրեռուանի,  
Եւ խաղում են ծաղիկներով երփնեռանգ.  
Ոկանջ են դնում բոշունների զուարք երգին,  
Եւ հրեռուանի աղաղակ են արձակում  
Դեպի վերեւ, կապոյն կամար երկներին:

Մայիսն ինձ էլ այցելեց. երեք անգամ  
Զարկեց դուռս եւ կանչեց. „Ես մայիսն եմ.  
Ե'կ, օ՛ դժգոյն, նիստափուած ցնորամիտ,  
Ե'կ, ես մեզ էլ ցանկանում եմ համբուրել“:  
Ես պատասխան տուի առանց բանալու.  
—Իզուր ես դու ինձ հրապուրում, օ՛ չար հիւր,  
Ես մեզ արդեն բափանցել եմ եւ դիմել,  
Տիեզերքի կերտուածն ես լաւ եմ զննել.  
Ես զննել եմ, խոր զննել եւ այժմ  
Հանոյից զուրկ, սիրսա անվերջ մորմոխում:  
Ես տեսնում եմ մարդկանց սներն եւ սրտերն  
Իրանց հաս եւ կարծր պատերի միջով—  
Ուր բուն են դրել միայն կեղծիք եւ աղես.  
Դեմքերի վրայ ես կարդում եմ չար մտեր,  
Պարկետ կոյսի կարմիր այտերի վերայ  
Ես տեսնում եմ զաղտնի կիրքն է բարուում.  
Ոգեւորուած, զոռող շահեկի զլիսին  
Միայն խենքի զլիարկն եմ ես նկատում:  
Միայն զետ դեմքեր եւ ուժասպառ ստուերներ—  
Ուրիշ բան չեմ տեսնում երկրիս երեսին.  
Ես անկարող եմ հասկանալ թ'ինչ է նա—  
Հիւանդանո՞ց քէ խենքերի բնակարան:  
Թափանցեցի երկրի խորք նիօրեայ,

Կարծես քէ նա բիւրեղ լիներ եւ տեսայ  
Նոյն սարսափը, որ Մայիսն իր ժպտագեմ,  
Կանաչ խոտով զուր տեսում էր խողարկել:  
Տեսնում եմ ես մեռածներին դագաղում,  
Աշենք բաց, իսկ ձեռները խաչաձեւ,  
Սաւանները ներմակ, դեմքերն էլ սպիտակ,  
Իսկ ըուրբերի վերայ որդեր են սողում:  
Ես տեսնում եմ հօր գերեզմանի վրայ  
Զուարենանում են որդին եւ իր սիրուին.  
Սոխակներն էլ երգում ծաղրական երգեր,  
Ծաղիկները երջում են հեզնարար—  
Ծերուկ հայրը շարժում է իր դագաղում,  
Պառաւ մայր հողը ցնցում է ցաւագար:


Օ՛ բոււառ հող, ցաւերդ ծանօթ են ինձ,  
Տեսնում եմ ո՞ս կրծքում արիւն է եռում.  
Քո բիւրաւոր երակներից յորդառաս  
Արիւն է հոսում. եւ տեսնում եմ դարձեալ  
Վերեբեդ լայն բացուած, արիւն, ծուխ եւ բոց  
Գուրս են ժայրքում նրանց միջից կատաղած:  
Տեսնում եմ ես ո՞ս հսկայ զաւակներին—  
Այդ հին ցեղին, որ խաւար անդունդներից  
Խիզախ եւ խորխ բարձրանում են դեպի վեր,  
Չեռքներին վառ կերոններ հօնելով,  
Ամրացնում են երկարէ ասինաններն  
Եւ կատաղած դեպի երկինք են ելնում:  
Նրանց հետքից մազլցում են չարախինդ  
Գանանների սեւ-սեւ խմբերն եւ ահա,  
Ոսկէ աստղերն միահմուռ երկներից  
Ճարնատիւնով բօրափուում են եւ ցրում:  
Լկտի ձեռքով պատառում են ոսկէկար  
Վարագոյրը Աստուածների երկներից,  
Եւ կառաջով շպռում են դեպի վայր  
Սուրբ եւ մաքուր հրեսակներին: Գանի վրայ

Գունաս նստած և Աստուածն եւ իւր զիխից  
 Պոկում է բագն եւ ալիքները փետում.—  
 Վայրագ խուժանն ահա մօսեցաւ նրան,  
 Եւ երկնային անվերջ տարածութեան մէջ  
 Հսկաներն կերոնները նետեցին,  
 Իսկ գանաններն բոցի խարազաններով  
 Հրեշտակներին մորակում են չարաղէս.  
 Նրանք տանջւում, ծւմուռում են ցաւերից—  
 Եւ վերջապէս գանգուրներից բռնելով  
 Որոքընդոս գահավիժում են ներեւու:  
 Ահա նաեւ իմ սեփական հրեշտակս,  
 Իւր սխանչելի դեմքով, խարտեած վարսերով,  
 Յաւերծական սերը բնեոյց բերանին,  
 Երանուրիւն՝ իւր կապուտակ աշբերում.  
 Մի գարշելի, սեւ, աննոռնի չար ոզի  
 Յափշտակնեց գետնից գունաս հրեշտակիս,  
 Սկսեց զմայլուել, առամները կրտս սրած,  
 Նորա մարմնի ազնուածում մասերով,  
 Եւ վերջապէս գրկեց նորան վավառոս:  
 Մի սոսկալի եւ զարհուրիչ աղաղակ  
 Յանկարծ ամբողջ սիեզերեռում դդրդաց,  
 Կորողները տապալում են կործանուած,  
 Տիեզերքը շառաչիւնով խորտակում,  
 Եւ վերստին նախկին խաւարն է տիրում:

## ՀԱՐՑ ՍԱՐԻ ՎՐԱՅ

*Aus der Harzreise*

1824.



## 1.



Մարի զլիսին կայ մի տնակ.  
Մի ծերուկ է մեջն ապրում.  
Պապղում է ոսկէ լուսնեակ,  
Կանաչ նոճին սօսափում:

Տնակի մէջ բանդակազարդ  
Կանգնած է մի բազկարռու.  
Բախտաւոր է ով նստի վրան—  
Եւ այդ ես եմ բախտաւոր:

Արոռի վրայ, կրծքիս յենուած,  
Լուռ նսած է մի մանկիկ.  
Աշերն ասես կապոյց ասղեր,  
Բերանը—կարմիր վարդիկ:

Կապոյց ասղերն ինձ նայում են  
Մի երկնային խորութեամբ.  
Եւ նա շուշան իւր մատիկներն  
Բերանին դրեց նենգութեամբ:

„Ո՞չ, մայրիկը մեզ չէ նայում,  
Նա մանում է ուշաւար.  
Խոկ հայրիկս երգ է երգում,  
Եւ նուազում է կիբառ:“

Եւ փոքրիկը շունչը պահած  
Շնչում է ցածրածայն.  
Նա ինձ արդին ունի պատմած  
Դաս գալցնիքներ մանկական:

## ՆԱԽԵՐԳԱՆՔ



Եւ հազուսներ, կոկ հանդերձներ,  
Ամեն տեսակ զարդ ներկայ,  
Քաղցր խօսեր եւ գրկումներ—  
Միայն սրտերն են բացակայ:

Ոչ անկեղծ սէ՛ր եւ ոչ ել սիրս  
Չը կայ նորանց խօսերում.  
Ա՛յս, այդ խօսերը, կեղծ եւ բիրս,  
Ինձ տանջում են եւ սպանում:

Գնում եմ սարերը բարձրանամ,  
Ուր շունչ կը բաշեմ ազաս.  
Ուր բարմ է օղն եւ բաղցրանամ,  
Ուր մարդիկն են անառա:

Ուր սօսափում եղեւիններ,  
Թռչունն երգում է զուարը,  
Ուր շառաշում են վտակներ,  
Ամպերն են սահում հպարտ:

Մնաք բարեւ շենի դահլիճներ,  
Տափակ պարն—տիկիններ.  
Ես սարն եմ զնում եւ զուարբերես  
Վերեւից կը դիտեմ ձեզ:



„Այս, տանն եմ ես շարունակ  
Մօրաբրոջ մահից յես.  
Մեր մօտակայ ուրախ քաղաք  
Գնում էի միայն նորա հետ:

„Իսկ այստեղ, ցուրտ լեռան գլխին,  
Սպրում ենք մենք միայնակ.  
Չմենաները բոլորովին  
Թաղուած ենք խոր ձիւնի տակ:

„Իսկ ես, զիտէ՛ք, տա վախկոս եմ,  
Մենակ չեմ զնում ոչ մի տեղ.  
Վախում եմ չար ոգիներից,  
Որ բափառում են այստեղ“:

Սիրուն մանուկն յանկարծ լռեց,  
Կարծես քէ իւր խօսմերից  
Սարսափահար եղած—ծածկեց  
Աշիկներն եւ սեղմուեց ինձ:

Սօսափում է նոնին ուժգին,  
Ճախարակը նոնչում,  
Կիրառն է ննչում հօր ձեռքին,  
Եւ հին երգը մրմնջում:

„Մի՛ վախենար, սիրուն մանկիկ,  
Զես վնասի չար ոգիներ.  
Գիշեր-ցերեկ, սիրուն մանկիկ,  
Հսկում են ֆեղ նրեւսակներ:“



2.

 ոնին կանաչ իւր մատերով  
Պատուհանիս է զարկում.  
Լուսինն էլ անհամես կերպով  
Մենեակս է լուսաւորում:

Հայրն եւ մայրը բնած են արդեն,  
Փոքրիկ սենակում պառկած,  
Քաղցր զրոյցով մենք, դեմ առ դեմ  
Նսած, հսկում ենք միմեանց:

„Ո՛չ, ես չեմ կարող հաւատալ  
Թէ աղօրում ես դու տաս.  
Աղօրից չէ, որ ցնցում են  
Քո շրունեներդ գունաս:

„Ես սարսում եմ ամեն անգամ  
Այդ ցնցումից ցուրտ եւ չար.  
Երկիւղս սփոփում է սակայն  
Աշբիդ լոյսը բարեւար:

„Նոյն իսկ կասկածում եմ, որ դու<sup>1</sup>  
Անկեղծ, մատուր հաւատով,  
Հօրը, Արդուն եւ Սուրբ Հոգուն  
Հաւատում ես դու սրտով:

„Ա՛յս, փոքրիկս, մօրս գրկում  
Ես էլ էի հաւատում  
Մի բարի եւ մեծ Աստուծուն,  
Որ իշխում է երկնելում:

„Որ ստեղծել է մարդ եակին,  
Ստեղծել է սիրուն աշխարհ.  
Լուսին, արեւ եւ ատղերին  
Նշանակել նանապարհ:

„Պայդում են նրանց սրերն,  
Դրօւակները ծածանում.  
Ալնպիս վեհ ասպետին տեսնել  
Փոքրիկս, չե՞ս ցանկանում:

„Ուրեմն, նայիր ինձ նամարձակ,  
Համբուրիր ինձ եւ լաւ տես—  
Որովհետեւ, սիրուն մանկիկ,  
Սուրբ Հոգու ասպետն եմ ես“:



## 3.

 ոնիների ոսերի մեջ  
Լուսինն է բազում խաղաղ.  
Լապտերն է մարում սենեակում,  
Եւ առկայծում է դանդաղ:

Սակայն աստղերս մահուրիկ  
Պայծառ շողում են, փայռում,  
Եւ այրում է ծիրան ծաղիկ,  
Եւ սիրուն մանուկն ասում:

„Այն անպիտան զանան ալիերն  
Ամեն գիշեր զողանում  
Եւ տանում են հացն ու նրազուն,  
Որ պահում են մեր արկղում:

„Այն անպիտան զանան ալիերն  
Սեր կարի երեսից  
Անոյշ են անում, մնացածն էլ  
Չէ ազատում մեր կատուից:

„Բայց, փոքրիկս, երբ մեծացայ,  
Միտք դարձաւ հաստատուն,  
Ես աւելի շատ հասկացայ,  
Եւ հաւատացի Որդուն:

„Որդուն, որ իւր անհուն սիրով  
Տեր պարզեւեց մարդկութեան,  
Բայց իբրեւ վարձ, ինչպէս որ միշտ—  
Մարդիկ խաչեցին նրան:

„Իսկ այժմ մարդ եմ. շատ եմ որջել  
Չարն ու բարին նաևաչում.  
Եւ արդ, սրտիս բոլոր ոյժով  
Սուրբ Հոգուն եմ հաւատում:

Նա կատարել է շատ նրացներ,  
Եւ կատարում է նա դեռ,  
Խորտակում է սիրաններին,  
Եւ ստրկական ռդրաներ:

„Սպեղանի տուեց նին վերերին,  
Հին իրաւուննն նորոգեց.  
Բոլոր մարդիկ հաւասար են  
Եւ ազնիւ—նա հոչակեց:

„Նա վերջ տուեց այն խաւարին,  
Այն չարախինդ ոյժերին,  
Որ քանդում են, քունաւորում  
Մեր սերն ու մեր զուարը հոգին:

„Նա ընտել է, զինել արդեն  
Հազարաւոր ասպետներ,  
Որ իւր կամքն իրազործեն,  
Ոյժ եւ խարխոյս ներենչել:

„Կատուն ել է կախարդ նոյնպէս,  
Փախչում է ամեն զիւեր  
Դեպի սարը ոգիթերի,  
Ուր կան հին աւերակներ:

„Ուր եղել է երբեմն ամրոց,  
Կանգնած ուրախ եւ ժեղ,  
Շատ տիկիններ եւ ասպետներ  
Պարել հրճուել են այնտեղ:

„Բայց կործանել է բոլորին  
Մի շարասիրս, կախարդ կին,  
Այժմ մնում են աւերակներ,  
Ուր ապրում են միայն բուեր:

„Բայց մօրաքոյրս ասում էր,  
Որ կայ մի խօսք եւ մի տեղ,  
Որ զիւերով երե ասես—  
Ապա կը փոխուի այնտեղ:

„Ամրոցը կը լուսաւորուի,  
Վերսին կեանք կը սանան,  
Եւ տիկիններ եւ ասպետներ  
Նորից ուրախ պար կը զան:

„Եւ ով որ այն խօսք գտնի—  
Ամրոցը կ'անցնի նրան,  
Եւ բոլորն ել փառք կը տան  
Իր երիտարդ անուան“:

Այսպէս ծաղկում են հետեարներ  
Վարդիկ այտիկների վրայ,  
Եւ աստղափայլ իւր աշխերից  
Կապոյն լոյս է սփռում նա:

Իւր ոսկեգոյն գանգուրները  
Փաքարում է նա ձեռիս,  
Եւ համբուրում է մատեր  
Եւ պերճ անուններ տալիս:

Եւ սենեակը նայում է ինձ  
Այնպէս բարեկամաբար,  
Որ կարծես քի հին անցեալից  
Յանախ տեսել ենք իրար:

Եւ զգում եմ որ այժմ արդէն  
Հասել է ժամն ահաւոր—  
Նըրուններս կ'արտասանեն  
Այն խօսքը խորհրդաւոր:

Եւ տե՛ս, մանուկ, կէս զիւերին  
Յաջորդում է արշալոյս,  
Սարը զարբում, գետն ու նոնին  
Հնչում են աղմկայոյզ:

Ժայռից հնչեց ոգիների  
Երգերի ձայնն ու կիրառ,  
Եւ բացւում է գարնանային  
Ծաղիկների մի տնտառ:

Բուրում, փայլում են զոյնզգոյն  
Զնաշխարհիկ ծաղիկներ,  
Եւ օրօրում են դողդոջուն  
Կախարդական տերեւներ:

Վայրի տնչով կարմիր վարդեր  
Այրում են բոցի նման,  
Ինչպէս բիւրեղի կորողներ  
Հպարտ նայում է տուշանն:

Ասղերն ինչպէս մէկ—մէկ արեւ  
Միրով նայում են ներքեւ,  
Եւ ռուսանի բաց կոկորդում  
Շողերի հոսանք բափում:

Սակայն ինքներս, սիրուն մանուկ,  
Աւելի շատ ենք փոխուել.  
Մեր շորս կողմը ռողջորում են  
Ոսկի, մետախ եւ զաներ:

Դու դարձել ես իշխանուիի,  
Իսկ խրճիքը մի պալաս.  
Եւ տիկիններ եւ ասպետներ  
Պարում, իրեւում անընդհատ:

Սակայն պալա՞ս, մարդի՞կ եւ դո՞ւ—  
Բոլորդ ինձ էք պատկանում.  
Եւ փողեր ու ծնծղաներ  
Անունս են փառաբանում:



### Պ Ա Տ Ա Ն Ի Հ Ո Վ Ի Ի



ատանի հովիւն է բագաւոր...  
Իր գահն է կանաչ սարի զագարին,  
Իսկ ոսկէ բազր՝ շեղ, փառաւոր  
Արեւն է նրա դեռահաս զլիսին:

Իր ոսերի տակ ռողմուրը զառներն  
Փռուած են կարմիր խաչերով ներկուած.  
Հորբերն էլ իբրեւ գոռող ասպետներ  
Ճեմում են ռուրջը եւ հսկում նրանց:

Երկար միրքաւոր, մկիան այծերն—  
Դերասաններն են պալատական.  
Թոշունի երգեր, կովի զանգակներ—  
Կազմում են օրկեսր բազաւորական:

Եւ հնչում են նրանք այնպէ՞ս մեղմագին,  
Եւ ուղեկցում են այնպէ՞ս ներդաշնակ  
Աղմկող ջրվեժն եւ կանաչ նոնին—  
Որ բազաւորը բնում է նրանց տակ:

Կառավարութիւնն այդ միջոցներին  
Մինիսր ռունն է իր ձեռքն առնում.  
Նրա շարագոյժ հաջոցն է միայն  
Արձագանգ տալիս ըրջականներում:

Եւ տեղում է ննջելով արքան—  
„Որքան դժուար է բագաւոր լինել,  
Ա՞յս, կ'ուզենայի ես այդմ միայն  
Միրուն բազուհուս տեսնել եւ գրկել:

„Այնպէս հանգիս է իմ արքայական  
Գլուխս գեղեցիկ բազուհուս գրկում.  
Իմ իշխանութիւնն անվերջ, անսահման,  
Ես տեսնում եմ միայն նորա աշխերում“:



### Բ Բ Ո Կ Է Ն Ի Վ Ր Ա Ց



Եւելիք ռառագունում,  
Արդէն ծփում են ռողերն,  
Եւ մեզի նոր ովկեանում  
Լողում լեռան զագարներ:

Այս, երեք բեւեր ունենամ—  
Կը բռչեմ բամու նման,  
Եւ լեռներով կը սլանամ  
Դեպ՝ սիրածիս բնակարան:

Անկողնից, ուր նա է ննջում,  
Վարագոյրը կը բաւեմ.  
Համբոյր կը դրումեմ նակատին,  
Յակինք բերանն կ'համբուրեմ:


Եւ իւր շուշան ականջներում  
Ես հանդար կը տենջամ—  
„Երազի՛ր, որ սիրում եմ մեզ,  
Սիրով անվերջ, անքառամ“:



## ՀԻՒՍԻՍՅԱՆԻ ԾԱՎ

Die Nordsee

1825—1826



## ԱՌԱՋԻՆ ՑԻԿԼ

1.

### ՊՍՍԿՈՒՄՆ

Եզեր իմ, ո՞վ իմ բարի երգեր,  
Զարթեցիք, ելք, զինաւորուեցիք.  
Հնչեցրէք ձեր փոլերն,  
Եւ վահանի վրայ բարձրացրէք  
Այն մատաղ կոյսին,  
Ու իշխելու և այսուհետեւ  
Ամբողջ սրտիս վրայ իբրեւ բազունի:

Ողջո՞յն ժեզ, դեռահաս բազունի:

Վերեւ արեւից կը յափէտակեմ  
Ճանանշափայլ կարմիր ոսկին,  
Եւ ու օծեալ հակատիդ համար  
Ես ապարօտ կը հիւսեմ:  
Երկերի կապոյն մետախի սնդուսից—  
Ուր գիշերային ալմասներ են ռողում,  
Ես կը կորզեմ մի շենք կտոր,  
Եւ արքայական ուսերիդ  
Կը ծածկեմ ինչպէս ծիրանի:  
Փու արքունիքի կը կազմեմ ես  
Պնդուած սոնեսներից,  
Հպարտ տերցիններից եւ կոկ սահներից,  
Մրամտութիւնս—իբրեւ սուրհանդակ,  
Երեւակայութիւնս—իբրեւ խեղկատակ,  
Խոկ երգիծանիս—իբրեւ ժայտախառն  
Արցունիներ բերող մունետիկ  
Կը ծառայեն ժեզ:

Խոկ ինչս, ո՞վ բազունի,  
Ծունկ կը չոգեմ ու առաջ,  
Եւ ակնածութեամբ կը մատուցանեմ ժեզ  
Կարմիր բաւետայ բարձի վրայ  
Խելիս մնացորդը,  
Ու կարեկցաբար բոլել է ինձ  
Նախորդ բազունին:

2.

### Վ Ե Ր Զ Ա Լ Ո Յ Ս



ովի դժգոյն եզերին  
Նսած եի միայնակ եւ խոներով լի.  
Արեւը թեւում եր եւ ջրերի վրայ  
Կրակի պէս կարմիր ռողեր եր սփռում,  
Եւ սպիտակ, հեռաւոր ալիքներն,  
Ցորձանից մղուած,  
Փրփուր, կարկաչով առաջ եին հոսում:  
Մի տարօրինակ աղմուկ, տեղոց,  
Սուլոց, հառաչանք, երիջ, մրմունջներ,  
Եւ խորհրդաւոր օօրոնցի երգ—  
Թւում եր կարծես թէ լուս եի  
Մոռացուած պատմութիւններ,  
Հին, սփանչելի հեկեարներ,  
Ու մանուկ հասակում լսել եի ես  
Դրացի ընկերներիս հետ,  
Երբ ամառնային երեկոներին,  
Քարի շեմին նսած,  
Մրտարոփ, աչքներս պլածած,  
Լուռ ականջ եինք դնում պատմութիւններին:  
Մինչ դեռ մեծ աղջիկները, տանը,  
Անոյշաբոյր ծաղիկների կողին

Նոսած էին պատուհանի մօս,  
Եւ վարդ դեմքերով  
Ժպտում էին լուսնի շողերում:

3.

## Ա. ՐԵԿԻ ՄՈՒՏՔԸ

 բավառ արեւը խորասուզում է  
Գորշ, արծարագոյն ովկեանոսի  
Հեռու, աղմկող ալիբների մէջ,  
Եւ վարդագոյն, օղեղին պատկերներ  
Թռոքալով հետեւում են նրան.  
Խսի աշնան խոժոռ ամպերի կոյտից  
Տխուր եւ մահուան դալուկը դեմքին  
Լուսին է ծագում.  
Նրա յետելից ինչպէս լուսաւոր կէտեր  
Ասդերն են առկայծում հեռու մեզի մէջ:

Երկներում երբեմն տողշողում էին  
Լուսին եւ արեւ—  
Ամուսիններ, ասուածներ.  
Խսկ նրանց շուրջը վիսում էին  
Փոքրիկ, անմեղ զաւակներ, ասդեր:

Բայց շարամիս, խոռ լեզուների շնորհիւ  
Լուսավառ զոյզն երկներում  
Թշնամաբար բաժանուեց:

Սյմմ ցերեկով, մենակ, փառահեղ  
Ճեմում է երկներում արեւ ասուածը.  
Եւ հպարտ մարդիկ, երջանիկ մարդիկ  
Փառաբանում են գոռ լուսաւորին  
Եւ աղօրում են նրան:

## Սակայն զիեւերով

Լուսինն է բափառում երկներում,  
Այդ դժբախս մայրը,  
Եւր որբ զաւակների, ասդերի հետ,  
Եւ լուռ, բախճալից պսպղում է նա.  
Եւ սիրահար կոյսեր, համես պուեներ  
Նորիրում են նորան արցունքներ եւ երգեր:

Խսկ ֆնոյշ, բարեսիրտ լուսին դիցուեին  
Գեռ եւս սիրում է իւր չբնաղ ամուսնուն.  
Երեկոյեան դէմ, գունաս եւ դողդոջ,  
Գիտում է նա բափանցիկ ամպերի տակից,  
Եւ վետահար նայում հեռացող արեւին,  
Եւ կարծես ուզում է ասել նրան—“Ե'կ,  
Ե'կ, զաւակներդ կանչում են ֆեզ”—  
Բայց գոռող արեւ ասուածն  
Եր ամուսնուն տեսնելիս,  
Վետից եւ զայրոյրից  
Շառագունում է բռուրային հրով,  
Եւ անզբարար շապառ է ներքեւ,  
Եր այրիական ցուրտ եւ բաց մահինք:

\* \* \*

Զարարոյն լեզուներն  
Նոյն խսկ անմահ ասուածներին  
Կորսի մասնեցին.  
Եւ խե՛լն, ցաւալից ասուածներն  
Երկներում շրջում են անմիտքար,  
Եւ անցնում իրանց անվախնան ուղին.  
Նրանք մահ չունեն. Եւ բափառում են  
Թէեւ նանանչափայլ, բայց... քուա՛:

Եւ մի՞քէ ես, մարդս,  
Հասարակ մահկանացուս,  
Երաւունք ունեմ տրտունջ յայտնելու:

ԳԻՇԵՐԸ ՆԱԽԱՍԵՆԵԱԿՈՒՄ



ովն ունի մարգարիտներ,  
Երկինքն ունի իր ասղեր,  
Խալ իմ սիրս, սիրս, սիրս—  
Նա ել ունի իր մէջ սեր:

Մեծ է ծովը, մեծ է Երկինքն—  
Սիրս մեծ է աւելի.  
Գոհարներից, ասղերից վառ  
Խմ սերս է ուղղողում:

Փոքրիկ աղջիկ, ջանել աղջիկ,  
Սպասում է բեզ մեծ սիրս.  
Սիրս, ծովը եւ Երկինքը  
Նուաղում են քա սիրուց:

\* \* \*

Երկների կապոյց կամարին,  
Ուր փայլում են սիրուն ասղեր,  
Վուզենայի ես մոլեզին  
Համբոյր տալ եւ դառն արտասուել:

Նրանք աշխերն են սիրածիս,  
Որ ցոլում են Երկներանզ,  
Եւ կապուտակ կամարներից  
Բարեւում են ժպտադեմ:

Դեպի կապոյց Երկնակամարն,  
Դեպի աշխերն սիրածիս,  
Կարկառում եմ բազուկներս  
Եւ զերմեռանդ աղերսում:

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ

  
Երեկոն իջաւ աղջամուղջ հագած,  
Ծովը վայրի փրփրում,  
Խալ ես ափին նսած դիտում էի  
Սպիտակ ալիքների պարը.  
Եւ կուրծքս էլ ծովի պէս ալեկոծ,  
Ակսեց տառապել խորին բախծով.  
Նա բեզ է կարօս, օ՝ սիրուն պատկեր,  
Նա տեսնում է բեզ միւս, ամեն տեղ,  
Եւ ամեն տեղ, ամեն տեղ—  
Թէ բամին շաչի, ծովը մոնչայ,  
Թէ նոյն խալ սրիս հառաջանքներում—  
Միւս եւ ամեն տեղ  
Քո ձայնն եմ լսում:

Զեռնափայտովս գրում էի աւագի վրայ  
„Ազնե՞ս, ես բեզ սիրում եմ“.  
Սակայն չարասիրս յորձանքներն  
Այդ բաղցը խոսովանանքը  
Զնջում եւ լուանում էին:

Կոտրող ձեռնափայս, սահող ալիքներ,  
Եւ փիրուն աւագ—էլ չեմ հաւատում ձեզ.  
Մռայլ է Երկինքը, սիրս ալեկոծ.  
Զօրեղ բազկով հիւսիսի անտառներից  
Կը կորցեմ ամենաբարձր մի եղեւին,  
Կ'ընկդմեմ էտնափ բոցավառ կոկորդը,  
Եւ այդ հսկայական բոցեղին գրչով  
Մռայլ Երկնակամարի վրայ կը գրեմ—  
„Ազնես, ես բեզ սիրում եմ“:



„Փրկութեան լոյս, անոյշ աչքե՛ր,  
Երջանկութիւն տուե՞ ինձ,  
Մահ տուե՞ ինձ—արժանացրէ՛  
Եւ ձեզ, եւ ձեր երկնիին:

\* \* \*

Գիշերն երկնի աչքերից  
Ոսկէ կայծեր դողալով  
Թօրափում են եւ իմ հոգիս  
Միրով հրեւում է, բացւում:

Ո՞վ երկնի սիրուն աչքեր,  
Լացէ՛, լացէ՛ հոգւոյս մէջ,  
Թող ձեր պայծառ արտասունեներն  
Հեղեղեն իմ հոգին:

\* \* \*

Լուռ պառկած եմ մահնի վրայ  
Փոքրիկ նաւասենեակում,  
Ալիքներ եւ մտորմունեներ  
Ինձ մեղմ օրոր են ասում:

Բաց լուսանցից նայում եմ ես  
Վերեւ, պայծառ աստղերին,  
Անուշափայլ եւ սիրասուն  
Իմ սիրածիս աչքերին:

Անուշափայլ եւ սիրասուն  
Աչքերը հսկում են ինձ,  
Փողփողում են եւ հրապուրում  
Կապոյն երկնակամարից:

Երկա՛ր, երկա՛ր զմայլում եմ ես  
Կապոյն երկնակամարով,

Մինչեւ սկողուեն սիրուն աչքերն  
Մեզի ներմակ ըղարշով:

\* \* \*

Նաւի տախտակէ պատի մօս,  
Ուր պառկած եմ ցնորամիս,  
Ալիքները կատաղաբար  
Զարնւում են, աղմկում  
Եւ ականջիս գաղտնաբար  
Նշնջում են, մրմնջում.—  
„Անմի՛ս, անմի՛ս,

Կարե և բազուկդ, երկինքը—հեռու,  
Ասդերն էլ վերեւ մեխուած են ամուր  
Ոսկէ մեխերով—  
Ունա՛յն և տենչդ, նառաչդ ունա՛յն,  
Սւելի լաւ է... բնի՛ր“:

\* \* \*

Տեսայ երազում ընդառաջակ մի դաւս,  
Ճերմակ եւ փիրուն ձիւնով փարաբուած.  
Ճերմակ ձիւնի տակ բաղուած էի ես  
Միայնակ եւ սառն մահուան բուն մտած:

Խոկ մուր երկնից իմ գերեզմանին  
Լուռ նայում էին աստղազարդ աչքեր,—  
Ո՞հ անոյշ աչքեր. նրանք փայրում էին  
Պայծառ, յաղբական եւ սիրանուեր:



Հեռո՞ւ, տուանդական ժայռոս ափերին,  
Ուր մրրկածուփ ծովի խորենից  
Մի փոքրիկ եւ գորշ ամրոց է ելնում,  
Բարձրակամար պատուհանի մօս  
Կանգնած է մի կին—զեղեցիկ եւ նիւանդ,  
Քնիոյ եւ գունաս՝ մարմարի նման.  
Նա նուազում է տափին եւ երգում,  
Իսկ բամբին ծածանում է նորա վարսերը,  
Եւ այն մռայլ երգը տարածում  
Լայն, աղմկայոյզ ծովի երեսին:

7.

## ԾՈՎԱՅԻՆ ՀԱՆԳԻՄԸ



Ովալիին հանգիս. ջրի երեսին  
Ոսկե կայծեր է տաղ տալիս արեւն,  
Եւ ալեճածան մարզարիներում  
Մեր նաւը կանաչ ակոս է բողնում:

Ղեկավարն է պառկած դեկի մօս,  
Եւ խոմփում է բնի մեջ հանդարտ.  
Խենքը(\*)զլիսիկոր, մռոս եւ կարոս,  
Առազասն է կարկատում միւս կողմ:

Մրի եւ կեղսի տակից գաղտնաբար  
Կարմիր այտերն են տեղ-տեղ զուրս նայում,  
Իսկ ըրունեները ցնցում անդադար,  
Մեծ, սիրուն աշերն վետահար նայում:

Նաւապետը կանգնած նրա առաջ  
Գոռում, հայնոյում է. „Գող, աւազակ,  
Ինչո՞ւ ես այսօր տակառից  
Մի տառեխ գողացել, ա՛յ աւազակ:“

6.

## ՓՈԹՈՐԻԿ



ատաղած մոնշում է փորորիկն  
Եւ մտրակում ալիքներին,  
Եւ փրփրադեկ յորձանենով ալիքներն  
Իրար վրայ կուտակում եւ կարծես կենդանի,  
Զբոսնում են ջրի սպիտակ լեռներ:  
Ցողնած, ուժասպառ նաւակս  
Փորձում է մազլցել նրանց վրայ,  
Բայց յանկարծ բարձրից զահավիժում է  
Անյատակ եւ սեւ հեղուկ անդունդը:

Օ՛ ծով.

Փրփրածին զեղեցկուրեան մայր,  
Սիրոյ մեծմայր, խղնա՛ ինձ.  
Արդին հախորում է, լեշի հոտ զգալով,  
Սպիտակ որորն ինչպէս ուրուական,  
Եւ կայմի վերայ կտուցն է սրում:  
Լափելու տենչով բռնուած նա բռչում է սրտիս վրայ  
Սրտիս, որ դասերդ փառնն է ննչեցնում,  
Որ շարաննի բռնիկդ խաղալիք է դարձնում:

Զօ՛ւր է աղերսս. զո՞ւր է խնդիրսս.  
Կոչս կորչում է մոնշով մրրկի  
Եւ ուզմագոչ բամու տառաշխինի մեջ,  
Սուլում է, ծվում, հաւեատում, նշում,  
Խելագարների տունն է յիշեցնում:  
Եւ այդ բոլորի մեջ պարզ լսում եմ ես  
Տաւդի հրապուրիչ հնչիւններ,  
Մրտամաւ, վայրի եւ հոգի այրով,  
Թախմով տոչորով երգի ձայներ:  
Ես նախաչում եմ այդ երգը:

Ծովալի՛ն հանգիստ, ահա ջրերում  
Մի խելօֆ ձկնիկ վեր է լող տալիս,  
Գլուխն է տաքացնում արեւի շողում,  
Պոչն է խայտալով զարկում կոհակին:

Սակայն որորը կապոյց կամարից  
Նետում է ներքեւ ձկնիկի վերալ,  
Կցում է զոհին եւ խորասուզում  
Երկնի կապոյց տարածութեան մէջ:

8.


## ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ



Խելօնում բարձր արեւն էր կանգնած,  
Պատած սպիտակ ամպերով.  
Ծովը խալաղ էր.  
Կեկի մօս պառկած երազում էի  
Եւ խորհում.—յանկարծ, կեսարուն, կեսուն  
Տեսայ Քրիստոփին, աշխարհի փրկչին:  
Սպիտակ, ծածանող պատմութան հազած,  
Ինչպէս մի վիթխարի եակ  
Քայլում էր նա ծովի եւ ցամաքի վրայ.  
Գլուխը հասնում էր երկնին,  
Եւ ձեռքերը տարածած  
Օրհնում էր ծովն ու ցամաքը.  
Եւ կրծի մէջ իբրեւ սիրս  
Նա կրում էր արեւ,  
Կարմիր եւ հրավառ արեւ:  
Եւ կարմիր, հրավառ այն արեւ սիրը  
Տարածում էր լոյս եւ ջերմութիւն,  
Սփռելով ծովի եւ ցամաքի վրայ  
Սիրոյ, գրութեան եւ երանութեան  
Ննորհալի տողեր:

Զանգակների դողանջիւնն վեհ սաւառնում է,  
Եւ ինչպէս կարապներ, վարդ կապաններով  
Քառում են խաղալով մեր սահող նաւը  
Դեպի կանաչ ծովափ, ուր ապրում են մարդիկ  
Բարձր աշտարակներով  
Շեղ ժաղախում:

Ո՞վ հրաւալի խաղաղութիւն. լուռ է բաղաբը.  
Զէ լուռում նաեւ առօրեայ գործի  
Եւ արհեսների խուլ դղրդիւնը.  
Եւ մայուր, աշխոյժով լի փողոցներով,  
Մարդիկ սպիտակ հագնուած,  
Արմակի ոստեր ձեռներին,  
Ճեմում էին եւ հանդիպելիս  
Նայում էին իրար. համերաշխ, դողդոջ,  
Սիրով եւ խաղցր անձնութացութեամբ  
Համբոյր էին դրումում իրար ճակատին,  
Եւ նայում էին վերեւ,  
Փրկչի արեւ սրտին,  
Որ զուարք քափում էր իր կարմիր արիւնն  
Իբրեւ հաւտութեան նօան,  
Եւ երից երջանիկ մարդիկ գոչում էին—  
„Փա՛ռք մեզ, Յիսո՞ւ Քրիստո՞ւ:



## ԵՐԿՐՈՐԴ ՑԻԿԼ

1.

### ՈՂՋՈՅՆ ԾՈՎԻՆ



աղաստա, բաղաստա.(\*)

Ողջոյն մեզ, ծովդ յաւիտենական,  
Բիւր ողջոյն մեզ  
Իմ հրեւող սրտից—  
Ինչպէս որ երբեմն ողջոյնել են մեզ  
Տասն հազար յոյների սրտերը,  
Դժբախտութեան դէմ կրուդ, հայրենիքին կարօս  
Աշխարհամոշակ յոյների սրտերը:

Ալիբները կուտակւում  
Եւ աղմկում էին.

Արեւը բորռուն վարդի տողեր եր  
Թափում նրանց վրայ.  
Որորները վախսեցած նշում,  
Եւ խմբով ճախրում, հեռանում էին.  
Նժոյգները տրոփում, գրահները տաշում  
Եւ նեռու հնչում էին յաղբական կոչեր՝  
„Թաղաստա, բաղաստա“:

Ողջոյն մեզ, ծովդ յաւիտենական.  
Մայրենի լեզուփս է ջուրդ կարկաչում,  
Եւ ո՞ւ երերուն կոհակներիդ վրայ  
Կարծես մանկական անուրջներս են բորռում.  
Եւ հին յիշողութիւնս պատմում է դարձեալ  
Այն բոլոր նրաւալի խաղալիքների  
Եւ զրօնիների շենք նուերների,  
Այն բոլոր կարմիր մարզանի ծառերի,

Ոսկէ ձկնիկների, մարզարիտների  
Եւ հազարերանգ խխունջների մասին,  
Որ դու գաղտնի պահպանում ես  
Քո բափանցիկ, բիւրեղի տանը:

Ո՞հ, որչափ տանջուել եմ օսարութեան մէջ:  
Ինչպէս մի բառամած ծաղիկ  
Բուսաբանի տիփկում, սիրս

Փակուած եր կրծեում:  
Կարծես թէ ամբողջ ձմեռը ես տկար,  
Պառկած եմ եղել հիւանդանցում,  
Եւ այժմ յանկարծ դուրս եմ եկել ես,  
Եւ զմրուխտափայլ, արեւից զարքած  
Գարունն է աշերս ըլացնում.

Սպիտակ ծաղիկներով ծածկուած  
Սոսափում են ծառերն եւ անյշաբոյր,  
Գոյն-գոյն աշերով դիտում են ինձ  
Զահել ծաղիկները:  
Ոմեն ինչ բուրում, ապրում է, խնդում,  
Եւ կապոյն երկնում երգում են բոշնակներ—

„Թաղաստա, բաղաստա“:

2.

### Փ Ո Թ Ո Ր Ի Կ

Եղդիչ կախուած է փոքորիկը ծովի վրայ.  
Եւ խուռն ամպերի սեւազուր պարխապը,  
Մերը բորբոքւելով եւ մերը հանգչելով,  
Ոլոր փայլակն է կրում, բափանցում:  
Աղեկոծ, մոնչող ծովի երեսին  
Խուլ որոտունն է հեռու դպրում,  
Եւ սպիտակ ալիբներն,  
Ինչպէս Բորեասի \*) եւ Էրիխոնի \*),  
Միաւորումից ծնուած նժոյգներ,  
Արշաւում են խենքի պէս:

Երկան նախուում են ծովի քաջուններն,  
ինչպէս մեռածների սուերներ Ստիսի<sup>\*)</sup> մօս,  
Արոնց Քարոնն<sup>\*)</sup> է յես մղել  
Իր զիւերային նաւակից:

Խե՞ղն, ուրախ նաւակ,  
Խե՞նց սարսափելի պարի ես բռնուել.  
Էօլն<sup>\*)</sup> ուղարկել է իր ամենալաւ երածիւսներին.  
Մեկը սուլում է, երկրորդը փշում,  
Երրորդը խուլ դղրդեցնում,  
Նաւի պարը աշխոյժացնում:  
Երերող ծովագնացը դեկի մօս կանգնած,  
Անքարը նայում է կողմնացոյցին—  
Նաւի բորող հոգուն—  
Եւ ձեռքերն աղերսով մեկնում է երկնին  
Եւ փրկութիւն նայում:

## 3.

## ՆԱԽԾԵԿ ԵՊԱԾ



Ո՞յս եւ սէ՞ր. ամեն ինչ խորտակուեց.  
Եւ ես ինս ինչպէս մի դիակ,  
Որ դուրս է նետել ծովը բարկացած,  
Ընկած եմ եզերքին,  
Յուր եւ ամայի եզերքին:  
Առաջ—անձայր ջրի ամապատ,  
Անցեալումս—միայն հոգսեր եւ տանջանի,  
Խսկ զիխս վերեւ—անցնում են ամպեր,  
Օդի այդ սձեւ ու զորք դուստրները,  
Որ ծովից, մեզի անօրների մէջ,  
Զուր են բարձրացնում,  
Եւ դժուարութեամբ բաշում են, բաշում  
Եւ վերսին ծովն են ածում:

Չանձրայի զբաղմունի, տիուր եւ անօգուտ,  
Ինչպէս իմ սեփական կեամբա:

Ալիբները մումոււմ, որորները նշում,  
Հիմ յիշողութիւնները փշում են ինձ վերալ,  
Մոռացուած երազներ, եղծուած պատկերներ,  
Տանջանիի չափ անոյշ, դուրս են լողում ահա...

Հիւսիսում ապրում է մի կին,  
Գեղեցիկ մի կին, արքայանան.  
Երանը նկուն՝ ինչպէս մի նանի,  
Պատած է սպիտակ գրգոռղ զգեսով.  
Սեւ սեւ խոպովներն, երապուրիչ՝ ինչպէս  
Երանութիւնով լի անոյշ զիւեր,  
Հիւսերով պատկուած զլիսից  
Վայր են բափում եւ կախարդական  
Պերնութեամբ նորա գունաս եւ սիրուն  
Դեմիի շուրջն են մեղմ ծածանում.  
Եւ այն գունաս եւ սիրուն դեմիի վրայ  
Փայլում է մի աչք, ազգու եւ պայծառ,  
Ինչպէս սեւ արեգակ:

Օ՛ սեւ արեգակ, ինչպէս յանախ  
Ուրեցել եմ ես քո մոլեգին  
Ոզեւութեան բոցերով,  
Եւ կրակով հարբած, կանգնած եմ եղել  
Առաջ եւ երերուել.  
Ապա իմ զոռող շրունեներն շնչացել են  
Խօսե՞ր, անուշիկ՝ լուսնի լոյսի պէս,  
Եւ Բնիոյչ՝ վարդի բուրմունի նման.  
Եւ հոգիս սաւառնում էր ինչպէս արձիւ,  
Սաւառնում էր դէպի երկինի:

Լոեցէ՛ ալիբներ, լոեցէ՛ որորներ,  
Ամեն ինչ կորաւ, երջանկութիւն եւ յոյս,

Յոյս եւ սկր. նաւաբեկ եղած,  
Միայնակ, պառկած եմ ծովի եզերին,  
Եւ այրող նակասս սեղմում եմ  
Թաց աւազին:

4.

## ՎԵՐՋԱԼՈՅՍ



Քանչելի արեւն  
Արդեն հանդարտ մայր մտաւ ծովը.  
Նաւար գիշերով ներկուել են արդեն  
Ծփող ջրերը.  
Բայց վերջալոյսի ոսկեգոյն շողերն  
Առկայօնում են նրանց վրայ դեռ եւս.  
Եւ աղմկող ալիքի հոսանքն  
Ափին է զարնում սպիտակ կոհակներ,  
Որ ուրախ եւ հապճեպ առաջ են ցատկում,  
Ինչպէս զանգրահեր ոչխարների հօսք,  
Որ մանուկ հովիւն երեկոյեան դէմ  
Երգելով դէպի տուն է տանում:

„Ի՞նչ գեղեցիկ է արեւն“—  
Ասում եր երկար լուրիւնից յետոյ,  
Ծովեզրին պտտող իմ բարեկամս,  
Եւ տխուր կատակ անելով,  
Հաւատացնում եր ինձ, թէ արեւը  
Մի գեղեցիկ կին է, որ սփառուած է եղել  
Ծովի ծեր ասունոյ հետ ամուսնանալու:  
Ցերեկով ուրախ զբոսնում է նա  
Բարձր երկնում, ադամանդափայլ,  
Եւ ծիրանազարդ,  
Ամենից սիրուած, ամենից պաշտուած,  
Բոլոր երկրային արարածներից,

Եւ իւր լուսափառ եւ ջերմ հայեացքով  
Ուրախացնում է  
Բոլոր երկրաւոր արարածներին.  
Իսկ երեկոյեան, ակամայ եւ վեսաբեկ  
Նա վերադառնում է  
Թաց ապարանի, իւր ծեր ամուսնու  
Մռայլ մահինք:

„Հաւատա ինձ“— աւելացրեց նա,  
Եւ ծիծաղով նառաչեց եւ ծիծաղեց դարձեալ,—  
Նրանի շատ սիրով ամուսիններ են,  
Կամ բնում են եւ կամ հայիոյում են իրար.  
Այդ հայմոյանից եռում է ծովը,  
Եւ ծովագնացը լսում է այդ ձայներում,  
Թէ ինչպէս ծերութին նախատում է կնոջ.—  
„Պոռնի՛կ սկաւառակդ համաշխարհային,  
Շողերով պչրող,  
Ցերեկն ուրիշներին ես լուսադեմ ժպտում,  
Իսկ գիշերն ինձ համար սառն ես եւ յոզնած“:  
Մահնակալային այս բարոգներից  
Հարկաւ, սկսում է զոռող արեւը  
Լալ եւ արտասուել, վիճակը ողբալ  
Այնպէս դառնազին, որ ծովի ասուածը  
Ցանկարծ յուսահաս ցատկում է մահից,  
Դուրս գալիս ծովի մակերեւոյքը  
Որպէս զի հանգիստ, ազատ շունչ բաշի“:

5.

## ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ



առահե՛ղ լուսին. Ին շողերի մէջ  
Ծովն է պապղում ինչպէս ոսկու հոսանք.  
Կարծես լուսադիմի հմայիչ եւ նուրբ

Նղարշն է պատել հեռու ծովեզրը.  
Եւ ջինջ, կապուտակ, անասդ երկնեռում  
Սահում են սպիտակ ամպեր,  
Ինչպէս պապուն մարմարիոնից  
Ասուածների հսկայ պատկերներ:

Օ՛ ո՛չ, ո՛չ, նրանք ամպեր չեն,  
Այլ հենց իրանք են - Հելլադափ ասուածները,  
Որ երեսն զուարք իշխում են երկրում,  
Խոկ այժմ մոռացուած եւ մահուան մատնուած,  
Ինչպէս վիրխսարի ուրուականներ,  
Սաւաննում են կեսպիերային երկնեռում:

Զարմացած, շլացած դիտում էի ես  
Այն օդեղին պանքենը.  
Երկնեռում համբ եւ դաման շրջող  
Ահա նա, Կրոնիոն \*) - Երկների արքան,  
Զիւնի պէս սպիտակ իր զանգութներով,  
Ոլիմպոս սարսեցնող, փառաւո՞ր զանգութներ.  
Չեռքին հանգած շանք,  
Դեմքին դժբախտութիւն եւ վիշտ, բայց նախկին  
Հպարտութիւնը մնացել էր դեռ եւս:  
Այս, երաշալի օրեւ էին նրանք, օ՛ Զեւս,  
Բայց նոյն խոկ ասուածներն անվերջ չեն իշխում,  
Եւ նորք միշտ դուրս է մղում ննին,  
Ինչպէս որ դու ինքդ մի ժամանակ  
Ծերունի հօրդ եւ ժեռի տիտաններին,  
Հայրասպանդ իւպիտներ:  
Քեզ էլ հանաչցի, օ՛ զոռոզ Հերա\*).  
Զո՞ւր էին բո բոլոր նախանձն ու զանքը.  
Այժմ ուրիշն է զայտնի տերը,  
Այլ եւս դո՞ւ չես երկների բազուհին.  
Խուռար աշենդ յառած են անբարք,  
Շուշան բազուկներդ անզօր են այլ եւս

Եւ վրեմդ այլ եւս երբեք չի հասնի  
Սուրբ Տիրամօրն  
Եւ իւր հրաշապործ Ասուածային Որդուն:  
Քեզ էլ հանաչցի, Պալլաս-Սրբնաս\*).

Մի՞քէ զրահի եւ իմասութիւնդ  
Զը կարողացան մեզ պատպանել  
Ասուածների կործանումից:  
Ահա եւ դո՞ւ, դո՞ւ, Աթրողիսէ\*),  
Ուկէ դիցունիդ, այժմ արծար դարձած,  
Թէեւ դեռ կրում են կախարդիչ զօտիդ,  
Սակայն մի գաղտնի սարսափ է ազդում ինձ  
Գեղեցկութիւնդ:

Կարծես մեռեալների դիցունին լիմիս,  
Վենո՞ւս - Լիբիսինա\*).  
Առաջուայ պէս սիրով չե նայում մեզ այլեւս  
Սոսկայի Արկար\*):

Ինչպէս տիտուր է պատանի Ապոլոնն.  
Այլ եւս չե հնչում նրա բնարք,  
Որ ասուածների խախիսանի ժամին  
Հնչում էր այնպէս աշխայդ եւ զուարք:  
Աւելի տիտուր է կաղ Հեփիսոսը\*),  
Եւ իրաւ, ինչպէս փոխարինի նա Հեքէին,  
Եւ անմահական նեկտար մատուցանի  
Ինչոյդի ժամանակ. վաղուց լուել է արդէն  
Ասուածների անվերջ քրիզը:

Ես ձեզ չեմ սիրել երբեք, ո՞վ ասուածներ —  
Որովհետեւ Յոյները հակակրելի են ինձ,  
Խոկ Հռովմայեցին նոյն խոկ ատելի.  
Բայց սուրբ կարեկցութիւն եւ դառն ցաւակցութիւն  
Ճմում է սիրս,  
Երբ այժմ տեսնում եմ ձեզ այդտեղ,  
Մոռացուած ասուածներ,  
Մեռա՞ծ, զիւերով շրջող սուերներ,

6.

## Հ Ա Ր Ց Ե Ր



ովի մօս, զիւրային կատաղի ծովի մօս  
կանգնած է մի պատաճի-մարդ,

Կուրծքը լի վեսով, զլուխը լի կասկածով,  
Մռալլ հարցնում է ալիքներին,

“Օ” բացարեցէք ինձ կեանի առեղծուածն,  
Ալլ նին, տանշանով լի առեղծուածք,

Որի վրայ տատերն են զլիներ կուրտել—  
Սեպագրերի զգակով զլիներ,

Չալմայով, վեղարով, կեղծամով զլիներ,  
Եւ հազարաւոր այլ տեսակ, խթովի

Եւ ծիծաղելի մարդկային զլիներ:

Օ” ասացէք ինձ, ի՞նչ է մարդը,  
Ուրեղի՞ց է եկել եւ ո՞ւր է զնում նա,  
Եւ ո՞վ է ապրում այնեղ, ոսկի ասդերից վեր”:

Ալիքները մրմնջում են յաւիտենական  
Իրանց մրմունջը. փշում է բամին,  
Ամսիերը փախչում, ասդերը ողղողում  
Սառն եւ անտարբեր—իսկ իննըրը պատախան է  
սպասում:

7.

## Ֆ է Ն Ի Ք Ս



Եւմսից մի բռչուն է պանում,  
Նա բռչում է դեսի արեւելք,  
Պերն այգիների հայրենիքը,  
Ուր բնում են անյօքպյոր իուսեր.  
Արմաւենիները սոսափում,

Մառախուղի պէս հողմից հալոծական.  
Եւ երբ յիւռում եմ քէ որքան նուաս  
Եւ անօս են այն ասուածները,  
Որ յաղբեցին ձեզ՝  
Նոր իշխող, խղճալի ասուածներն,  
Որոնք գառան մորքի ծածկած շարիք են ցանում—  
Ո՞հ, ինձ բորբոքում է մի անեղ ցառում,  
Եւ ես ուզում եմ խորտակել նոր տանարն,  
Եւ կոռւել ձեզ համար, ո՞վ նին ասուածներ,  
Զեզ համար եւ ձեր ամբոսական  
Իրաւունիք համար եւ ձեր նորոգուած  
Զոհի ծխով լի վեհ տանարներում  
Կը ցանկանայի չոփել, աղօրել  
Եւ աղերսանով ձերներս մեկնիլ...

Որպէս զի դո՛ւք, ո՞վ նին ասուածներ,  
Որ մարդկանց կոխւներում միւս յաղբողի  
Կողմն իք անցել, տեսնեք քէ մարդը  
Զեզնից աւելի մեծահոգի է,  
Եւ ասուածների կոխւներում ես այժմ  
Զեր կողմն եմ անցնում, յաղբո՛ւած ասուածներ...

\* \* \*

Ես խօսում էի այսպէս եւ տեսայ  
Թէ ինչպէս դգոյն, ամպածին դկմբերն  
Կարմրում էին եւ նայում էին ինձ  
Վատից լուսաւոր, մահամերձ հայեացքով,  
Եւ յանկարծ չացան երկնիք.  
Լուսինն էլ ծածկուեց սեւ ամպի յետեւ,  
Ալեկոծ ծովը փրփուր էր պատում,  
Եւ յաղբական փայլով վառուեցին երկնիքում  
Յաւիտենական ասդերն:



Աղբիւները կարկաչում,  
Եւ մի հրաշալի քոչում է եւ երգում:

„Կոյսր սիրո՞ւմ է, սիրո՞ւմ է նրան,  
Եւ գաղտնի, նոյն խոկ իրանից գաղտնի,  
Նա բերկրանելով կրում է իւր փոքրիկ սրում  
Նրա պատկերը:  
Սակայն երազում նա կանգնած է կոյսի առաջ,  
Կոյսր լալիս է, աղերսում, ձեռներն է համբուրում,  
Եւ կանչում է նրա անունը.  
Եւ իւր ձայնից զարում է սարսափած,  
Դեղօցիկ աշերը զարմանելով տրորում—  
Կոյսր սիրո՞ւմ է նրան, սիրո՞ւմ“:

Նաւի վերնայտկում կայմին յենուած  
Ականջ էի դնում քոչունի երգին.  
Ինչպէս սեւ-կանաչ նժոյգներ,  
Բաւերն արծարից—ոսոսում էին  
Սայհտակազանգուր ալիքները:  
Կարապների պէս շարժով զնում էին  
Հիւսիսային ծովի աներկիսող նումադներ  
Հելգորանդցիների առազատները.  
Իսկ վերեւ, յաւերծ, ջինջ կապոյի մէջ  
Թորուում էին սպիտակ ամպիկներ,  
Եւ վառ փայլում էր յաւերծ արեւը—  
Երկնի այդ բոցափայլ վարդը,  
Որ ծովում զուարք զմայլում էր իրանով:  
Եւ երկինք եւ ծով եւ նոյն խոկ սիրս  
Հնչում էն իրեւ արձագանգ—  
„Կոյսր սիրո՞ւմ է նրան, կոյսր սիրո՞ւմ է նրան“:



8.

## Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն



նշան որ հասկերն արտերում,  
Այնպէս էլ մժերը բանում են եւ ծփում  
Մարդու հոգու մէջ,  
Խոկ սիրոյ բներոյ մժերը նման են  
Արտերում տեղ-տեղ ժպանկմ ծաղկող  
Կարմիր եւ կապոյց ծաղիկներին:

Կարմիր եւ կապոյց ծաղիկներ...

Մրմբրող հնձաւորը շպոտում է ձեզ իրեւ անօգուտ,  
Գուեհիկ գիւղացին կովկուում է ձեզ,  
Նոյն խոկ անտուն, շշմոյիկ անցուրդը,  
Որ հիանում է եւ զմայլում ձեզնով,  
Շարժում է զլուխը,  
Եւ կոչում է ձեզ գեղեցիկ որոն:  
Բայց կոյս գեղջկունին  
Միրով հաղում է ձեզ,  
Պասկ է հիւսում,  
Եւ զարդարում է իւր խոպոպները,  
Եւ այդպէս պինուած տապում է պարելու  
Այնտեղ՝ ուր սրին եւ զուրակն են հնչում.  
Կամ դեպի անտառ, որտեղ սիրածի  
Չայնը հնչում է աւելի անյօյ,  
Բան սրին եւ զուրակ:



## ԹԱՇԽԹ-ՌԻԹ-ԻՒՆՆԵՐ:

- Երես 2. Սփինքս—(Sphinx) մի կենդանի, առհւծի մաքմանով և մարդու զլխով. եղիպտացիների մօտ ծագող արևի աստուածութիւնն էր, իսկ Յոյները տալիս են նրան խորհրդաւոր նշանակութիւն: Պատմում են, որ Թէքէի ծանապարհին, Յունաստանում, կար մի սփինքս, որ անցնողներին առեղծուածներ էր առաջարկում և ով որ չէր գուշակում, իսկոյն լափում էր նրան: Այդ սփինքսը Էղիպտ Թագաւորին հետևեալ առեղծուած է առաջարկում. „Հ՞նչ կենդանի է նա, որը առաւտեան—չորքուանի է, կէսօրին—երկուանի, իսկ երեկոյեան—եռուանի“.—Էղիպտ որոշում է այդ առեղծուածի մէջ մարդու մանկական, առնական և ծերութեան հասակի նշանը և այդպիսով խորտակում է սփինքսի հմալքը և ազատում է Թէքէն:
- ” 8. «Տեսայ մի երազ խիստ չարագուշակ»—ուղղուած է իր երկրորդ սիրոյ առարկալին, դահճի ղուստը ժողովախն. (տես կենսագրութիւն):
- ” 12. 3 և 4 երգերը գրուած են այն լուրի ազդեցութեան տակ, որ իր սիրած Ամալիան (իր հօրեղբօր աղջիկը) ամուսնում է ուրիշի հետ:
- ” 14. Մորտիմէր, դործող անձ է Շիլէրի պատմական յալտնի «Մարիա Ստիւարտ» ողբերգութեան մէջ:
- ” 24. Յորեր—ժամանակի դիցուհիներ, յունական դիցարանութեան մէջ:
- ” 35. «Երկու Գրենաղեր»-ը զրել է Հայնէն 16 տարեկան հասակում. կալսը՝ Նապոլէոնն է:


- Երես41. «Քնարական հնտէրմեցցօ» է անոնք, որովհետև առաջին անգամ տպուած է եղել «Ալմանգոր» և «Մատկլիթ» ողբերգութիւնների մէջ տեղը. (տես կենսագրութիւն):
- „ 47. Լոտոս—հնդկական սրբազան ձաղիկ. Գանգէս, սրբազան գետ Հնդկաստանում:
- „ 49. Լաօկօօն—Սպուլլոնի քուրմը, որին իր զաւակների հետ խեղաման են անում երկու ճրէշաւոր իժեր: Հնուց մնացել է Լաօկօօնի մարմարի քանդակործ հրաշալի զրուպան, որ պահուում է Վատիկանում:
- „ 50. Բագիլիկ—առասպելական օձ, որի լոկ հայեացը սպանում էր մարդկանց.
- „ 77. Լորէլալ—Հրենոսի ջրահարսերից մէկը, որի լէզէնդան շատերն են մշակել:
- „ 86. Աստլաս—Մաւրիտանիայի առասպելական թագաւորը, որը մերժում է հրեասիրութիւն տալ յունական հերոս Պէրսէսին և այդ պատճառով Պէրսէսը դարձնում է նրան սար և որովհետև այդ սարը շատ բարձր էր, ուստի ենթադրել են, որ Աստլասը դատապարտուած է եղել իր ուսերի վրայ կրելու երկինքը: Աստլասի հետ են յածախ համեմատում մի մարդու, որը անմիւ, ծանր հոգսեր ունի:
- „ 106 «Ուխտաւորութիւն դէպի Կէվլաար» ոտանաւորին Հայէն հետևեալ ծանօթութիւնն է կցել: «Այս ոտանաւորի նիւթն ամբողջովին ինձ չէ պատկանում, դա բղիսել է իմ հայրենի երկրիս յիշողութիւններից: Երբ ես զեռ փոքր երեխայ էի և սովորում էի Դիւստէլդորֆի կամուլիկ վանական դպրոցում, ես նստած էի մի ուրիշ երեխայի կողքին, որը ինձ շարունակ պատմում էր, թէ ինչպէս իր մայրը մի անգամ տարաւ նրան Կէվլաար, (շեշտը առաջին վանկի վրայ) թէ ինչպէս սպասել մի մոմի ոտք են նուէր բերում

իր համար և թէ ինչպէս ալղպիսով իր հիւանդ ոտքը լաւանում է: Այդ երեխային ես պատահեցի դարձեալ լիցէնի բարձր դասարանում, տնտուչ Շալմալէրի ժամանակ, փիլիսոփայութեան դասին և նա ինձ ծիծաղելով յիշեցրեց իր ոտքի բժշկութեան հրաշը, և լրջորէն աւելացրեց—«այժմ աէսք է մի մոմի սիրտ նուէր բերեմ Տիրամօրը: Վերջը ես իմացայ, որ նա այն ժամանակ սիրելիս է եղել զժքախտ սիրով և ալնուհնուկ նա բոլորովին կորաւ աչքից և յիշողութիւնից: 1819 Թուին, երբ ես ուսանում էի Բոնում և մի օր գնացել էի գրունելու Փողէսպերգ, Հռենոսի ափին, լսում եմ հեռուից Կէվլաարի ծանօթ երգի հնչիւններն, որոնցից ամենագեղեցիկը վերջանում է «Փառք քեզ, ով սուրբ Տիրամայր» կրկներգով. և երբ Թափօրը մօտեցաւ, ես նկատեցի ուխտաւորների մէջ իմ դասընկերիս, իր պառաւ մօր հետ. մայրն առաջնորդում էր որդուն, որը խիստ գունատ և հիւանդու տեսք ունէր:

- „ 109. Götterdämmerung, Le crépuscule des Dieux, Ըսերկու ծօցէաւ—ամենածիշտ թարգմանութիւնը կը լինի «Աստուածների աղջամուղջը»—սակայն «աղջամուղջ» խօսքը խիստ անխործ ոնչիւն ունի և այդ պատճառով, զոնէ ներկայ դէպում, ես գերադասեցի գործածել «վերջալոյս» խօսքը, մէկ կարելի էր ասել նաև «անկումն»:
- „ 135. Ինգ—նաւի վրայ սպասաւորող պատանի:
- „ 138. Թալատուա կամ թալասսա—յունական խօսք է և նշանակում է ծով: Կիւրոս կրտսերը, որ կիւր էր մղում իր եղբայր Արտաքսէրբսի դէմ, սպանում է կուռմ, Փոքր Ասիալում. իր զօրքը, որոնց մէջ կալին և 10.000 լոյներ, սկսում է նահանջել Քսէնոֆոնի առաջնորդութեամբ, որը և զրել է այդ պատճութիւնը «Նահանջ Բիւրոց» անունով: 16 ամիս նախութիւնը անհանջ Բիւրոց անունով:

հանջելուց լիտոյ, որը լոլսները կտրել էին թէ կա  
րող են երբեմից դարձեալ տեսնել իրանց հայրենիքը,  
Նրանք վերջապէս մի սարի գազամից նկատում են  
Աև ծովը և ուրախութեան արցունքներ Թափելով և  
իրար գրկելով բացականչում են «Թալատտա, Թա-  
լատտա»:


- ” 139. Բորէսա և Երիխոտն—բամու աստուածներ:
- ” 140. Ստիքս—գետ, որ հոսում է դժոխքի մօս:
- ” ” Քարոն—Նաւազար, որը Ստիքս գետով անց էր կաց-  
նում մեռածների ոգիներին:
- ” ” Էօլ—հողմի և մրրկի աստուած:
- ” 144. Կրոնիոն—Երկնքի և Երկրի աստուած. Նոյնը և  
Զես:
- ” ” Հերա—Զեսի ամուսինը:
- ” 145. Պալլաս-Ամէնաս—իմաստութեան աստուած, որը  
դուրս է եկել Զեսի գլխից զրահաւորուած:
- ” ” Վէնուս—գեղեցկութեան աստուածուհի—(յունարէն՝  
Աֆրոդիտէ). ծնուած ծովի փրփուրից:
- ” ” Արէս—պատերազմի աստուած:
- ” ” Հեփեստոս—արհեստների աստուած:



## Յ Ա Կ Կ

	Երես.
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ	I—XX
Նախերգանի	3
<b>Գլ. Ա. ՊԱՏԱՆԵԿԱՆԱՆ ՏԱՆՉԱՆՔՆԵՐ</b>	
I Անուշըներ	8
II Երգեր	23
III Ռոմանսներ	32
Գլ. Բ. ՔՆԱՐԱԿԱՆ ԻՆՏԷՐՄԵՅՅՈ	42
Գլ. Գ. ՎԵՐԱԴԱՐՁ	76
Ուխս դեպի Կելաար	106
Աստուածների Վերջալոյսը	108
Գլ. Դ. ՀԱՐՑ ՍԱՐԻ ՎՐԱՅ	114
Գլ. Ե. ՀԻՒՍԻՍԸ.ՅԻՆ ԾՈՎ.	126
Առաջին ցիկլ	138
Երկրորդ ցիկլ	151
<b>ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ</b>	






## Ա Զ Դ

Պատրաս են եւ հետզիետէ լոյս են տեսնելու հետեւել  
բարգմանութիւններ:

- 
1. Հայնէ, Հ.—„ՆՈՐ ԵՐԳԵՐ“ (Neue Gedichte).
  2. Հիւգօ, Վ.—„ԷՐՆԱՆԻ“ (Hernani) դր. 5 գործ. ոտանաւորով:
  3. „ ՌԻՒԲ-ԲԼՈԶ“ (Ruy Blas) ”
  4. Ռուսան, Եղ.—„ԱՐԾՈՒԻԿ“ (L'Aiglon) դր. 6 գ. ոտանաւորով:
  5. Ռասին, Ժ.—„ՓԵԴՐ“ (Phèdre) ողբերգ. 5 գ. ոտանաւորով:
  6. Պուշկին, Ա. Եւ Լերմոնտով, Մ.—„ԸՆՏԻՐ ՊՈՒՄՆԵՐ“  
(Избранные Пoэмы) 10 պահ, որոնց մէջ եւ „Գեղը“  
բարգ. Մ. Սագարեամի, նոր խմբագրութեամբ:

### Յ. Տէր-Գեորգեան:



ՀՀ Ազգային գրադարան



NL0167135

